

ԳԻՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ ԻՐԱԻ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ



Գիր եւ գրականութիւն կեանքին եթէ չառնչուին, կը դառնան գաղտնագիր, սպասելով Շամփոլիոն մը որ գայ եւ կարդայ զանոնք, ծանօթանայ, բանայ անոնց իմաստները: Գրականութեան հետ ընթերցողի յարաբերութիւնը եզիպտական արձանագրութիւններու ընթերցումը յաջողցուցած Շամփոլիոնի հրաշքի կրկնութիւնն է: Գրող եւ ընթերցող արկածախնդիրներ են, կը սպասարկեն եւ կ'իրականացնեն ստեղծագործութիւնը:

Ժամանակի գիծին վրայ, բանաստեղծներ եւ գրողներ, անյայտներ եւ յայտնի անուաններ շղթայ կը կազմեն: Նորերը կ'աւելցնեն իրենց օղակները, իրենց չափով եւ պնդութեամբ: Հայ գրականութեան պարագային, նորերու առջեւ դռները լայն պէտք է բանալ, նոյնիսկ երբ անոնք դեռ կը խարխափեն: Սփիւռքի պարագային, այլեւս աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել Սփիւռքներու, նորերու երեւումը, ներգրաւումը եւ որակաւոր զարգացումը էական են այդ ազգային խորքով եւ բազմադարեան ինքնութեամբ տեւելու: Ընթերցող մը, Ծոցի երկիրներէն, նամակով մը կ'անդրադառնայ այս խնդրին, առաջարկելով մրցոյթներ կազմակերպել, մրցանակներ տալ, գրականութիւնը տարածել, իր խօսքը մասնաւորելով ԲԱԳԻՆի համար, բայց հարկ է ընդհանրացնել: Ընթերցողներ յաճախ գրիչը ձեռք չեն առներ, կարծիք չեն յայտներ, հակառակ անոր որ այդ յիշեցումը կ'ըլլայ, բանաւոր եւ գրաւոր:

ԲԱԳԻՆ որդեգրած է նորերու առջեւ լայնօրէն բաց ըլլալու ընթացք, առանց ակնկալելու գլուխ-գործոցներ: Նորերը նախ յանձն պիտի առնեն գրել, յամառութեամբ, իսկ ընթերցողները պիտի յիշեցնեն որ ներկայ են, կը լսեն, կը գնահատեն, կը դատեն, գիտակցելով որ Սփիւռքներու տղաքը Վարուժանի, Թէքէեանի, Տէրեանի, Սեւակներու կրկնօրինակները չեն: Անցեալը կարելոր է, բայց անցելապաշտութիւնը մահացու ախտ է, ստեղծագործութիւնը եւ նորը կը

փոխարինել բրածոներով: Գրականութեան մէջ *clonage* ընել կը նշանակէ... **հարա-քիռի:** Երիտասարդները այսպէս պէտք է ըմբռնեն իրենց դերը, երէցները՝ գրող եւ ընթերցող՝ իրենց հանդուրժողական պարտականութիւնը:

Ինչպէս ընդհանրապէս հաղորդակցական միջոցները, գրական հրատարակութիւնը եւս պէտք է հասնի իւրաքանչիւրին իր յարկին տակ: Այսօր, նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ, բայց մանաւանդ Սփիւռքներու, շատ հեռու ենք ստեղծագործութեան կենսական ենթահող ըլլալէ: Տպաքանակները եւ գիրքերու սպառումը - խօսքը կը վերաբերի վաճառուածներու եւ ոչ նուէր բաժնուածներու - այդ մասին կը վկայեն: Այսինքն մոր յեղափոխութիւն մը անհրաժեշտ է գրասէր հասարակութեան մը ծնունդին համար: Յառաջդէմ երկիրներու մէջ ընկերութեան վերնախաւը կ'առաջնորդէ նման յեղափոխութիւնը, իսկ մեր պարագային այդ վերնախաւը կը խափանէ, քանի որ կը խրի անհեռանկար անմիջականի մէջ:

Ընթերցողներու կողքին կայ նաեւ հայու մոր տիպարը որ հայերէն չի կարդար, երբեմն մոյնիսկ հայերէն գիտնալով: Կը յայտարարեն որ իրենք մշակոյթով ֆրանսացի են, անգլիացի, սպանացի, ռուս կամ արաբ, եւ դեռ ուրիշ բաներ: Յաճախ կը լսենք այն միտքը որ, եթէ կ'ուզենք որ իրենք ալ կարդան, օրինակ ԲԱԳԻՆը, ան պէտք է ունենայ ֆրանսերէն, անգլերէն, արաբերէն, ռուսերէն, ինչու ոչ պարսկերէն, չինարէն եւ թրքերէն էջեր: Ինչպէ՞ս, ո՞վ այդ կրնայ ընել, ի՞նչ միջոցներով: Ի վերջոյ, գրականութիւնը ուսողական կամ բնագիտական տարազներու եւ թիւերու հանդէս չէ, ան կը բուսնի ազգային լեզուի հողի վրայ, որպէսզի դիմագիծ ունենայ: Սիրելի անուններ կան որոնք հայ գրողներ են, աւելի ճիշդ՝ հայածնունդ, երբ կը գրեն բաբելական այս կամ այն լեզուով, իրենց գրականութիւնը այդ լեզուի տէր ժողովուրդին սեփականութիւնը կը դառնայ, երբ կը յաջողին՝ պարզապէս մեր ինքնասիրութիւնը կը շոյեն:

Գրասէր հայ հասարակութիւն ստեղծելու յեղափոխութիւն պէտք է՝ հայ կեանքի եւ իւրաքանչիւր հայու հոգիին մէջ: Խօսիլ, ինչպէս հայրենադարձութեան, այդպէս ալ դէպի ազգային լեզու վերադարձի մասին: Այս ալ վերականգնում է: Լայնածիր եւ ոչ անկարելի:

ԲԱԳԻՆ

ԳՐԻՉ ՄԸ ԿԱՆԱՉ

Քանի անգամ տոհմածառդ յօտեցին,
Այն մեծատուն ու բազմանդամ,
Եղբայրներդ՝
Ոմն եղուարդ,
Որ հաւերուն ջուրը կու տար,
Որ հաւերուն կերը կ'ուտէր,
Ղազարենց բակին մէջ,
Վերջին անգամ:
Գարեգինը՝ միակ եղբայրդ
Տոհմածառի վերջին մորճը,
Դեռ այն ատեն,
Ակռայ կը փոխէր Զալէպ, մօրդ հետ,
Քիւրտիստանէն վերադարձիդ,
Վերագտած Փայլածուի՝ քրոջդ հետ,
Առաւօտ մը, ու ձեռք ձեռքի սրսփուն,
Փակ աչքերով աղօթքի
Բաց աչքերու ազատութեան,
Պաշտամունքէն խուսափուկ,
Ձեր ինքնութիւնը փնտռեցիք վերստին
Տիգրանակերտ-Տէր Զօր-Զալէպ:
Աքսորական Մեծն Տիգրան.
Զայրս ես դուն,
Եւ հայր մաեւ ընտանիքիդ վերագտած
Եղար հիւսն, եղար ջուլիակ,
Ձերթ խաչակիր երրորդ անգամ:

Ունեցար կայք մը ապերջանիկ,
Չորս տարիներու խաշնարածութիւն,
Ցամբած ստամոքսով եւ ուռած
Փորով մանկական, ոչխարներուն վերապահուած
Զանապագօրեայ կերը կերար,
Գարի կամ վարսակ
Տրամադրուած արեւներէն օրհնաբեր:
Զայր,
Եղար վսեմ ու արի,
Նոր ինքնութեան որոնումի ծիրին վրայ,
Կրկնակիօրէն ու վերջնական կորսնցուցիւ
Անունը Նահապետին՝ իբրեւ վրիպակ տմարդութեան,
Խաչուած որդի Նազար-ի ընդ Ղազար-ի ջնջուած...
Ղազար կամ Նազար
Քսակ մը ոսկի գետեղելով մէջքիդ
Ըսաւ փախիր,
Տէր եղիր մօրդ ու մնացեալին.



«Կանաչ կիրք»
Վահան Ռումելեան



Ձիս թուրքերուն թող, իբրեւ կախմանկէտ...
Տէրը կորսուա՞ծ էր այն ժամանակ...

Ըսիր կայծակնամաքուր
Ա՛լ կը բաւէ խճանկար պատմութիւն
Կեանքիս քարտէսը գծէ գիրով,-
Որ կեանքին քարտէսն է դժխեն,-
Ես Տոհմածա՞ռս կ'ուզեմ.
Եւ այն քիչով որ կը մնայ
Ջաւակներէս թռներուս,
Ջորս չճանչնամ ես գուցէ,
Ջորս կը ճանչնաս դուն գուցէ,
Ի Լիբանան կամ ... այլուր:
Երեք տասնամեակ անցած է արդէն
Կամ երեք թուր
Սուրբ Յակոբայ այն գիշերէն
Երբ՝
Պուրճ Զամուտի մէջ խմելու ջուր չկար,
Պարապութեան մէջ կրակոց կար.
Միակ որդիդ՝ կար ու չկար.
Աւանդեցիր հոգիդ արագ.
Անոր տուն դարձին ակնկոր, անգիտակ
Ակումբէն՝ զինեալ պաշտպան բոլորին,
Որ չհասաւ քու վերջին շունչին շշմջոցին:
Այդպէս ալ դուն չիմացար Ղազար հորդ թուականը վերջին:

Ջլացուած՝ հոր մը համար աղօթելու իրաւունքէն,
Ջրկուա՞ծ իբր հայր միակ զաւկին վերջին մտերմութենէն,
Որ մնաց մինակ,
Քեզ գրկելով ափերուս մէջ
Իբրեւ նշխար, իբրեւ կտակ:
Առաւօտեան՝
Քու ծեռքով լարած զարթուցիչը,
Մահազանգիդ հետ անդադրում,
Կը յիշեցնէր հանապազօրեայ ժամը գործի:
Հայրս էիր դուն,
Հայրս ես հիմա՛ ալ,
Այսօր ծննդեան ամեակդ է հարիւր:
Քու գերեզմանին եւ այս գիշերին,
Մոմ ու խունկ չունիմ
Որ երթամ այցի,
Այն պարզ խաչքարի
Դուստր Խաչիկի եւ Սարաճեանի:
... Եւ փոխան սեւի, գրիչ մը կանաչ
Եւ խոնաւ լուցկի:

ԷԼՕ ԶԵՐԿԵԼԵԱՆ

Օգոստոս, 2009

ՆԵՐՇՆՉՈՒՄ

Ամենին յոգնած պահերուս
նոր վերադարձած աշխատանքին
երբ եփեր են ուշացած ճաշը
եւ լուացեր անհմաստօրէն աւելցող աղտոտ պնակները
երբ հաւաքեր են թափած փշրանքները
քնոտ թոթովանքներուն հետ զաւակներուս
եւ արթնցող եռանդին հետ ամուսնոյս

այն պահուն
երբ յոգնութենէն ճմռթկած
եւ ա՛լ անկարող ժպիտ մը
գոնէ հետաքրքրութիւն մը արդուկելու փակցնելու դէմքիս
ուր մտմտութիւն ու հոգերը ջնջեր են հմայքս կանացի

այդ պահուն կու գաս միշտ
տղոնի անճարակ շուտիկութեամբ
կը կենաս հեռու եւ
եւ կը կանչես
համոզելով սիրահարի հաւատքով

ծանր են թւերս

բայց կու գամ քեզի տառապելով
որովհետեւ
այնտեղ է այդ կիրքին մէջ
հմայքս մարդկային

ԴՈՒՐՍ

Դուրս ելայ տունէս
եւ ալ երբեք երբեք
չվերադարձայ

եւ մինակ էի

երկինքը գրկեց զիս
երկիրը օրօրեց
ծովը արցունքս եղաւ
եւ անտառները լռութիւններս
աշխարհը տունս ըրի
քեզ մէջս ունենալու համար

* * *

Տունէս դուրս ելայ
դուրսը ոչ անտառ կար
ոչ ծով

անապատը միայն
ու անոր մէջէն սողացող
կասկածի գետը

որուն վրայէն օր մը
հեռացար
ու հիմա կը թիավարես տակաւին

դուրս ելեր էի
քեզ փնտռելու համար
մինչ ներսն էիր դուն
որպէս լռութիւն

* * *

Դուրս ելայ սրտեղ
Եւ չհաւատացի
Տունս այնտեղ էր

Արիւնեցայ
Հաւատքի քարերը կրելով
Կարծրացայ
Պատերս ողորկ շաղախելով
Հարստացայ յոգնութեամբ
Իմաստնացայ առանձնութեամբ

Տունս տաք էր բոյնի քաղցրութեամբ
Ես հոն չէի
Դուրսը
Սիրտդ կը փնտռէի

*

* *

Երբ թափեցան անձրեւները
ափսոսանքի
հասկցայ որ սկսեր էր
մոնստունը* կեանքիս

Մերս չունէի
դուրսը արդէն տուն դարձեր էր

կը մնար որ
տուն գայիր

ՄԱՐՈՒՇ

16 Յունուար 2009
Հալէպ

* Մոնստուն՝ ամառնային անձրեւոտ եղանակ

ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒ ԱՆՈՒՆՍ

Յոգնեցի...
Այլեւս չեմ կարող
Ամէն գիշեր մեռնել
Եւ ամէն առաւօտ
Վերածնունդել...
Ես յանձնում եմ
Մարմինս
Խաւարի կախարդիչ
Հիպնոսին
Ու դառնում
Էգ կատու,
Եւ սկսում է
Փողոցներով
Ու նրբանցքներով
Դէպի քեզ ձգուող
Իմ չարչարանաց Կիրակին...
Ես այստեղ եմ՝
Քո ձեղնայարկում՝
Փռչու, աղբի, փայտերի,
Ոտնաձայներիդ
Հարեւանութեամբ,
Որ լուացքի պարանի պէս
Կապել եմ
Թափուր օրերի
Մերկ ձեռքերին...
Եւ ոտնաձայներիդ
Ծաղրածուի նման
Խաղում եմ ինձ հետ՝
Մէկ՝ վեր, մէկ՝ վար,-
Այս ցաւագար ցաւը
Սառոյցի պէս
Մեխուել է իմ մռլտոցում...
Քո ձեղնայարկում
Փռչին, աղբը, փայտը
Ինձ չեն սիրում,
Ես իջնում եմ ցած
Ու պատառոտուած լացով
ճանկում եմ դուռը,

Խնդրում քեզ
Կատուային սիրով.
- Վերադարձրու ինձ իմ անունը...
- Փըշտ,- ասում ես դու՝
Բացելով դուռը,
Ու ես նուիրում եմ
Քո ոտքերին,
Այստեղ, քո դրան շեմին...

ԿԱՐՕՏ


Հեռաւորութիւնը
Խօսում է
Քո մասին
Ուշաթափուած
Ձեան փաթիլներով,
Եւ անշուք
Տունդ
Եղեմական խնձորի պէս
Կանչում է ինձ...
Ականջիս կողքին
Քարացել է
Ձայնդ...
Ես կարդում եմ
Գիշերուայ հանդարտութիւնը,
Որ թաքցրել է քեզ...
Օրը շուտով կը դառնայ
Շարժանկարը լուսաբացի,
Իսկ շարունակութիւնը
Նոյնն է,-
Ես բանտարկեալն եմ քո...

ԼԻԼԻԹ

ՅԱՐԱԼԵՋՆԵՐՈՒ ՀԱԲԱՏԱՐՄՈՒԹԵԱՄԲ

Իրիկուն էր, երբ Շամիրամ
 Սրտակեղեք դառնութեամբ մը կը խոկար
 Դիակին քով հայոց Արա Արքային,
 Որ կը հանգչեր դալկադեմ՝
 Տանիքին վրայ ասորական պալատին:
 Մայրամտող արեգակի
 Շողերուն տակ շառագոյն
 Աստուածները Յարալէզ՝
 Կը ջանային խոր տքնութեամբ կոչել կեանքի
 Սրախողխող տանջանքներով մահացած՝
 Դիակն անբախտ Արային:
 Ճիշդ այդ պահուն,
 Յանկայարոյց ու վաւաշոտ թագուհին
 Իր ցաւին մէջ հոգետանջ,
 Զգաց կարծես թէ հայ արքան
 Իր շիրմային մթնոլորտէն դուրս գալով՝
 Կենդանացաւ յեղակարծ
 Ու նայուածքով վշտախոհ՝
 Պահ մը իրեն այսպէս մեղմիւ խօսեցաւ.
 «Սպաննեցին զիս թէւ
 Քու զինուորներդ ականայ,
 Որ խելայեղ հովի շուրթին
 Դառնամ զրոյց եղերական.
 Եւ դարձ դար դառնամ շրջուն առասպել,
 Բայց քեզ համար, ով Շամիրամ,
 Աշխարհ եկայ վերստին
 Իբրեւ Սիրոյ Յարալէզ,
 Որ ողորփիչ իմ բառերով
 Եւ զօրութեամբն աստուածային
 Հովեն յուշիկ տանջանքը քու անբուժելի
 Եւ քու սիրտը տարփակէզ...

Դարձայ թէւ զոհն ականայ
 Վրիժառու մոլուցքիդ,
 Բայց քեզ համար դարձայ անքուն Յարալէզ,
 Որ տիւ-գիշեր հսկեն անթարթ
 Այրիացած հոգւոյդ վերել.
 Քեզ նոր յոյսով կենսաւորող դառնամ տարփանք,



«Գիշերային լոյս»
 Յովհաննէս Յարութիւնեան

Քեզ նոր լոյսով խանդավառող դառնամ տեսիլք.
Եւ քու սէրը վիրաւոր
Սփոփարար ժպիտներով սրտապնդող՝
Դառնամ սիրոյ ցօղակայլակ արտասուք
Եւ փարատեն թախծոտ յուշերն այն յաւետ,
Որ սնուցին քեզ ցաւերով ախտաժէտ...

Ես եմ Արան, հայոց արքան նահատակ,
Դժբախտ կեանքիդ մտապատկերն անյեղլի.
Եւ վշտակից քու Յարալէզն անբաժան.
Տե՛ս, կը դառնամ դարձեալ քեզի՝
Իմ գոյութեամբ ոգեղէն
Եւ յայտնութեամբ տեսլային,
Առանց երբեք սպասելու
Աղերսահունչ կոչունքիդ
Եւ քու կանչիդ հրաւիրակ.
Որ յուսադրեն սաղարթաշունչ իմ երգով
Եւ իմ սրտով խաղաղատենչ՝
Խոկումները քու ալեկոծ
Եւ քու զղջումն անամոք...

Ես քեզ համար դարձեալ կեանքի կոչուեցայ,
Որ շնորհեն կազդոյրն անանց՝
Բարձունքներու եթերաբոյր,
Ծմակներու բուրումնաւետ
Եւ տարփասուն յասմիկներու համբոյրին,
Որ սփոփեն անմխիթար սիրահարի
Քու վիշտն անքուն՝
Յարալէզի անյիշաչար իմ բարութեամբ.
Եւ զերծ պահեն փափուկ սիրտը քու կանացի՝
Քեզ փոթորկող մշտամորմոք խղճախայթէն...

Ես կը ծնիմ հառաչանքէդ աղեկէզ,
Գարնանային ցայգերգի պէս դաշնալուր.
Եւ կը կառչիմ քու տենչանքիդ տխրամած,
Որ իղծերուս այգաբացին լուսացօղ՝
Ամենեւին չհասաւ...

Ես կը ծնիմ քու ողբերէդ հողմակոծ,
Ու կը յանձնեն քու յուշերուդ ընկալչութեան՝
Նոճեսօսափ իմ հեւքերով յօրինուած
Քու կորուսեալ երազանքիդ մեղեդին,
Չոր ոչ մէկ օր,

Ոչ մէկ երազ երանասքող
Չէ ընծեռած քեզ երբեք...
Կը յայտնուիմ դարձեալ քեզի,
Քու ցաւատանջ մենութիւնը փարատող՝
Սօսեզուարճ երգի պէս.
Ու կը նստիմ անմխիթար սրտիդ մօտ՝
Յարալէզի հաւատաւոր մտերմութեամբ.
Կը փայփայեմ էութիւնը քու փափկանոյշ
Եւ կը սփոփեմ քու տառապանքն անկիզելի,
Որ շիրմային անեզրութեան յանդիման,
Ով Շամիրամ,
Իմ տարաբախտ արքայուհիս,
Ա՛լ դուն երբեք չմսիս...»:

Անցան պահեր,
Երբ արթնցաւ Շամիրամ
Պատրանայեղջ իր երազէն գիշերական,
Անդրադարձաւ խոր յուզումով մը յանկարծ,
Թէ կը հսկէր անծկութեամբ մը ցաւագին
Դիակին վրայ հայոց չքնաղ արքային,
Որ հակառակ կենդանարար ջանքերուն
Աստուածներուն Յարալէզ,
Դալկաժպիտ նայուածքով մը անքթիթ՝
Դեռ կը յառէր անէութեան խորհուրդին,
Անրջազօծ շամանդաղով պատմութեան
Ասորական երկնի տակ...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*Օգոստոս, 2007
Պէյրութ*

ԳՐԳԱՆՔԸ ՊԱՏՐԱՆՔԻ



«Աշուն»
Թորոս Տեր Յակոբեան

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Աշնան տերեւաթափը մեր մօտ
Կու գայ միշտ ձմրան,
Երբ սրտերը կծկուած պատմութեանի են նման,
Երբ թռչունները գաղթած մեր երկնականարէն

Կը տենչան մտերմութիւնը երդիքներուն տաք.
Աշնան տերեւաթափը մեր մօտ
Ալիքներու՝ խարակին բախուող ահեղ շառաչին նման,
Տխուր հոգեվիճակներ կը բերէ
Ու թախծոտ ամայութիւն մը կը սփռէ չորսդին.

Ոգի մը ջերմ, առինքնող նազանքով,
Կը յաջողի պատռել պատրանքներու քօղը թանձր,
Ու նորափթիթ յոյզերու ողիսականի մը
Արարները կը գրէ լուսնի լոյսի տակ.

Արար 1- փնտռտուք

Լռութեան մէջ գիշերի փնտռեցի ձայնդ կարօտաբաղձ
Բայց չգտայ քեզ...
Մշուշներուն մէջ կեանքի հեւքին ու ձանձրոյթին՝
Որոնեցի յոյս արարող դէմքդ պայծառ ու չգտայ...
Մշուշը եւ լռութիւնը գրկեցին գիրար կայծակի նման,
ու տեսայ յանկարծ
Լոյսէ ուրուական մը՝ կ'անհետանայ լո՛ւռ...

Մնացի անձկութեանս մէջ միմակ
Ու վշտաբեկ մտորումներուս դէմ-յանդիման ...

Արար 2- հմայքին ընդառաջ

Բզքտուած սրտով կու գամ հմայքիդ ընդառաջ,
Ո՛վ իմ ազատարար միանձնուհին պատրանքներուս.
Կու գամ գիշերուան խոնաւ աղջամուղջին
Պարզած ամբողջական մերկութիւնը իմ անձին.

Քե՛զ, միայն քե՛զ կ'ըղծայ իմ ճենճերուած հոգին՝
Այս հրակէզ, այս խառնակ մղձաւանջի օրերուն որ մերն են,
Քե՛զ՝, որու կաթնահեշտ ու շուշան մարմնի քաղցրաբոյր
Քրտինքներուն վրայ կը սողան նայուածքներս շլմորած
ու ափակէզ.

Ես հիմա խոցուած արուն եմ այդ դաժան սեւեռումին՝
Որու նետերը առաւօտեան սառն ցօղին նման կը հանգչին
Տերեւներուն վրայ, զգլխանքի մը նման որ կը դիւթէ չորսդին,
Կը հրաւիրէ իր վրայ լուսածագի շողերը տարտամ ու անմեկին.

Հոն, միայն քու ներքեւ հոգիս պիտի գտնէ իր վերջալոյսի
Անդորրը խորին, երկար թափառումներէ ետք ձեռնունայն,
Ու լլկող, անքուն մաքառումներէ ետք, պիտի գայ քեզի,
Իր հմայքին բեռը թօթափելու քու պատուանդանին հոլանի:

Արար 3- պարտութիւն

Այսօր զիս զգետնեցիր յաւիտենապէս...
Ձիս ալ առիւր հմայքիդ աքցանին մէջ մագնիսական,
Որու փորձութեան ժամանակ
Կը դիմադրէի վիատ կռիւով մը անհաւասար.

Դո՛ւն, հրէշին ու հրաշքին միջեւ չմեկնուող
Ոգին ջերմ ու վառ, ինչպէս շիկացած երկաթը
Կը խրուի մարմնին մէջ ճգգիւնով մը խենթ,
Ստար այդպէս իմ խոցուած սրտէն
Իմ մարտնչող հոգիէն ներս,
Դաժան մարտէ մը ետք անհաւասար...

Ձիս զգետնեցի՛ր վերջապէս...

Հրճուանք կը թուէր պատած ըլլալ դէմքիդ ծիծաղկոտ,
Երբ աչքերս թեքուած վար
Պշրոտ թելերուդ յաճախանքի գերին
Պեղող աչքերուդ դիմաց պատիժի սպասող
Հլու աշակերտի նման կանգնած կը սպասէի լո՛ւռ ...

Արիւնս կ'եռա՛ր երակներուս մէջ,
Համակերպ գառնուկի մը վերածուած ըլլալու զգացումը
Կը սարսափեցնէր զիս այնքան,
Յուզուած էի չափազանց ու տխուր.
Վերջին ճիգ մը արդէն եւ ես փախայ դուրս
Ուր ոտքերս զիս քեզմէ պիտի հեռացնէին ...

Արար 4- տխուր հոգեվիճակ

Ինչո՞ւ մեր ուղիները կը հանդիպին յաճախ իրարու,
Մեղմ ժպիտի չգաղտնազերծուած քօղով, կամ
Համր նայուածքի մը քարացած պահերով.

Ինչո՞ւ անվաւեր դժկամ զգացում մը կ'ուրուագծուի միշտ
Ձերմ ու խնդամուկիկ այդ դէմքիդ, ամէն անգամ
Որ քայլերն մեր ականայ կը խաչաձեւեն զիրար.

Ինչո՞ւ թանձր տխրություն մը կը թափանցէ ներս
Երբ աչքերը մեր հանդիպին իրարու ամբոխին մէջ,
Ու գոհունակ խայծ մը կը փարատէ միշտ զայն.

Մեղաւո՞ր են միթէ ճամբաները, իմ քայլերը հաստատ,
Մեղաւո՞ր են միթէ իմ աչքե՛րը երբ քեզ կ'որոնեն
Ամէն քայլափոխի կամ առիթի, դարանակալ...

Ինչո՞ւ խոստովանութիւնը յղի է աննախատեսելի
հետեւանքներով միշտ...

Արար 5- խոստովանութիւն

Կարելի չէ՛ չսիրել քեզ կին,
Երբ Կղեպատրայի հրապոյրով խրոխտ
Կը կանգնիս հոգւոյս բագիւնին վրայ,
Ձոհաբերութիւն պահանջողի
Հոլանքովդ ամբողջական...

Կարելի չէ՛ չմերձեանալ քեզի կին,
Թէկուզ իմ աչքերով ծարաւի
Ու նայուածքներովդ տեղատուող,
Երբ կանգնած խարազանող նայուածքով
Կարող ես հզօր կամքերն անգամ խոնարհեցնել քու դիմաց...

Կարելի չէ՛ անտեսել քեզ կին,
Երբ գեղեցկութիւնն խօլական, ձեզի տրուած
Ձէնք մըն է բոլոր պատնէշները քանդող,
Երբ կամքն անգամ լարուած պարսատիկի նման
Կրնայ հարուածել լոկ ինքզինք միայն...

Բայց կարելի չէ մերձեանալ քեզի... կի՛ն,
Կարելի չէ չսիրել քեզ...
Կարելի չէ մոռնալ քեզ....

Ահա բարդոյթը... անլուծելի...

Վերջին արար - հաճելի երա՛զ

Ես գիտեմ որ լալկան ուռենիի շունչին տակ խոնաւ
Մեր հոգիները պիտի մեր սէ՛րը ընդ երկա՛ր շշնջան...



Լօյա Գունտաֆնեան 12 տարի մաս կազմած է Հայ Բարեգործական Ընդհ. Միության «Արարատ» գրական եռամս-
նային եւ աշխատակցած՝ *Armenian Reporter*-ին, *AIM* պարբերաբերքին եւ *Armenian Weekly*-ին: Վերջին քսան տարիներուն Գունտաֆնեան իր տան մէջ կազմակերպած է «Մեռած հայ բանաս-
տեղծներու ընկերութիւն» անուն տակ գրական հանդիպումներ, իսկ 2006-էն ի վեր համացանցի վրայ հայկական բա-
նաստեղծութեան մուիրուած *պլոկ* հաս-
տատած է, զոր կը վարէ մինչեւ այսօր:

Լօյայի բանաստեղծութիւնները կա-
րելի է կարդալ «Կոռնկ» (*Groong*) կայ-
քէջի վրայ եւ *Armenian Weekly*-ի մէջ:
Մօտիկ ապագային լոյս պիտի տեսնէ
անոր բանաստեղծական երախայրիքը՝
երկրագոյ: Լօյա Գունտաֆնեան կ'ապրի
եւ կը ստեղծագործէ նիւ Եորքի մէջ.
Armenia-poetry.blogspot.com,
ArmenianPoetryProject@gmail.com:

ԶՕՆ՝ ԼՈՅՍԻ ՈՒ ԱՐԵՒԻ

Խուսափիմ պիտի սերէ,
Ցաւէ ու քեզմէ.
Երթամ հեռու ծառաստան՝
Դիտեմ սկիւռներն իրենց պարին մէջ,
Ծաղիկներն իրենց բոյրին մէջ,
Ամպերն ու արեւը իրենց ճամբուն վրայ.
Հակառակ են կարծես միշտ:

12 Մայիս, 1992

ԿԵԱՆՔ

Այս մէկը գործարանի մը մէջ մեռաւ 25 տարեկանին,
Ուրիշ մը զինուոր, Երրորդ մը կէթոյի մը մէջ նահատակ:
Կին մը շաբաթը եօթը օր կը սպասարկէ,

Քոյրը՝ ուրիշին զաւակները կը մեծցնէ:
Կեանքի հերոսներ՝
Ե՞րբ ձեր կարգին պիտ հանգչիք,
Ո՞վ ձեր զաւակները կը մեծցնէ.
Ո՞վ ո՞վ ձեր մահուան կու լայ:

2006

Dada Poem

Տուն
Քուն

Մութ
Շո՛ւտ

Ան /կո /ղին
«Անվերնագիր»

Կը խօսիս ձեռքերով
Բայց աչքերդ ուրիշ բաներ կ'ըսեն.

Շրթներդ կը ժպտին
Բայց աչքերդ հակառակը կը մատնեն:

16 Մայիս, 2006

ԱՆՁՐԵԻ

Կը քալեմ ծովափին
Ու դուն բացակայ ես.
Տուն մնացիր,
Ձիս թողնելով բոպիկ
Աւագին հետ խաղալու:

Անձրեւին կաթիլները
Ուսերս ու դէմքս
Կը թմբկահարեն:

Երէկ երագիս մէջ
Արեւածագին երկա՛ր
Պտոյտէ մը կը վերադառնայի,
Անտառին մէջէն անցնելով:

Մշուշն ու ցօղը իրարու հետ կը խաղային:
Երբ պարտեզի դռնէն մտայ
Ժպիտոյ ճառագայթեց սրտիս
Ու զիս ընդունեցար
Գաւաթ մը սուրճը ձեռքիդ:

12 Ապրիլ, 2007

ԵՐԿՈՒ ԱՆԻՆԵՐ

Արա Նիւճիւզեանին յիշատակին

Սեղանիս վրայ են
Անի քաղաքէն կաւէ կտորներ:

Դարերէ ի վեր կը սպասէին
Որ հայ ձեռքեր հաւաքեն ու
Բերեն այս ափերուն սա իրերը:

Առաջին անգամ բռնեցի զանոնք ու ահա՛
Յեռունէն լուրե՛ր.

Ուրիշ Անի մը եւս կը կանգնի որբ ու քաջ:

5 Մայիս, 2007

MANIFESTO

Հայրս կ'ուզէր մեծ երաժիշտ ըլլայի
Եղայ երաժշտութիւնը սիրող.

Մօրաքոյրս պալերին է
Ու չեղայ պարող.
Բայց կը սիրեմ սէրը սիրոյն համար:

Եղբայրս լեզուաբան է
Ու ես լեզուները կը սիրեմ.

Մայրս գիտուն է
Ես խելացի կը փորձեմ ըլլալ.

Բայց կը սիրեմ արուեստը շունչի նման:

15 Մայիս, 2007

Ի ՅԻՇԱՏԱԿ ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ

«Օդը փոփոխամիտ է»:
Քեզի նման, հոգի՛ս:
Զիս ուզեցիր քշել մինչեւ դրախտ,
Բայց կէս ճամբան կեցար,
Թողնելով զիս ու Նանան
Մութ անապատին մէջ:

Ահա եօթը տարիներ անցա՛ծ,
Այդ անապատը պարտէզի վերածեցի:
Կանաչ խոտեր ծածկած են հետքերդ.
Ծաղիկներ՝ պղտորած դիմագիծդ,
Վնասած յիշատակներս ու Նանայի մը փափաքը:

18 Յունիս, 2007

ՏԱՊԱՆԱՔԱՐ

Մէկ ամիս է չե՛մ գրած.
Մէկ ամիս է չե՛մ սիրա՛ծ:
Երկու ամիս է չե՛մ խմած.
Երկու ամիս է չե՛մ ք....՛ծ:
Երեք ամիս է չե՛մ ուզած.
Երեք ամիս է չե՛մ նեղուա՛ծ:

3 Սեպտեմբեր, 2007

*

* *

Ահա հասանք ամառուան սկիզբը
Եւ դուն կ'անհետանաս
Ինձի թողնելով յիշատակներ-
բեկորներ միայն...

ա՛լ չեմ սիրեր ամառները
դուն հոս չես
դուն հոս չես:

17 Յունիս, 2008



«Համբարձր»
Միսաք Թերզեան

VICTORY!!!

Այսօր առաջին անգամ ըլլալով night club երթալու բախտը ունեցայ, քորեացի գործակիցիս՝ Սանկին հրաւերով:

Երեք աղջիկ ենք, ես, Սանկն ու իր հայրենակից ընկերուհին՝ ճէյը, զոր չեն ճանչնար. երկուքը արդէն մայրացած, ամուսնալուծուած եւ երկրորդ աղջկութեան հաճոյքին տրուած: Հագիւ Սանկին ինքնաշարժը բարձրացած՝ արդէն իսկ պարզ կը դառնայ, որ «տղայ կարգադրելու» ենք ելած...

Կը մտնենք ինծի համար անծանօթ Takapuna-ի night club-ներէն մէկը ու անմիջապէս՝ երեք գաւաթ կարմիր գինի: Սանկ (որուն տարիքը երբ առաջին անգամ լսեցի՝ կարծեցի որ սիրտս պիտի կենայ... 41 եմ ըսաւ, մինչդեռ ես իրեն տուած էի միայն... 18) ինքնաշարժին մէջ իսկ պարզած էր արդէն, որ իր boy friend-ը մեր աշխատանոցին վերակացուներէն մէկը՝ Էրընն է եղեր: 29 տարեկան քիւլի* մը, եւ թէ կապը արդէն խզուելու վրայ է եղեր, յաճախ կռիւներ կ'ունենան եղեր...

Գիտէի որ Սանկ boy friend մը ունի, բայց Էրընին ըլլալէն լուր չունէի: Night club-ին մէջ Սանկը հիմա կ'պած ինծի՝ Էրընին մասին կը խօսի: «Գիշերները քովը կը մնամ, աշխատած ատենս կ'ուզեմ office մտնել ու համբուրել գինք... շատ կարօտցեր եմ արդէն... I like him, no, I think I love him»... այս բոլորն ալ քորեական անգլերէնով մը, ես իրենց քով՝ անգլիագէտ մը...

Քիչ ետք, ընկերուհիին՝ Ճէյին կը դառնայ եւ կը սկսին իրենց ազգային լեզուով բարբառիլ՝ *քքան-ուան-ճին-չան* տարօրինակ ծայներ հանելով, ու... անսամծ խնդուք մըն է, որ ծայր կու տայ: Յետոյ զիս նոր նշմարածի պէս երկուքով իմ կողմս կը նային եւ քահ-քահ մը կը ձգեն: Այսպէս՝ գրեթէ մէկ ժամ: Ես քիչ մը աւելի կծկուած իմ պատեանիս մէջ, կու՜մ-կու՜մ գինի կը խմեմ ու աչքիս տակէն կը նկատեմ, որ Ճէյ արդէն երկրորդը բերել տուած է: Մեծ բերան մը, որ ագահօրէն կուլ կու տայ խմիչքը: Տակաւին գաւաթս կէս չըրած, Ճէյ ուրիշ night club մը երթալու որոշում կու տայ՝ անկըշտօրէն ծծելէ ետք երկրորդ գաւաթին մնացորդն ալ: Վերջին ունպս կը կլլեմ ու կը հետեւիմ իրենց:

Հիմա արդէն նոր night club մըն ենք, բեմահարթակն ալ պարողներով լեցուն է: Դարձեալ երեք գաւաթ կարմիր գինի: Ճէյ տաքցած է արդէն ու հետը պարող կը փնտռէ: Սանկ կտրուկ կը մերժէ Ճէյին հետ պարելու հրաւերը եւ կը ստիպէ զիս՝ ընկերանալ Ճէյին: «Ուրիշ ելք չունիմ», կը մտածեմ ու կը սկսիմ պարել: Բարձրագորգօռ պարեղանակին կշռոյթին հետ հետզհետէ կը սկսին լայննալ Ճէյին շարժումներն ալ, ապա՝ ինքնամոռաց ու վերացած, ան յանկարծ երկու ձեռքերուն ցուցամատներն ու միջնամատները Victory կ'ընէ եւ այլեւս անսամծօրէն կը տրուի աղմկոտ երաժշտութեան թափին, ժպիտն ալ տանելով մինչեւ ականջները: Sexy մարմին մը, ճկուն շարժումներ, փակած jeans եւ սեւ t-shirt, ետեւ-առջեւ տաստափակ, բայց չես գիտեր ո՞ր անտառները աճեցուցած փարթամ կուրծքեր, որոնց անոպայ շարժումը խելքամաղ կ'ընէ բոլոր արուները...

Բեմահարթակը կը սկսի նոր պարողներով լեցուիլ: Կը սկսինք իրարու հալիլ: Այնքան մօտ-մօտ կը պարենք, որ յանկարծ ափս կը դպչի քովս պարող աղջկան մը յետոյքին: Խոժոռ նայուածք մը կը զարնուի երեսիս... lesbian-ի մը հաղիպածի պէս աղջիկը խիստ-խիստ կը նայի ինծի, հետը պա-

րող տղան ալ իրեն կը հետեւի: Տեղս կը փոխեն...

Քիչ ետք սեղան կը վերադառնանք եւ ճէյ անմիջապէս կուլ կու տայ գաւաթին ամբողջ պարունակութիւնը ու առանց ժամանակ անցընելու կ'ապսպրէ ուրիշ մը: Այսպէս, իրարու ետեւէ կը պարպուին բաժակներ, գինովութեան հով մը խաղացնելով ճէյին աչքերուն մէջ, բայց ան կը մնայ անդդողելի՝ պարելու իր մոլուցքին մէջ եւ անդադար ու բռնի կերպով մէկ գիս, մէկ ալ Սանկը կը հանէ պարի, մինչեւ որ 40-45 տարեկան երկու տղամարդ կը յայտնուին մեր սեղանին...

Հիմա արդէն ճէյ կախուած է տղամարդոց ուսերէն, կռնակ ու թեւեր կը շփուին, իսկ մեր ճիշդ կողքը նստած սպիտակամորթ զոյգը ամբողջ 25 վայրկեան առանց շունչ առնելու համբուրուելէ ետք, անքակտելիօրէն կը փակի...

Այլեւս այդ կողմ նայելու կ'ամչնամ եւ մեր սեղանին վրայ ճէյին պարզած տեսարանէն ալ խորշելով՝ ճարահատ ու լարուած կը սկսիմ բեմահարթակի պարողները դիտել: Մէկ ալ կը նկատեմ, որ քիչ առաջ էրընին մասին գլուխս «շինել»ու պատրաստ Սանկը մէջտեղ չկայ. հոս-հոն կը նային ու զինք կը գտնեն bar-ին մօտ՝ տղու մը փակած: Քովս՝ ճէյը մատները միշտ Victory ըրած եւ անընդհատ շփշփուելով, տղաներէն մէկուն հետ կ'երգէ, կը պարէ, իսկ երկրորդն ալ քիչ մը հեռացած սեղանէն, պիշպիշ ինծի կը նայի ու երբ նայուածքս կը բռնէ, անմիջապէս բարեւ մը կու տայ գլուխով:

«Լաւ որ կռնակս տուած եմ իրեն», կը մտածեմ ես ինծի... Բայց ատիկա պատճառ մը չէ, որ տղան ինծի չմօտենայ... հարցումներուն կծիկը քակլիլ կը սկսի.

- Դուն քորէացի չես երեւիր...
- Քորէացի չեմ:
- Հապա՞...
- Armenian...
- Oh, Iranian...
- No, Armenian...
- Yeah, Albanian...

Տեղ մը չկարենալ հասնելու կսկիծէն թելադրուած՝ լուռ կը մնամ: Գիշդ այդ վայրկեանին վրայ կը հասնի Սանկ եւ գինիի իր գաւաթը արագ շարժումով մը գլուխը քաշելէ ետք, կը սկսի տաքցած ըլլալու նշաններ ցոյց տալ ու անմիջապէս վրայէն կը հանէ ամառնային կարճ ժաքէթը: Երեւան կու գան սպիտակ թեւեր՝ մարմնին պէս կարճ, բայց մսեղ: Ինքզինք զովացնելու իր մղումին մէջ ան յանկարծ վեր կը բարձրացնէ հոլանի թեւերը, փորձ կ'ընէ ծոծրակին թափուած սեւ մազերը հաւաքելու եւ... անութիւն տակ փունջ մը մազ, արբունքի օրերէն մնացած...

Ճեյ՝ Victory-ն միշտ ամուր բռնած, յանկարծ կը վազէ մեր առջեւէն անցնող հսկայ տղու մը վրայ: Օրօրուելով կը մտնեն բեմահարթակ ու պարելու կը սկսին: Թափ կ'առնէ կրքոտ պար մը, զիրար ուտելու պատրաստ յովագներու պէս գլուխները ետեւ բռնած, մէջքէն վար զիրար գրկած: Տղուն ափերուն մէջ պինդ-պինդ նստած է աղջկան յետոյքը: Նոր երգը նոր թափ կու տայ մարմիններուն, մինչեւ որ պարային գալարումը իր լրումին կը հասնի ու Ճեյ կը ցատկէ տղուն մէջքին...

Սեղանին վրայ, ինձմէ քիչ մը անդին, առանձինն կը շարունակէ երգել քիչ առաջ շփշփուող տղան՝ յայտնապէս Ճեյին պարէն խելագարած: Յանկարծ երաժշտութիւնը կը սկսի թուլնալ, ապա ձայնային վերջին ելեւէջներուն հետ ինքնագոհ ծիծաղով մը սեղան կը վերադառնայ Victory-ն ու ինքզինք դարձեալ կը նետէ երգող տղուն գիրկը:

Նոր գաւաթ մը կու գայ. Ճեյին օրօրուիլը ակներեւ կը դառնայ, բայց կիրքը տակաւին բուռն՝ ան այս անգամ կը վազէ քիչ առաջ հետը պարողին գիրկը ու լզուընտուքը կրակ կը դառնայ: Եւ այսպէս, Victory-ն քանի մը անգամ կ'երթայ ու կու գայ, ճամբուն վրայ հանդիպած բերաններէն ալ իյնալով կախ-կախ...

Անդին՝ Սանկը զբաղած է իր նոր գտածին հետ պարելով, ես ալ Gibsy King-ով տարուած՝ աչքերովս պահը կ'ուտեմ... յանկարծ ինծի կը մօտենայ քիչ մը առաջ հետս խօսող տղան ու առանց հրաւերի կը բազմի քովս.

- Don't you like to have a dinner with me?

«Ասո՛ր ինչ եղաւ» կ'ըսեմ միտքէս ու անճարակ՝ երեսը կը դիտեմ: Հարցումը կը կրկնուի: Չեմ գիտեր ի՞նչ պատասխանել... բառերէ աւելի՝ անհասկնալի ձայներ կը հանեմ... տղան հասկացողութիւն կը ցուցաբերէ եւ անճարակութեանս վերջ դնելու համար գրպանէն կը հանէ անձնական քարտը ու ինծի կ'երկարէ՝ ետեւէն ալ “Please call me” մը ձգելով:

Գլուխովս «այո՛» կ'ըսեմ ու քարտը պայուսակս կը սահեցնեմ: Սանկ դարձեալ ճիշդ ժամանակին կը յայտնուի ու լուացարան երթալ կ'առաջարկէ ինծի: Ուրախութեամբ կը հետեւիմ եւ աչքիս պոչովն ալ կը նկատեմ, որ Victory-ն օրօրոցի վերածուեր է: Երբ գործակիցիս կ'ըսեմ այս մասին՝ խնդալէն կը մարի, իր ցեղին առանձնայատուկ՝ երկու կողմերէն կարծես պարանով քաշուած հազիւ նշմարելի աչքերը բարակ գիծի վերածելով:

- You don't worry, she's drunk all time -, ձաբռտելու պէս վրայ կը բերէ ան:

Ճեյ հիմա պաշտօնապէս փլած է երգող տղուն վրայ: Տուն վերադառնալը հրամայական կ'ըլլայ: Հինգով կը սկսինք քալել դէպի դուռ. միւս տղան ետեւէս կամացուկ մը կը յիշեցնէ, որ հեռաձայնեմ: Գլուխս կը հանեմ, կ'իջեցնեմ: Ժպիտ կու գայ երեսին: Ստիպուած ես ալ կը ժպտիմ: Օրօ-

րոցը կը սթափի մէկէն ու դարձեալ Victory եղած՝ շորորալէն կը զարնուի դրան մէջ կանգնած, մեզ ճամբու դնող երկու ուրիշ տղամարդոց՝ աջ ու ահեակ “thank you”-ներ շնայլելով...

Հագիւ դուրս ելած՝ “She’s a crazy woman” ըսելով խնդալ կը սկսի երգող տղան ու գինովը ձեռքս կու տայ: Թուշերը կախուած, հագիւ նշմարելի աչքերը կարծես իրարու մէջ մտած, բայց Victory-ն միշտ վեր բռնած՝ ճէյ երգելու պէս բաներ մը կ’ըլլայ, մինչ հետս խօսող տղան՝ ճամբան անցնելու պատրաստ իր դիրքով, աջ ձեռքը ընկալուչ ըրած՝ ետեւէս կը պոռայ.

- Don’t you forget to give me a ring, ok?

*
* *

Ինքնաշարժին մէջ ենք արդէն: Քանի մը բառ իրենց լեզուով եւ բարձրաձայն խնդալ մը: Ետեւ նստած՝ կը հարցնեն պատճառը:

- I asked Jay where is your lipstick, she said men took it, - կ’ըսէ Սանկ՝ խնդալը շարունակելով:

- How many man Jay-, հարցուն մըն ալ ես կը նետեն խնդալով:

- Ten! Hundred!! Thousand!!! կը բացագանչէ գինով քորելուհին ետեւ դառնալով ու ձեռքերուն Victory-ները աչքերուս մէջ կոխելով...

Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նոր Զեւանտա, 2000

*Նոր Զեւանտայի բնիկ ցեղախումբին անունը

ՃԱՇԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՀԻՒՐԵՐ

Խնամքով պահուած խաղալիքներու տուփերը դուրս կը հանուին: Պատմութեան գրքեր, շաքարներ ու շոքոլաներ կը փորձեն հրապուրել երեք մանուկ հիւրերս: Ուրախ են անոնք: Կը պոռչտան: Իրարու ձեռքէ կը քաշեն: Կը խաղան: Կարծես ընտելացած են տան մթնոլորտին հետ: Այլեւս կրնամ անհոգ ըլլալ: Կամացուկ մը կը հեռանամ իրենցմէ, զիրենք վստահելով երկու մանչերուս որպէսզի շարունակեն իրենց մանկական խաղերը միասնաբար:

Կը մտնեն խոհանոց: Պէտք է շուտով ձեռնարկեն ճաշի պատրաստութեան: Բայց հազիւ սկսած գործի մեղմ ձայն մը կը սթափեցնէ զիս:

- Կը սիրեն քեզ «Թանթ Սիրուն», դուն շատ բարի ես: Դուն շատ կը սիրես մեզ: Ինչ որ ուզենք, կու տաս մեզի:

Պահ մը կանգ կ'առնեն, հակառակ խոհանոցին մէջ տիրող խճողումին: Լեւային թելերը արդէն գրկած են մէջքս ու ես կը զգամ այդ անմեղ շունչին տաքութիւնը վզիս մօտ: Մանուկ, վճիտ դէմք մը պայծառ, որ կարծես կը զգայ թէ տարօրինակ բան մը կայ այսօր: Արտասովոր երեւոյթ մը: Կը գգուեն իր պզտիկ գլուխը ու կը սեղմեն կուրծքիս: Կ'ուզեն քանի մը բառով փոխադարձել իր գովասանքները: Բայց ի՞նչ ըսեն: Ո՛հ, պիտի չըսեն. իր արտայայտութիւնը վճիտ հարցում մըն է կարծես կամ զարմանք մը թերեւս: Անոր պատասխանը ես ինծի պիտի տամ միայն այսօր:

- Այո՛, սիրելի՛ Լեւա, կը սիրեն ձեզ: Ինչպէ՞ս չտամ ձեզի այն ինչ որ կ'ուզէք: Ինչ որ տամ ես ձեզի հիմա, պիտի չկարենամ փոխարինել ինչ որ կ'ենքքը խլեց ձեզմէ այսօր:

Այրած ձեթի գոլորշին կը կծէ ռունգերս ու կը սթափեցնէ զիս: Արագ ոստումով մը կը մօտենամ այրող տապակին, որ ջղայնացած կը զանգատի այսօրուան անկարգ տանտիկնութենէս: Կը նետեն շերտուած գետնախնձորները հոն ու դարձեալ նայուածքս կը հանգչի այս երեք նոր որբերուն վրայ: Լեւան հազիւ ութ տարեկան արթուն աղջիկ մը, Ռիշոն չորս կողմը պրպտող աչքերով վեց տարեկան մանչ մը: Իսկ Ջուզուին, հինգ տարեկան մանչուկ մը... օ՛հ, այդ աչքերը: Անոնք կրակոտ են, բայց ոչ անհոգ:

Վար կը դնեն տապկոցի խոշոր դգալը ձեռքես ու անհուն սիրով մը կը

գրկենմ գինք: Կրկին կը նային իր աչքերուն: Միտքս չ'ուշանար հոն գրուածը կարդալու: Այդ անուշիկ աչքերդ «գիս սիրէ՛, գիս սիրէ՛» կ'ըսեն ինծի: Սէր կը տենչան անոնք: Պզտիկ գլուխդ կը թաղես կուրծքիս մէջ ու ես կը զգամ սրտիդ տրոփիւնները:

- Այո՛, սիրելի՛ Ձուզու, հոս գրկիս մէջ գէթ այսօր պիտի գտնես փնտռածդ: Պիտի փորձեն յագեցնել քեզ այսօր գոնէ, որովհետեւ ես ալ ճիշդ քեզի նման, քու այս շատ կանուխ տարիքիդ զգացած եմ սիրոյ պակասը: Գիտեմ, թէ ի՞նչ կը նշանակէ կորսնցնել շատ գուրգուրոտ հայր մը այս տարիքին: Հայր մը, որ չէր դժուարանար իր գործը ընդմիջելու իր սիրասուն զաւակները իր ձեռքովն իսկ դպրոցի ինքնաշարժէն դիմաւորելու: Ես յաճախ կը տեսնէի հայրդ, այդ անզուգական նկարագրով կատարեալ մարդը, իր հպարտ բարտիի հասակով, ձեր թաղին անկիւնը: Ժպիտը դէմքին՝ միշտ յաղթական ձեզ կը սպասէր:

Ակամայ կը թողում Ձուզուն: Գետնախնձորներս արդէն կարմրած են ինծի պէս: Դուրս կը քաշեն զանոնք, ուրիշներ կը տեղաւորեն կրկին տապակին մէջ: Այսօր ձեր սիրած ճաշը պիտի պատրաստեն ձեզի: Դուք այսօր իմ հոգիիս հիւրերն էք՝ երեք անուշիկ մանուկներ: Պիտի երգեն ձեզի, պիտի խնդան ձեզի հետ հակառակ մտրակուած ուղեղիս: Պիտի խաղան նոյնիսկ ձեզի հետ այսօր գէթ միայն պահ մըն ալ հեռացնելու՝ ձեզ սպասող դժբախտութիւնը: Օ՛հ, ո՛չ, դուք պէտք չէ տեսնէք ձեր շատ սիրելի հայրը այսօր: Հոն անկողինին մէջ անշարժացած: Մայրդ այդ շէն կինը սեւերու մէջ գամուած, արցունքներով խելագար: Չեմ ուզեր, որ ձեր պայծառ ուղեղները մթագնին այսօր: Ո՛չ, այս կատակերգութիւնը շատ կանուխ է, որ ըմբռնէք:

Այսօր ալ քնացէք, ձեզ արթնցնող, ցնցող դժբախտութենէն անտեղեակ: Վաղը գրեթէ ամէն բան պիտի իմանաք ու լսէք: Պիտի լսէք, բայց պէտք չէ տեսնէք: Ականջն իր լսածը կրնայ մոռնալ, բայց աչքն իր տեսածով կը տառապեցնէ:

Ձեռքերս կ'աշխատին անգիտակցաբար: Մատներս կը հպին շիկացած ձեթին, կը վայելեն անոր կրակոտ բարկութիւնը: Դուրս կը քաշեն ձեռքս ընդոստ, բայց չեմ կրնար անոր այրուածքը զգալ: Հոգիիս խռովքը կը գերազանցէ անոր պատճառած ցաւը: Հագիւ քիչ մը հանդարտած պզտիկ ծայն մը նորէն կը կեցնէ գիս, Ռիշոն է այս անգամ:

- Բայց, «Թանթ Սիրուն», մայրս ո՛չ մէկ օր արտօնած է մեզի, որ ուրիշի մը տունը այսքան երկար մնանք...

Հոս ալ պէտք է որ լեզուս իր արուեստը ցուցաբերէ:

- Ուրախ չե՞ս դուն հոս... չե՞ս ուզեր մնալ հոս:

- Շատ ուրախ եմ, բայց մայրս չ'ենդանայ...

- Ո՛չ, այսօր պիտի չ'ենդանայ... Գնա՛ եւ ուրախ խաղա՛:

Կը հեռանայ Ռիշոն միանալու իր խաղընկերներուն: Իսկ ես խոշոր դգալը ձեռքիս դարձեալ կը մնամ սառած: Այո՛, ուրիշ մըն եմ ես ձեզի

համար: Ուրիշ մըն են թէն ես, բայց այս առաւօտ հօրդ հոգեվարքի վայրկեաններուն, երբ իմացայ որ մայրդ շուարած էր, թէ ինչպէս պիտի կրնայ հասկցնել հօրդ յաւէտ բաժանումը ձեզի, նախընտրեցի որ դուք հեռանաք այդ մթնոլորտէն ու ըլլաք իմ ճաշի հիւրերս այսօր:

Հագիւ մէկուկէս տարիէ ի վեր, զիրար կը ճանչնանք: Այն օրէն, որ քոյրս եկաւ բնակելու ձեր շէնքը: Գիշդ է, յարկերը իրարու շատ մօտ էին, քոյրս առաջին, իսկ դուք երկրորդը: Բայց չէ, այդ չէ, որ մեզ իրարու շուտ մօտեցուց: Լեզուներն ալ տարբեր էին: Այդ ալ պատճառ չեղաւ դրացնութիւնը խանգարելու: Չեն գիտեր, թէ ինչու երկու այցելութիւններ բաւեցին, որ մենք հարազատի աչքով նայինք իրարու: Այո՛, մօրդ պարզութիւնը ամուր շաղախ մը եղաւ մեր մտերմութեան: Իր անսպառ եռանդը երջանկութեան հոսանքով մը կը կապէր մեզ: Իր լայն սրտին մէջ սիրոյ եւ գուրգուրանքի թերթիկներ շատ էին: Իր զաւակները կը խնամէր, եւ կը հասներ բոլորին: Բնական անկեղծութիւն մը ունէր: Լուռ կը զմայլէի այս կնոջ թափանցիկ խառնուածքին: Կին մը, որ գիտէր գոհանալ իր առօրեայով, իր զաւակներուն հոգածութիւնը, ամուսինին խնամքը ու քրոջս ընտանիքին հետ բարեկամութիւնը: Ոչ, իր սեռին պատկանողներուն ոչ մէկ արդի պահանջը ունէր: Չնայած որ ամուսինը նիւթապէս ապահով անձ էր: Բայց, ո՛չ, իր մտահոգութիւնը այդ չէր: Երկու տարի առաջ ամուսինը սրտի պզտիկ տագնապ մը անցուցած էր: Բժիշկները ըսած էին, թէ շատ պէտք չէ յոգնի: Արդէն յիսունը թեւակոխած էր: Այդ էր եղած բոլորը: Հիմա ան չէր խնայեր իր երեսուն գարուններու բոլոր առաւելութիւնները շէնքնելու համար ընտանեկան մթնոլորտը: Իր շրթները միշտ ալ ծածկեցին իր ներքին խռովքը, որովհետեւ իր հաւատքը կը սնուցանէր իր մեծ յոյսերը: Կը հաւատար, որ իր շատ սիրելի ամուսինը, անպատճառ պիտի լաւանար: Իր աղօթքները ու ամուսինին ըրած բարիքները չէին կրնար ի դերել ելլել: Բայց, ափսո՛ս: Անխուսափելիին պատահեցաւ:

Օ՛հ, այսօր պիտի չկարենամ պատրաստել այս ճաշը: Մտքիս պէս խոհանոցս ալ տակնուվրայ է, բոլոր առարկաներուն տեղերը փոխուած են կարծես: Փնտռածս չեն գտներ, Աստուած իմ: Դուրս կը քաշեմ կրակարանը արագ ու կը տեղաւորեմ շամփուրները անոր վրայ: Կը ջանամ մնալ ճաշի պատրաստութեան մէջ: Բայց միտքս այսօր թելեր առած կը թռչի կրկին. ոչ, պիտի չհանգչի այսօր: Կը հեռանայ ու կը սաւառնի հեռուն: Կը մանկանամ յանկարծ, կ'անմեղանամ ու կը պոռթկամ:

- Ինչո՞ւ... Ինչո՞ւ մէկը չմտածեց այդ օր զիս հեռացնել այդ մթնոլորտէն: Բոլորն ալ իրենց ցաւով տարուած պղծեցին անիմաց մանկութիւնս: Եօթը տարեկանի ուղեղս կը մերժէր տեսնել սիրասուն հայրս փայտացած, անշարժացած: Օ՛հ, այդ կենսունակ մարդը, սիրալիր հայրս չէի կրնար տեսնել այդպէս. ոչ, չէի ընդուներ անոր մահը: Ինչո՞ւ պէտք է մեռներ, երբ ես այնքան պէտք ունէի իրեն: Կը հագցնէին, կը քա-

չէին: Չէր դժգոհեր: Դագաղին մէջ կը պառկեցնէին, դարձեալ համաձայն էր: Օ՛հ, այդ մուրճը, որով գամեցին քու դագաղդ, հայր իմ, այդ անիծեալ մուրճը, իմ մանկութիւնս ալ նետեց այդ դագաղին մէջ ու գամեց առ յաւէտ:

Աշխարհն ինծի համար այդ օրերուն մայրս ու հայրս էին: Հայրս երկրագունտիս կեդրոնն էր, որուն շուրջ անհոգ կը դառնար մայրս: Հիմա չկար կեդրոնը: Երկրագունտին միօրինակ ու խաղաղ ընթացքը խանգարուած էր, ան կը թաւալէր ըստ բախտի, զիս մատնելով կրկնուող եւ խաչածել տագնապներու: Անընդունելի կը գտնէի ինծի վիճակուած կեանքը: Մեռնելէ ալ կը վախճայի: Վախը, զրկանքը, մղձաւանջն ու տառապանքը իրենց մաղձով գինովցուցին զիս:

Յաջորդ օրը մեր տան լոյսերը կը վառէին կրկին: Բայց ինչո՞ւ սիրտս միշտ մութ մնաց: Ստամոքսս օր մը պարապ չմնաց: Ինչո՞ւ հոգիս միշտ սովահար դողաց: Կ'ըմբոստանայի, ինծի վիճակուած բախտը կը մերժէի: Հոգիս ծարաւի՛ էր խայտալու: Ի զո՛ւր, ի զո՛ւր կ'ողբայի: Կը փնտռէի մանկութիւնս. տարիներ, տարիներ շարունակ, բայց ոչ մէկ տեղ չէի գտներ զայն: Յաճախ ուզեցի նմանիլ իմ հասակակիցներուս, գողնալ, կապկել անոնց անպատասխանատու քրքիջները, թրթուռն ծիծաղները: Բայց շրթունքներս միշտ մնացին սառած ու աչքերս՝ մելամաղձոտ. մնացի միշտ հոգեպէս կործանած ու լքուած...

Մայրս շատ կը սիրէր զիս: Հօրս մահը ինծի հանդէպ իր ունեցած սերը հասցուց պաշտամունքի: Բայց այդ սերը չէր գոհացներ զիս:

- Սիրելի՛ մայր, դուն ինծի կու տայիր «հիւանդ» սեր մը: Արցունքներով ու ողբով շինուած, որուն առջեւ հոգիս կը տկարանար ու կը տկարանար ամէն օր: Ի՞նչ ընէի ես այս տկար հոգիով: Կեանքի պայքարս սառոյց էր պատած: Կրակ պէտք էր, որ հալէր: Անոր դիմաց ես ածխացած փայտիկ մը, խեղճ մարմինս ո՞ւր տանէի:

- Օ՛հ, անփոխարինելի, քաղցր էակ, մայր իմ անուշ, ներէ՛ ինծի միշտ, եթէ մանուկ ուղեղս երբեմն ատած է քեզ: Ես առողջ սեր մը կ'ուզէի, ուրախութեամբ լեցուն, պայծառ սեր մը: Օ՛հ, մայր իմ, չեմ մեղադրեր քեզ: Աւելի ի՞նչ կրնայի սպասել քեզմէ: Ջարդէն հազիւ ազատած, տառապած ու տան չորս պատը միայն ճանչցած մայր մը ի՞նչ պիտի կարենար տալ ինծի: Աչքերս ծանծրացած էին, տասնեակ մը տարիներ, քեզ սեւերու մէջ տեսնելէ: Կը մտածէի, թէ ինչո՞ւ դուն չէիր դադրեր լալէ: Այո՛, դուն տարիներ, տարիներ լացիր ամէն օր: Գիտեմ, թէ քեզի համար ալ ամէն բան էր հայրս: Մէկը չունէիր իրմէ զատ, ո՛չ եղբայր, ոչ ալ հեռաւոր մէկ ազգական: Իսկ այդ բոլորէն անկախ իմ գերագոյն թշնամիս այդ «որբ» բառն էր, որ խայթելով ականջներս միշտ կը խռովէր հոգիս:

- Դուն որբ ես, պէտք չէ երթաս, կը կրկնէիր միշտ որեւէ առիթի, երբ կ'ուզէի միանալ իմ տարեկիցներուս որեւէ ձեռնարկի կամ կազմակեր-

պութեան մասնակցելու, պատճառաբանելով հօրս բացակայութիւնը ու քու անկարողութիւնդ զիս տանելու ու բերելու: Ուրեմն պէտք է զրկուէի իմ տարիքիս շնորհուած բոլոր բարիքներէն... հոգիի թռիչքէն ու խանդադատանքէն ու մնացի ծուարած որբութեան սեմին:

Օ՛հ, կ'ատէի այդ բառը ու կ'ուզէի սրբել զայն բոլոր անխիղճ բառաբաններէն, որոնք սահմանած էին անոր իմաստը: Ի՞նչ է որբութիւնը, դրո՞շմ է անջնջելի, թէ ոչ արեանս մէջ մտած մէկ մասնիկ, որմէ կարելի չէ ձերբազատուիլ երբեք: Երբեմն ես կ'ուզէի ընել ամէնէն դժուար ու անկարելի գործեր: Նոյնիսկ քալել մղոններով՝ դժուար ճամբաներէ, կամ մագլցիլ ցից լեռներէ վեր՝ անտեսելով ամէն չարչարանք ու վտանգ, միայն կարենայի սրբել այդ տխրաշունչ դրոշմը իմ ճակատէս: Բայց չյաջողեցայ, չկրցայ հեռանալ անկէ երբեք ու շալկեցի զայն ամէն տեղ ինծի հետ, մի՛շտ, որպէս հոգեմաշ, սպառող բեռ մը:

Ուրքերուս մատները սառած են արդէն: Յուլիսի ջերմութիւնը չի հասնիր հոն: Ժամացոյցը դէմս, պատին վրայէն, կը յանդիմանէ զիս: Ժամը կէսօրուան ճիշդ երկուքն է: Խորովածին համեմուած բոյրը կը լեցնէ տունը: Կը սթափիմ յանկարծ: Արագ ուստումով մը կը պատրաստեմ ճաշի սեղանը ու կ'ուղղուիմ մանուկներուն քով, լայն ժպիտ մը տեղաւորելով շրթունքներուս վրայ:

- Ճաշի ժամն է, հրամմեցէ՛ք ճաշի, սեղանը պատրաստ է... ձեզ կը սպասէ...

ՍԻՐՈՒՆ ՍԻՍԵՌԵԱՆ-ՀԱՃԵԹԵԱՆ

Մ Ե Ն Ա Ի Ո Ր Ի Շ Խ Ա Ն Ը

Եփրատ գետից ոչ շատ հեռու, նախկին Սերգիոպոլսում, Օմայեանների Յիշամ Բ Աբդ էլ-Մալիք խալիֆայի կառուցած շքեղ ապարանքում, որ կոչվում էր Ալ-Ռուսաֆա, ապրում էր նրա ամենասիրելի թոռը՝ Աբդելռահմանը:

Ալ-Ռուսաֆան անապատային այդ ամայութեան մէջ մի ովասիս էր կարծես: Ամրոց-պալատը շրջապատուած էր գեղատեսիլ պարտեզներով, վարդաստաններով, կարկաչահոս առուակներով ու ցայտաղբիւրներով: Վաղ առաւօտեան, երբ օգոստափառ պերճանքով ծագում էր արեգակը, չորս կողմից լսւում էր գունագեղ թռչունների ճռուղիւնը՝ խառնուելով արաբական համբաւաւոր մոյզների խրխիւնջին:

Աբդելռահմանը որդին էր Մուավիա իշխանի: Մայրը բերբերների ցեղից սերած մի ստրկուհի էր՝ Ռահ անունով: Ընդունուած կարգի համաձայն, երբ ստրկուհին արու զաւակ էր ծնում, արժանանում էր իր տիրոջ շնորհին եւ ազատւում ստրկական վիճակից:

Յիշամ խալիֆան շատ անգամ էր լինում Ալ-Ռուսաֆայում թէ՛ հանգստանալու եւ թէ ժամանակաւորապէս խուսափելու իր դէմ նիւթուող խարդաւանանքներից: Նրա ներկայութիւնը ուրախութեամբ էր լցնում պատանի Աբդելռահմանի սիրտը, քանզի պապն ընդունակ էր երջանկացնելու իր շրջապատը: Նա երեկոները խնջոյքներ էր կազմակերպում, հրաւիրում էր նշանաւոր գուսանների՝ երգելու փառքը Օմայեանների ազնուական տոհմի, որի ներկայացուցիչն էր ինքը: Բացի դրանից խալիֆան հետամուտ էր նաեւ իր ընտանիքի անդամների դաստիարակութեանը, նրանց մէջ արաբական ոգու ամրապնդմանը: Տղամարդկանց մարտունակութիւնը բարձրացնելու համար նա անձամբ հսկում էր զինավարժութիւններն ու ռազմագիտական պարապմունքները: Այդ առընչութեամբ մեծ ապագայ էր խոստանում Աբդելռահմանը՝ լինելով փայլուն ընդունակութիւնների տէր մի պատանի:

Քաղցրայուշ այդ օրերը մնացին անցեալում, դարձան անկրկնելի, իսկ Աբդելռահմանի հոգում էլ դրանք անջնջելի յիշատակներ թողեցին:

Հայերիս համար, սակայն, Ալ-Ռուսաֆան կամ մեր լեզուով Ռուծափը, ստորեւ նկարագրուած հոգեցունց դէպքերից տասնհինգ տարի առաջ, արդէն դարձել էր մի անիծեալ անուն, ստացել էր ոճրապատ յիշատակ թողած մի դառնակսկիծ համբաւ: Այնտեղ, այդ պալատում եւ համանուն քաղաքում, կատարուել էր մի անարդար եւ զարհուրելի դէպք. հայոց Գողթնեաց գաւառի Խոսրով իշխանի որդին՝ երիտասարդ, գեղադէմ եւ առաքինազարդ Վահանը, ենթարկուել էր անմարդկային չարչարանքների, այդուհանդերձ նա արիւնլուայ վիճակում անգամ արիաբար մերժել էր ուրանալ իր քրիստոնէական հաւատը, որի պատճառով էլ Յիշամ խալիֆայի հրահանգով գլխատուել էր: Հայոց իշխանի կրած չարչարանքներն ու անմեղ արիւնը, ասես իբրեւ դատապարտութիւն, իջել էին Ալ-Ռուսաֆայի պարիսպներին եւ խալիֆայի գերդաստանի վրայ: Մեծ էր Վահանի մահուան թողած վիշտը նրա մերձաւորների եւ բազմաթիւ արաբ ընկերների սրտերում, սակայն Ալ-Ռուսաֆայի նորահաս սերունդը ոչինչ չգիտէր այդ մասին: Նրանց համար այնտեղ ոչ մի ոճիր չէր պատահել: Ամէն ինչ օրօրւում էր խաղաղ մեղկութեան մէջ...:

Հեջրայի 132 թուականն էր, իսկ մեր թուարկության 750 տարին: Հիշամ Բ-ի որդին՝ Սրուանը, արդեն մի քանի տարուց ի վեր դարձել էր Դամասկոսի նոր խալիֆան: Սա այն Սրուանն էր, որ մի ժամանակ եղել էր Հայաստանի արաբ կառավարիչը:

Յիշեալ թուականի գարնան խաղաղ ու զովաշունչ երեկոներից մեկն էր: Դեռ քսան գարուններ չբոլորած իշխան Աբդելռահմանը նստել էր Ալ-Ռուսաֆայի դալարագեղ զբոսայգում, բարձրուղեղ մի արմաւենու տակ: Երկինքն այդ պահին կախարդական գեղեցկութեամբ ու աստղերի պսպղացող պերճանքով էր պարուրուած: Բառերն անգոր են նկարագրելու արեւելեան անամպ երկինքների հրաշագեղ վեհութիւնը: Աշխարհի ոչ մի անկիւնում երկինքն ու երկիրը չեն կարող այնքան ներդաշնակ հաղորդակցութեան մէջ լինել, որքան Եփրատ գետի մերձակայ տարածութիւններում: Ձուր տեղը չի ասուել, թէ Աստուած իր դրախտը այդ վայրերում է հաստատել:

Իշխանը հմայուած էր բնութեան այդ հոյակապ տեսարանով: Նրա հոգին ուզում էր ճախրել դէպի հեռուները, դէպի բարձունքները երկնային, ուզում էր վերահասու դառնալ մահկանացուներից թաքնուած գերբնական ճշմարտութիւններին: Նրա մաքուր հոգին երբեք չէր գոհանում պալատական պերճանքներով կամ իրեն շրջապատող արաբական հուրիների գրգանքներով:

«Այս գիշերը,՝ մտածում էր Աբդելռահմանը՝ նայելով երկնքին,՝ նման է Ալ-Կադր գիշերուան, երբ հրեշտակները Բարձրեալի Գահի մօտից իջել են երկիր, իսկել բնութեան ու մարդկութեան վրայ, մինչեւ այգաբաց ամէն ինչ լցրել խաղաղութեամբ ու երջանկութեամբ»:

Դա նաեւ այն գիշերն էր, երբ Դուրանը իջել էր երկնքից: «Ալ-Կադր գիշերը հազարաւոր ամիսներից էլ գերազանց է» (Սուրա 97):

Պարզկայ գիշերուայ վեհութիւնը մղում էր Աբդելռահմանին ծնրադրելու եւ աղօթելու աշխարհների Արարչին.

– Տո՛ւր ինձ ջինջ հաւատ, վստահութիւն, խաղաղութիւն եւ ենթակայութիւն քո սուրբ կամքին, որպէսզի կարողանամ ապրել ու գործել այնպէս, ինչպէս որ քեզ հաճելի է:

Այնուհետեւ նա զգում էր, թէ իրեն վերապահուած է պատասխանատու դեր կատարել իր ազգի ու կրօնի համար, մանաւանդ որ մի օր իր պապի եղբայրը՝ Մուսլաման, որ նշանաւոր գուշակ էր, նայելով իր՝ Աբդելռահմանի դէմքի ու վզի գծերին՝ ասել էր. «Այս երեխան բարձր դիրքերի է հասնելու, կարելոր անձնաւորութիւն է դառնալու Օմայեանների գերդաստանում»:

Աբդելռահմանի մտքով, սակայն, երբեք չէր անցնում, որ մի մահասփիւռ ալիք գնալով մօտենում էր եւ շուտով բախուելու էր Ալ-Ռուսաֆայի դարպասներին:

Աստծոյ ստեղծագործութեան մէջ մարդ արարածը միակն է, որ հազար ու մէկ հնարամտութեամբ ոչնչացնում է իր նմանին կամ էլ նրա խորտակումը իրեն հաճոյք է պատճառում:

Թուականը միեւնոյնն էր, Հեջրայի 132-րդ տարին: Դամասկոսի Օմայեան խալիֆայութեան դէմ ապստամբութեան դրօշ էր բարձրացրել իրեն մրցակից Աբբասեանների տոհմը՝ գլխաւորութեամբ Աբուլ-Աբբասի:

Ողջ Արեւելքում ոչ մի արիւնահեղութիւն, ոչ մի պատերազմ չի եղել այնքան դաժան ու ահաւոր, որքան որ եղան գահակալական կործանարար կռիւները Աբբաս-

եանների եւ Օմայեանների միջեւ: Մրուան Բ խալիֆան նահանջելով՝ հասաւ Եգիպտոս, ապաստանեց Բուշիր աւանի ղպտիների եկեղեցում: Աբուլ-Աբբասի զինուորները գտան նրա թաքստոցը, իսկ նա մինչեւ վերջին շունչը գէնն ի ձեռին կռուելով՝ սպանուեց:

Աբբասեանները չբաւականացան Մրուան Բ-ի մահով, նրանք Դամասկոսում բաց արեցին Օմայեան խալիֆաների դամբարանները եւ պղծեցին նրանց աճիւնները: Իշխանուհիներից մէկին տանջամահ արեցին, քանի որ նա մերժեց ցոյց տալ զաւթիչներին գանձերի թաքստոցը, իսկ Մրուան Բ-ի եղբորորդիներից մէկին էլ, Աբդել-Ռահմանի զարմիկին, կտրելով մէկ թեւն ու մէկ ոտքը, ծաղր ու ծանակի ենթարկելով՝ պտտեցրին Դամասկոսի փողոցներով:

Ամէնից սարսափելին, սակայն, Պաղեստինում Աբու- Ֆութուսի նախճիրն էր: Աբբասեանների առաջնորդ Աբուլ-Աբբասի հրահանգով, Դամասկոսի ներկայացուցիչը՝ Աբդալլահը, հաշտութեան առաջարկով հրաւիրում է Օմայեան իշխաններին Աբու-Ֆութուսի պալատը՝ ճաշկերոյթի: Մօտաւորապէս իննսուն Օմայեան ազնուականներ դուրս են գալիս իրենց թաքստոցներից եւ ընդառաջում հրաւերքին: Ճաշկերոյթը չսկսած՝ Աբդալլահի զինուած մարդիկ խուժում են դահլիճ եւ դաժանօրէն կոտորում հրաւիրեալներին: Սրահի յատակն ու պատերը արիւնով են ներկւում, ոմանք դեռ վիրաւոր վիճակում են: Զինուորները նրանց վրայ գորգեր են փռում եւ սկսում ճաշկերոյթը՝ տօնելով իրենց յաղթանակը, մինչ գորգերի տակից լսւում էր մահամերձների աղիողորմ տնքոցը:

Աբուլ-Աբբասն իր համար ընտրում է իր անգութ նկարագիրը բնորոշող մի անուն՝ Ալ-Սաֆֆահ, որ նշանակում է արիւնահեղ, արիւնռուշտ: Նրանով այլեւս խալիֆաները դադարում են արաբական ազգային առաջնորդներ լինելուց, որոնք արաբականացման քաղաքականութիւն էին վարում իրենց գրաւած երկրներում: Այնուհետեւ նրանք դառնում են առաջնորդները մուսուլմանութեան, իսլամ հաւատացեալների, անկախ նրանց ազգային պատկանելիութիւնից: Աբուլ-Աբբասին յաջորդում է իր եղբայրը՝ Ալ-Մանսուրը (754-775), որը 762 թուականին խալիֆայութեան մայրաքաղաքը Դամասկոսից տեղափոխում է Բաղդադ:

Ամենուրեք ծածանւում էր Աբբասեանների սեւաթոյր դրօշը: Բախտի բերումով Ալ-Ռուսաֆայի Աբդելռահման իշխանը ներկայ չի եղել Աբու-Ֆութուսի ճաշկերոյթին: Նա իր ընտանիքի հետ, հալածական դարձած, թաքնուել էր բեդելիների մօտ: Ապահովութեան համար յաճախ վայրից վայր էր տեղափոխւում:

Անապատը անծայրածիր է: Ինչքան գնում ես՝ հորիզոնն այնքան աւելի է հեռանում: Դժուար է կողմնորոշուել անապատում, որն Աբդելռահմանի համար Ալ-Ռուսաֆայի դրախտից յետոյ դարձել էր միակ ապաստարանը: Բայց Աբբասեանների ձեռքը հասնում է նաեւ այնտեղ: Նրանք հետեւում են այն գութկանին, որ Աբու-Ֆութուսի ջարդի լուրն էր տանում իշխանին: Վերջինս գնացել էր որսի: Նրա ապաստարանում այդ պահին գտնւում էր եղբայրը՝ Եահիան: Թշնամին ներս է մտնում եւ տեղնուտեղը գլխատում թէ՛ իշխանին եւ թէ՛ գութկանին:

Զինուորների գնալուց յետոյ Աբդելռահմանը վերադառնում է եւ, տեսնելով իր եղբոր գլխատուած մարմինը, անսահման ցասումով է լցւում մարդասպանների նկատմամբ: Անէծք է կարդում Աբուլ-Աբբասի հասցէին, որն ամենայն հպարտութեամբ էր կրում Ալ-Սաֆֆահ անունը:

Բայց ժամանակ չկար յամենալու: Թշնամին անողոք էր եւ այժմ հետապնդում էր մէկ նպատակ. գտնել ու սպաննել Օմայեանների վերջին գահաժառանգներին: Արդէն նրանցից ողջ էին մնացել միայն երկուսը՝ Աբդելռահմանն ու նրա փոքր եղբայրը, միւսները կանայք եւ երեխաներ էին:

Ի՞նչ իմաստ ունի այլեւս ապրելը, անցնում էր Աբդելռահմանի մտքով, այդքան հարազատներ կորցնելուց յետոյ, երբ տեղ չունես գլուխդ դնելու, երբ քեզ նոյնիսկ շնչելու իրաւունքից են զրկում:

- Ալլահ,- գոչեց նա,- քո ինչին է պետք այս ամէնը, որ բերում ես մեր գլխին, միթէ դո՞ւ էլ ես զուարճանում Աբուլ-Աբբասի նման արիւնահեղութեան տեսարաններով...:

Այդ պահին իշխանը նկատեց, որ իր չորս տարեկան որդին՝ Սուլէյմանը, լալիս է անձայն: Նոյն վիճակում էին եղբայրն ու իր բարի եւ հաւատարիմ ծառան՝ Բադրը: Նրանց լացը ընկճելու փոխարէն աւելի արիութեամբ է լցնում իր սիրտը եւ յանուն նրանց փրկութեան՝ նա որոշում է ապրել, մաքառել ու իր հարազատների վրէժը լուծել: Բայց ո՞ւր գնալ: Աբուլ-Աբբասի զինուորները ամէն տեղ փնտռում էին նրան, տնից-տուն, վրանից-վրան: Յարկաւոր էր շտապ անցնել Եփրատ գետը եւ հետքերը միւս ափում կորցնել:

Աբդելռահմանը իր կրտսեր եղբոր եւ Բադրի հետ գետ է մտնում, լողալով շարժւում է դէպի միւս ափը: Նա լողալու մէջ մեծ հմտութիւն ունէր, բայց ափից հազիւ հեռացած՝ մէկէն նկատում է, որ եղբայրը յետ է մնում: Յրահանգում է աւելի արագ առաջ շարժուել, բայց եղբայրը, տկարակազմ լինելով, յոգնել էր: Շուտով յայտնւում են թշնամու զինուորները, որոնք հաշտութեան խոստումներով կոչ են անում փախըստականներին յետ դառնալ: Աբդելռահմանը ծանօթ լինելով նրանց նենգութեանը՝ շարունակում է փախուստը, խրախուսում է եղբորը չմնալ տեղում, աղաչում-պաղատում է շարունակել լողալ, բայց ի զուր...: Ձինուորները բռնում են նրան: Աբդելռահմանը հեռուից լսում է եղբոր մահազարհուր հառաչանքները եւ ականատես է դառնում բարբարոսների ձեռքով նրա գլխատմանը:

Դէպքն այնքան էր զարհուրելի, որ Աբդելռահմանը մինչեւ իր կեանքի վախճանը զգալու էր դրա այրող ցաւը: Շատ անգամ գիշերները երազում կրկնում էր միեւնոյն տեսարանը, եւ նա իր սեփական հեծեծանքների ձայնից զարթնում էր:

Աբդելռահմանը նայում է դէպի վեր, նրա համար երկնքի դռներն ամուր փակուած էին, նայում է չորս կողմը եւ տեսնում շրջապատուած անողոք թշնամիներով: Բայց արաբական անապատը անծայրածիր է, ոչ ոք չի կարող պարագրկել այն, ուր միշտ ելք է գտնում նա, ով չի յուսալքւում, ով քաջարի է եւ արդար վրէժի ծարաւն ունի իր հոգում: Դրա համար էլ իշխանը յանկարծակի արտասանեց.

- Իֆրիկիա՛...

Այո, միակ ելքը Աֆրիկայի ուղղութիւնը բռնելն էր, ուր ժամանակին Օմայեանները տարածել էին իրենց տիրապետութիւնն ու կրօնը եւ հասել մինչեւ Իսպանիա, որն իրենց լեզուով կոչւում էր Ալ-Անդալուս:

Հինգ տարի շարունակ Աբդելռահմանը իր միակ զինակցի՝ Բադրի հետ թափառում է ողջ հիւսիսային Աֆրիկայում, երբեմն ծալտուած եւ երբեմն էլ բացայայտելով իր ինքնութիւնը նրանց, որոնք մերժում էին ընդունել Աբբասեանների իշխանութիւնը: Նա կրում է բազմապիսի զրկանքներ, ապրում է քարայրներում, հողաշէն խրճիթներում, վրանների տակ: Վտանգների ժամանակ դիմում է հնարամտութեան

եւ նոյնիսկ չի քաշուում արիւնահեղութիւնից: Վերջում նա հասնում է ծայրագոյն Արեւմուտք՝ Մադրեք, ուր սկսում է փնտռել բերբերական Նաֆզա տոհմը, որի դուստրն էր եղել իր մայրը՝ Ռահը:

Բերբերական այդ գերդաստանը այնքան էլ խանդավառութեամբ չի ընդունում Արդելւահիմանին, որի արաբ հայրը ժամանակին յափշտակել էր իրենց սիրասուն դստերն ու տարել Դամասկոս իբրեւ պատերազմի ական: Միւս կողմից էլ Արդելւահիմանի արտաքին կերպարանքը չէր համապատասխանում բերբերական ցեղի յատկանիշներին: Նա բարձրահասակ էր եւ ունէր կապոյտ աչքեր:

Արդելւահիմանը ճնշուած էր զգում իրեն մօր հարազատների շրջապատում: Յարմար առիթի էր սպասում դուրս գալու համար նրանց հսկողութիւնից: Նրա նպատակն ուրիշ էր: Նա յաճախ էր գնում ծովափ եւ այնտեղից դիտում դիմացի երկրի հմայիչ տարածութիւնները: Նա շատ էր լսել այդ երկրի մասին, դա Ջազիրաթ ալ-Անդալուսն էր, քրիստոնեաների՝ Իսպանիան, ուր քառասուն տարիներ առաջ իր հարազատները հասել էին ու պարզել Օմայեանների յաղթական դրօշը: Թերակղզու արաբ նոր վալին՝ Եուսուֆ արդ-ալ-Ռահիման ալ-Ֆիհրին, չէր վայելում իր հպատակների մեծ մասի համակրանքը: Թշնամութիւն կար բերբերների, եմենցի արաբների եւ Եուսուֆի կողմնակիցների միջեւ: Արդելւահիմանը յանդուգն ծրագրեր է մշակում՝ միաւորելու համար արաբներին ու իր համակիր բերբերներին, որպէսզի դրանց, ինչպէս նաեւ Ալ-Անդալուսի իր հաւատարիմ ազգակիցների օգնութեամբ, գրաւի Իսպանիան եւ կրկին անգամ այնտեղ ամրապնդի Արեւելքում կործանուած Օմայեան գերդաստանի իշխանութիւնը:

Այս ուղղութեամբ նա Ալ-Անդալուսի իր սիրիացի հարազատների մօտ բանակցութեան է ուղարկում Բադրին:

Այնուհետեւ անհամբեր սպասում է իր հաւատարիմ ծառայի վերադարձին, որի մեկնելուց արդէն անցել էր մի տարի: Սպասելուց բացի այլընտրանք չկար: Վտարանդի իշխանի համար Արեւելք վերադառնալը մահ էր նշանակում, իսկ անհիւրընկալ բերբերների մօտ մնալն էլ վիրաւորում էր իր արժանապատուութիւնն ու ազատատենչ ոգին, միայն հիւսիսն էր յուսատու հեռանկարներ ընծեռում:

Եւ ահա, ամառային մի գեղեցիկ ու շոգ օր, Արդելւահիմանը ծովեզերքում նշմարում է մի նաւ, որտեղից մէկը լողալով դէպի ափ էր գալիս: Այդ անձը իր սիրելի Բադրն էր, որ ուրախ լուր էր բերում այն մասին, թէ Ալ-Անդալուսի հարաւում տեղաւորուած արաբական բանակը շարունակում է հաւատարիմ մնալ Օմայեաններին: Այդ բանակը մեծ մասամբ սիրիացի արաբներից էր կազմուած եւ համաձայնել էր առանց պայմանի միանալու Աբբասեանների ջարդերից ու հալածանքից վերապրած միակ իշխանին՝ ընդդէմ Ալ-Անդալուսի կառավարիչ Եուսուֆի, որի նստավայրն էր Կորդովա քաղաքը:

755 թ. Օգոստոսի 14-ին, Արդելւահիմանը, գլուխն անցած եմենցիների եւ մի խումբ բերբերների, կտրում-անցնում է Ջիբրալթարի նեղուցը եւ բնակութիւն հաստատում Գրանադայի մարզի Ալմունիէկար քաղաքում՝ իր ընտանիքին հաւատարիմ սիրիացիների մօտ:

Արդելւահիմանը գիտակից էր իր կոչմանը: Գնալով իրականութիւն էր դառնում իր մասին եղած գուշակութիւնը: Նա սակայն ամէն ինչ անում էր ոչ թէ իր սեփական փառքի համար, այլ յանում իր գերդաստանի ոտնակոխուած հեղինակութեան վե-

րականգման եւ ի յարգանս նրա անմեղ նահատակների: Կեանքում ոչինչ չկար, որ զարմացներ նրան: Նա հասունացել էր կեանքի անողոք պայքարներում, տեսել փարթամութիւն, հարստութիւն, պալատական կեանք, բայց նաեւ՝ թշուառութիւն, հալածանք, դաւաճանութիւն, կոտորած...:

Ալ-Անդալուսի վալին՝ Եուսուֆը, նախագում է վտանգը: Սիրաշահելու համար Աբդելռահմանին՝ հողատարածքներ է առաջարկում նրան, բարձր պաշտօն եւ իր աղջըկայ հետ ամուսնութիւն: Սակայն այդ բոլորը ամենեւին չէր հետաքրքրում իշխանին:

Ամիսներ տեւած ապարդիւն բանակցութիւններից յետոյ՝ Աբդելռահմանի ղեկավարած զօրքը շարժւում է Կորդովայի ուղղութեամբ: Եմենցիները անհամբեր են, կառավարիչ Եուսուֆի գանձերին ու կանանց տիրանալու տենչը հանգիստ չի տալիս նրանց: Աբդելռահմանը իր ղեսպանի միջոցով մի նամակ է ուղարկում Եուսուֆին՝ խոստանալով յարգել նրա պայմանները եթէ հրաժարուի իշխանութիւնից: Դեռ նամակի պատասխանը չստացած՝ անհամբեր եմենցիները գիշերով յարձակւում են կառավարչի զինուորների վրայ եւ պարտութեան մատնում նրանց: Սպանւում է Եուսուֆի որդներից մէկը, իսկ ինքը կալանաւորւում է:

Յաղթական Աբդելռահմանը 756 թուականի Մայիսի 16-ին, նիզակի ծայրին իր սպիտակ փաթոցն ամրացրած իբրեւ դրօշ, մուտք է գործում Կորդովա: Նա հռչակւում է Ալ-Անդալուսի կառավարիչ եւ հիմնում «Կորդովայի Օմայեան Անկախ Էմիրութիւնը», որն հետագայում իր յաջորդների կողմից վերածւում է խալիֆայութեան: Նա արգելւում է եմենցիներին կողոպտել Եուսուֆի կանանց, նոյնիսկ ազատ է արձակւում նախկին կառավարչին, որը, սակայն, երեք տարի յետոյ ապստամբութիւն կազմակերպելու մեղադրանքով՝ գլխատւում է:

Նորահաստատ Էմիրը Սիրիայից գաղտնօրէն բերել է տալիս իր հարազատներից ոմանց: Ճոխացնում է Կորդովան եւ ի յիշատակ Ալ-Ռուսաֆայի կորցրած պապենական կալուածքի՝ նոյն անունով մի դրախտանման պարտէզ է տնկել տալիս Կորդովայում, ուր Սիրիայից բերելով՝ աճեցնում է գեղեցիկ նռնենիներ, մարնջենիներ, ծաղիկների տարբեր տեսակներ: Սիրիայում թաքնուած իր քոյրերից մէկն էլ արմաւենու մի տնկի է ուղարկւում իրեն: Էմիրը հիմքն է դնում նաեւ Կորդովայի համբաւաւոր Մեծ Մզկիթի:

Բաղդադն իրենց նոր մայրաքաղաքը դարձրած Աբբասեանների նոր խալիֆան՝ Ալ-Մանսուրը, լսելով Աբդելռահմանի ողջ լինելու եւ Կորդովայի Էմիր հռչակուելու մասին, կատաղում է: Նա ամեն ջանք գործադրում է, որպէսզի իր վստահելի մարդկանց միջոցով ոչնչացնի նրան:

Մադրբում եւ Իսպանիայի հարաւում հաստատուած եմենցի արաբներն էլ դաւեր են նիւթում Էմիրի դէմ, քանի որ նա արգելել էր իրենց կողոպտել Կորդովան: Աբդելռահմանը դաժան հաշուեյարդարի է ենթարկւում նրանց: Նա ոչնչացնում է աւելի քան երեսուն հազար եմենցի զինուոր եւ հետզհետէ, վստահութիւնը կորցնելով բոլորի նկատմամբ, դառնում մեմակեաց ու կասկածամիտ մի բռնակալ: Չի խնայում նոյնիսկ իր սեփական որդիներից մէկին:

Ալ-Մանսուր խալիֆայի լրտեսներն ու կողմնակիցները Աբդելռահմանի դէմ մի մեծ դաւադրութիւն են կազմակերպում, որը սակայն ձախողութեան է մատնւում: Էմիրը գլխատել է տալիս դաւադրութեան բոլոր մասնակիցներին, իսկ նրանց ղեկավարի գլուխն էլ աղաջրի մէջ դնելով՝ մի գրութեան եւ Աբբասեանների սեւ դրօշի հետ

վաճառականների միջոցով ուղարկում է Բաղդադ: Ալ-Մանսուրը բացում է արկղը եւ, տեսնելով իր հաւատարիմ զօրապետի գլուխը, ահուդողի մատնուած բացագանջում է.

- Յազա՛ր գոհութիւն Ալլահին, որ իմ եւ այդ գիշատիչ վայրենու միջեւ ծովն է դրել իբրեւ սահման..

Յգօր էմիր Աբդելռահմանը հասել էր իր փառքի գագաթնակէտին եւ Արեւմուտքում վերականգնել Օմայեանների իշխանութիւնը, բայց նա ինքն իրեն մենակ էր զգում: Զրկուել էր ծնողներից ու բազմաթիւ հարազատներից: Իր անմիջական զինակիցներն ու նոյնիսկ օտարութեան մէջ ունեցած իր որդիները ձգտում էին իր իշխանութեանը եւ դրա համար էլ միմեանց դէմ պայքարում: Ուզում էին բարձր դիրքեր գրաւել՝ դրանց համար առանց անհրաժեշտ պատրաստութիւնն ու արժանիքը ունենալու: Ինքը՝ էմիրը, իր ապահովութեան համար ստիպուած էր վարձկաններից կազմուած մի բանակ պահել:

Այդ բոլորից բացի եւ ամենից շատ իր հեռաւոր ծննդավայրի կարօտը մաշեցնում էր իր սիրտը: Եւ այսպէս, մենաւոր իշխանը, հեռու բոլոր անցողիկ հաճոյքներից, իր ուժերը նուիրում է թէ՛ իր իշխանութեան ամրապնդմանը եւ թէ՛ արաբական Ալ-Ամուլուսի բարգաւաճման գործին: Ժամանակ է գտնում նաեւ իր սրտի յոյզերը թղթին յանձնելու: Կորդովա քաղաքի իր հոյակապ պալատում նստած՝ մտքով գնում է Արեւելք եւ գրում.

*Աւելի քան գեղատեսիլ պարտէզներն ու շքեղ դղեակները,
Ինձ համար հաճելի են անապատն ու վրանները:*

Կորդովայում էմիր Աբդելռահմանի իշխանութեան 32-րդ տարին էր: Նա իրեն չափազանց յոգնած էր զգում, իրեն թւում էր, թէ դարեր է ապրել: Այս ի՞նչ թշուառ աշխարհ է,- մտածում էր -, երբ չես կարողանում վստահել մարդ արարածին, որն ընդհանրապէս փոփոխամիտ է եւ ուժի, դիրքի ու արծաթի առջեւ քծնող, ստորացող:

Յուզուած ու մտախոհ նա մտնում է Ալ-Ռուսաֆայի պարտէզը, որը նոյնպէս շքեղ էր, ինչպէս Եփրատ գետի եզերքին իրենց ունեցած համանուն կալուածքը: Կանաչների միջից կարմրահաս նռները շռայլ գեղեցկութեամբ էին ժպտում, իսկ բուրումնաւետ վարդերը, գոյնզգոյն ծաղիկները կենսախինդ հմայքներով էին պարուրում մթնոլորտը: Դրանք բոլորն էլ էմիրի հայրենիքից՝ Սիրիայից էին բերուել, դրանց մէջ կար այդ երկրի բոյրն ու տենչը՝ մնալու դալար ու ծաղկուն: Բայց այս անգամ Աբդելռահմանի ուշադրութիւնը աւելի կենտրոնացնում է այն մենաւոր արմաւենու վրայ, որը Սիրիայից իրեն էր ուղարկել քոյրը: Տարիների ընթացքում այն երկնաւալաց կերպով աճել էր եւ էմիրի համար դարձել եղբայրական անփոխարինելի սիրոյ խորհրդանիշ: Անխարդախ սէրն է միայն այսպէս աճում,- մտածում էր նա -: Սէրն է միայն անկորնչելին. միայն նրանով են մարդկայնացնում սրտերը: Բռնութիւնն ու արիւնահեղութիւնը բորբոքում են ատելութիւնը մարդկանց միջեւ, գազանացնում են նրանց:

Աբդելռահմանը լուռ գրկում է արմաւենին եւ երկար ժամանակ մնում այդպէս քաղաքած:

Կեանքի մայրամուտին նա իր պալատի պատուհանից յաճախ նայում էր Ալ-Ռուսաֆայի ուղղությամբ: Այնտեղ աճած այդ մենաւոր արմաւենին դարձել էր իր մենաւոր գոյութեան անձայն խօսակիցը:

Ըստ պատմիչի հաղորդածի՝ Էմիրի մահից յետոյ, պալատի պատուհանի մօտ, գտնուել է նրա ձեռագիրը, որով նա դիմել էր արմաւենուն այս բառերով.

*Դու էլ ինձ պէս մոհաջիր ես այս օտար հողում,
Լեզու չունես, որ պատմես ցաւերդ անհամար,
Այլապէս քեզ կ'ասէի. գնա՛ ու հաղորդիր
Եփրատի ափերում ապրող քո քոյրերին,
Թէ ինչ բան է օտարութեան տառապանքը,
Եւ թէ ինչպէս դառն ճակատագիրն ու Աբբասը
Ինձ հալածեցին իմ հարազատ հայրենիքից:*

*Հասակ նետեցիր այն երկրում, ուր օտար ես,
Եւ ինձ նման ապրում ես լայնատարած աշխարհի
Ամենահեռաւոր այս անկիւնում տրտմալից:
Առաւօտուայ քաղցր ցօղը թող միշտ հովացնի
Կարօտակէզ քո սիրտը մեղմիկ օրօրներով,
Եւ թող աստղերը երկնային մխիթարեն քեզ...*

Մինչեւ այսօր, աւելի քան հազար տարի յետոյ, Կորդովա քաղաքի մերձակայքում, Աբդելռահման Էմիրի պարտէզում՝ Ալ-Ռուսաֆայում, այցելուն կը տեսնի մենաւոր արմաւենու կորիզներից աճած բազմաթիւ նոր արմաւենիներ, որոնք յիշեցնում են ոչ միայն Եփրատի գեղածիծաղ ափունքն ու Օմայեանների փառքը, այլեւ յատկապէս եղբայրական անարատ սէրն ու դրա պտղաբերումը: Իսկ մենաւոր իշխանի մասին էլ անջնջելի է մնացել պատմիչի հետեւեալ վկայութիւնը.

«Նրա ողջ կեանքն անցաւ պայքարների մէջ: Նա արիասիրտ էր եւ ամերկիւղ: Ոչ ոքի չէր վստահում, այլ միայն՝ իր սեփական իմաստութեանը: Ապստամբների ու թշնամիների նկատմամբ անողոք էր, բայց արդարի արիւն երբեք չհեղեց: Նա վայելուչ խօսքի վարպետ էր, գիտէր հոյակապ ոտանաւորներ հիւսել՝ նրբօրէն մտածուած եւ խորքով ուսանելի»:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

Մօնթվիստօ — Ուրուկուէյ

«Օ Վ Ը Ր Տ Ո Չ»

Խաղ՝ նուիրուած երիտասարդութեան

Խաղ՝ մէկ արարով

Գործող անձինք՝ Արա եւ Արա, ապա՝ Մայրը, Անի, Յակոբ եւ Հայկ

Վարագոյրը կը բացուի, մութ տեսարան: Բեմը գծուած Black Light գանկի ձեւաւորումով, իբրեւ Մահուան ճամբայ: Այնտեղ է արդէն մահամերձ վիճակի մէջ գտնուող Արան, թմրամոլ, տկար, հոգեպէս եւ մարմնապէս փճացած վիճակի մէջ, գերի՝ անորոշութեան, մահուան ուղին բռնած: Կը խօսի ինքն իր անձին հետ:

ԱՐԱ.- Ո՞վ է հոն...(Լռութիւն. ոչ մէկ պատասխան) հա՛ հա՛ հա՛. դո՛ւն ես, գիտեմ, դո՛ւն որ միշտ... գիտեմ... քեզի կ'ըսեն: Ո՛չ, ո՛չ, ոչ-ոչ ի՞նչ է, ի՞նչ... ո՞վ է հոն... հետո խօսիր: Որու ճիւղերուն ալ եթէ չես խօսիր... Մեռած չեմ, գնա՛, ժամանակ չունիմ, վերջին հոգս է՝ խօսեր ես թէ ոչ. գնա՛, դուն մարդ պիտի չըլլաս: Հըրըմ... ո՞վ է հոն (ջղային եւ բարկացած)

ԻՆՔ.- Ես եմ:

ԱՐԱ.- Հա՛... գիտեմ որ մէկը կայ:

ԻՆՔ.- Գիտեմ՝ գիտես:

ԱՐԱ.- Ինչպէ՞ս գիտես:

ԻՆՔ.- Որովհետեւ գիտեմ:

ԱՐԱ.- Ո՞վ է:

ԻՆՔ.- Ես եմ:

ԱՐԱ.- Ո՞վ:

ԻՆՔ.- Ես:

ԱՐԱ.- Ես՝ ո՞վ:

ԻՆՔ.- Դուն:

ԱՐԱ.- Դու՛ն, ի՞նչ դու՛ն, ո՞վ ես դուն:

ԻՆՔ.- Ես՞. ես «դուն» եմ:

ԱՐԱ.- Կատակ կ'ընես:

ԻՆՔ.- Ո՛չ:

ԱՐԱ.- Քեզի կ'ըսեն՝ դուն ո՞վ ես:

ԻՆՔ.- Քեզի կ'ըսեն ես «դուն» եմ:

ԱՐԱ.- Ի՞նչ դու, ինչե՛ր կը խօսիս, ինչպե՛ս:

ԻՆՔ.- Շատ պարզ է:

ԱՐԱ.- Ո՛չ, պարզ չէ, ինչպե՛ս կ'ըլլայ, որ ես «դու» եմ, ապո՛ւշ:

ԻՆՔ.- Որովհետեւ այդպէս է. (բարձր, բարկացած) շատ հեռուները մի՛ երթար, լա՛ւ դիտէ:

ԱՐԱ.- Ի՞նչը... ի՞նչ բան լաւ դիտեմ:

ԻՆՔ.- Դուն քեզ, դուն քեզ լաւ դիտէ, եւ կը գիտնաս ինքնութիւնս: Կը գիտնաս թէ դուն ո՛վ ես, եւ ե՛ս ով եւ ինչ եմ:

ԱՐԱ.- Ինչե՛ր կը խօսիս, ո՞ւր նայիմ, ինչի՞ն նայիմ:

ԻՆՔ.- Ինձի՛ նայիր:

ԱՐԱ.- Ո՞ւր ես դու, մէջտեղ եկուր, որ նայիմ:

ԻՆՔ.- Միշտ ալ մէջտեղ եղած եմ, լա՛ւ նայէ:

ԱՐԱ.- Կը նայիմ, բայց չեմ տեսներ, ո՞ւր ես:

ԻՆՔ.- Ուզածդ տես եւ չուզածդ մի՛ տեսներ:

ԱՐԱ.- Ո՞ւր ես դու, ո՞վ ես դու:

ԻՆՔ.- Նոյնինքն քու անձդ եմ ես, նոյնինքն դուն ես խօսողը: Ես քու անձդ եմ, նոյնինքն Արամ: Քու խիղճդ արդէն վաղուց մեռած է, իսկ հիմա իմ կարգս է մեռնելու: Միայն երկու ժամ, եւ կը բաժնուիմ կեանքէն: Երկու ժամ, որպէսզի վայելեմ կեանքը. մահուան դատապարտուած եմ:

ԱՐԱ.- Ո՞վ է դատապարտողը:

ԻՆՔ.- Դուն:

ԱՐԱ.- Ե՛ս, ինչպե՛ս թէ, ես ո՛ւր... դատաւո՛րը ուր, ես հազիւ աղբ կրնամ ըլլալ. ինչո՞ւ այդպէս դատապարտուած ես. ով գիտէ ի՞նչ յանցանք գործած ես:

ԻՆՔ.- Ինչո՞ւ դատապարտուած եմ: Այդ ինչ յիմար հարցում. դուն քեզ հայելիին մէջ դիտա՞ծ ես ... դուն քեզ...:

ԱՐԱ.- Հայելիի՞... հա, ի՞նչ կայ որ, կը նայիմ:

ԻՆՔ.- Արա, լաւ լսէ. զիս լսէ: Դուն կ'ապրիս միայն երկու ժամ, ապա կը վերածուիս նեխած միսի կտորի, նոյնիսկ ագռաւներ չեն կրնար ճաշակել. արիւնդ՝ սեւ, կեանքդ՝ սեւ, մտածելակերպդ՝ սեւ: Ի՞նչ ըրիր, Արա՛:

ԱՐԱ.- Ե՛ս: Բան չըրի. ի՞նչ կրնայի ընել:

ԻՆՔ.- Շատ էին քու ընելիքներդ, Արա՛, ի՞նչ լաւ էիր, կեանքիդ օրերը ի՞նչ լաւ էին...:

ԱՐԱ.- Ի՞նչ կեանքս, հըմ, չեմ յիշեր, բնաւ չեմ յիշեր:

ԻՆՔ.- Ինչպե՛ս թէ չես յիշեր:

ԱՐԱ.- Անկեղծօրէն չեմ յիշեր, Աստուա՛ծ վկայ:

ԻՆՔ.- Լսէ՛, ստախօս, շատ լաւ ալ կը յիշես, ես գիտեմ, նոյնիսկ դուն քեզի կը ստես, մոռցա՞ր որ ես «դու» եմ:

ԱՐԱ.- Հա՛... յիշեցի:

ԻՆՔ.- Լա՛ւ յիշէ:

(Պատտառի վրայ յիշատակի լաւ օրերու ֆիլմ մը կը ցուցադրուի՝ Արայի, իր շրջանակի ընկերներու եւ ընտանիքի անցեալէն: Մինչ այդ «ինք» կը յիշեցնէ եւ կը շարունակէ խօսիլ Արայի հետ):

ԻՆՔ.- Հոս էր որ դուն պարկեշտ կեանք կը վայելէիր: Լաւ մարդոցմով շրջապատուած էիր. սկաւտական, եկեղեցական, մարզական, մշակութային, գրական զբաղումներ ունէիր. այս էիր դու, Արա՛:

ԱՐԱ.- Յը... (խնդրաբար, ծաղրանք) հա... ես եմ, հոն ամեն ինչ կա՞ր:

ԻՆՔ.- Յոն ամեն ինչ կար եւ ունէիր, հիմա ի՞նչ ունիս:

ԱՐԱ.- Անին ունիմ:

ԻՆՔ.- Ամօ՞թ, դուն մեծ ամօթ մըն ես մարդկութեան, մեծ դեւ մըն ես դրկուած, դուն որ ազգասիրութիւն կը քարոզէիր, դուն, որ օտար ամուսնութեան դէմ էիր, դո՛ւն, որ պայքարող մըն էիր ի նպաստ Յայկական դատին, դուն որ կ'աղօթէիր հայութեան համար, դուն, որ կը բացագանչէիր՝ «հպարտ եմ հայ ըլլալու համար», դուն...:

ԱՐԱ.- Վե՛րջ...: Չեմ դիմանար, վերջ... ի՞նչ կ'ուզես ինձմէ, ձգէ զիս առանձին, իմ վիճակիս: Եկած ես տանջելո՞ւ:

ԻՆՔ.- Ես չեմ եկած, այլ դուն կանչեցիր:

ԱՐԱ.- Ես ոչ ոք կանչած եմ, բացի Անիէն:

ԻՆՔ.- Անին, հա՛ Անին, գիտեմ Անին:

ԱՐԱ.- Դուն ոչինչ գիտես:

ԻՆՔ.- Այո՛, գիտեմ. դուն «ես» եմ, մոռցա՞ր:

ԱՐԱ.- (Բարկացած) Ո՛չ, չեմ մոռցած, գնա՛, հեռացիր ինձմէ, ի՞նչ կ'ուզես ասկէ աւելի, տառապի՞լս կ'ուզես, գնա՛, գնա՛ կ'ըսեմ քեզի:

ԻՆՔ.- Ո՞ւր երթամ, ինչո՞ւ երթամ, առանձին չեմ կրնար տեղ երթալ:

ԱՐԱ.- Գնա՛, բաժնուի՛ր ինձմէ, հեռացիր, մեռի՛ր այլեւս, կը բաւէ ինձի պատճառած տառապանքդ: Յեռացիր:

ԻՆՔ.- Sorry, չեմ կրնար, պէտք է որ Անին սպասեմ:

ԱՐԱ.- Կը սպաննեմ քեզ, եթէ ձեռքդ Անիին վրայ դնես:

ԻՆՔ.- Դուն, հա՛-հա՛-հա՛...(Կը խնդայ ծաղրով) Եթէ ձեռքս Անիին դաչի, դուն... սպաննե՞ս:

ԱՐԱ.- Այո՛, կը սպաննեմ, փորձէ եւ տես:

Ինք.- Դուն որ թաղի քիւրտերուն ծանօթացուցիր քու սիրուիդ, որպէսզի սիրաբանութեան փոխարէն քեզի ասեղ մը մորֆին ապահովէ, դուն, որ այլազգիներուն հետ ընկերութիւն ըրիր, Անին ալ սիրաբանութիւններով վերածուցաւ բոզի, որ դրամ եւ մորֆին կ'ապահովէ քեզի, հիմա եկեր ես ինձի կ'ըսես որ պիտի սպաննե՞ս. ամօթ: Արա՛, Անին հայ է. հայ: Շատ պարկեշտ եւ ազնիւ Անին, բոզի վերածեցիր քու պահանջներուդ եւ անձնասիրութեանդ համար, օգտագործեցիր: Արա՛, ամօթ, դուն մեծ ամօթ մըն ես հայութեան: Յայերու անմեղ, սուրբ ու պատուաւոր արիւնը խաթարեցիր մորֆինով՝ Անին դարձնելով օտարներու եւ վատ սերածներու առարկան: Արա՛, այսպէսով հայը իր ինքնութիւնը պիտի կորսնցնէ. դուք հայ ըլլալու իրաւունք չունիք, ամօթ...:

ԱՐԱ.- Վերջ, կը բաւէ, պիտի խեղդուիմ:

ԻՆՔ.- Ի՞նչն է որ կը բաւէ, իմ խօսածս դեռ ոչինչ է քու ոճիրներուդ դիմաց:

ԱՐԱ.- Գնա՛, գնա՛, կ'ըսեմ:

ԻՆՔ.- Ըսի, չէ՞, Անին պիտի սպասեմ:

ԱՐԱ.- Իրաւունք չունիս, կորսուիր սատեղէն, հոս իմ տեղս է: Յոս հանգիստ եմ, առանձին:

ԻՆՔ.- Գիտեմ, Անին քեզ կը հոգայ, ան ճանչցուած հանրածանօթ բոզ մը դարձած է:

ԱՐԱ.- Լռէ՛, լեզուդ կը կտրեմ, դո՛ւն ես բոզը, Անին իմ սուրբս է, հրեշտակս է:

ԻՆՔ.- Զրեշ մը՝ ասոր եւ անոր տակը պառկող:

ԱՐԱ.- Չփորձուիս, իմ միակս է:

ԻՆՔ.- Գիտեմ, միակդ, առանձնացած. երես չունիս դիտելու նոյնիսկ դուն քեզ, հայելիին դիմաց կանգնելու համարձակութիւն չունիս. նախ տես ինչ վիճակի ես հասած:

ԱՐԱ.- Զա, ի՞նչ կայ որ: Զիմա կը նայիմ:

ԻՆՔ.- Ո՞ւր պիտի նայիս, հայելի չունիս:

ԱՐԱ.- Վաղը կը նայիմ:

ԻՆՔ.- Վաղը արդէն ուշ կ'ըլլայ: Շատ ուշ: *(Պատահական վրայ կը ցուցադրուի Արայի անկումը թմրեցուցիչի կեանքի մէջ, թմրեցուցիչի օգտագործման պատկերներ հայկական թաղերու անկիւնները, գիշերային ակումբներու եւ տումերու մէջ):*

ԻՆՔ.- Ո՞ւր գացիր, Արա:

ԱՐԱ.- Զը... հոս եմ, հոս:

ԻՆՔ.- Ե՛լ, ոտքի՛ ել, կը բաւէ տապալակիս այլեւս:

ԱՐԱ.- Ո՞ւր երթամ, ի՞նչ ընեմ, ծնողքէս հեռացած-բաժնուած, այս վիճակին ինկայ. փորձեցի ուրիշ աշխարհ ունենալ, կարծեցի թէ ուրախ պիտի մնամ, համոզուիլ, թէ մէկ անգամ աշխարհ եկած եմ եւ ինչու չվայելեմ, ուզածիս պէս չապրիմ, խաբուեցայ, բայց արդէն ուշ էր: Կը վախճանայի վիճակիս մասին պատմելու ընկերներու, հարազատներու, Զայկին, Յակոբին: Այո՛, Յակոբը լաւ ընկեր է, դժուար է լաւ ընկեր ունենալ, բայց շատ դիւրին է կորսնցնել: Արդեօք ո՞ւր է հիմա, ի՞նչ կ'ընէ, լուր չունիմ:

ԻՆՔ.- Տղաքը միշտ ալ փորձած եմ քեզի օգնել, բայց դուն մերժած ես, խայտառակած ես զանոնք օտարներուն առջեւ, հաւատալով որ քու ըրածդ շիտակ է:

ԱՐԱ.- Թող ներեն:

ԻՆՔ.- Վասն ինչի՞ պիտի ներեն քեզի: Դուն արդէն դատապարտուած ես «մահուան»:

ԱՐԱ.- Մահուա՞ն:

ԻՆՔ.- Այո՛, մահուա՛ն:

ԱՐԱ.- Ես ինչո՞ւ քու հետդ կը խօսիմ, չե՛մ կրնար շարունակել, մորֆինս ուշացուց այդ բոզը, ի՞նչ կ'ընէ, ո՞ւր մնաց, ամբողջ քաղաքին հետ պիտի պառկի որ Guinness book-ի մէջ իր անունը արձանագրէ:

ԻՆՔ.- Զրեշտակդ բո՞զ է:

ԱՐԱ.- Դուն լռէ՛, չեմ դիմանար *(Արա դողալով եւ տառապելով թմրեցուցիչ կը փնտռէ. վախցած):* Ո՞ւր գացիր, խօսի՛ր ինծի հետ, բան մը ըսէ, ներկաս մի՛ պատմեր ինծի: Խօսիր հին եւ լաւ յիշատակներու մասին, ես արդէն մոռցած եմ: Պատմէ՛, կը խնդրեմ:

ԻՆՔ.- Արա:

ԱՐԱ.- Ո՞վ է:

ԻՆՔ.- Տակաւին ես եմ:

ԱՐԱ.- Ի՞նչ է քու անունդ:

ԻՆՔ.- Արա:

ԱՐԱ.- Այո՞:

ԻՆՔ.- Արա:

ԱՐԱ.- Այո՛, ըսի:

ԻՆՔ.- Արա, Արա է իմ անունս:
 ԱՐԱ.- Ինչպե՞ս կ'ըլլայ որ քու անունդ ալ Արա է, դուն ալ ինծի պե՞ս ես, գործածող ես:
 ԻՆՔ.- Որովհետեւ ես Արան եմ, եւ Արան ինչ որ ընէ ես ալ նոյնը կ'ընեմ:
 ԱՐԱ.- Ո՞վ է քեզի վարժեցնողը:
 ԻՆՔ.- Դուն:
 ԱՐԱ.- Ե՞ս, ե՞ս, հա-հա-հա, վրաս կը խնդաս, ես նոյնիսկ քեզ չեմ ճանչցած, ինչպե՞ս
 վարժեցնեմ:
 ԻՆՔ.- Որովհետեւ քեզմով սկսած է ամէն ինչ:
 ԱՐԱ.- Ամէ՞ն ինչ (մտածկոտ եւ խորամանկութեամբ) այսինքն դուն ալ գործածող
 ես: Զը՛մ... քովդ ունի՞ս երկու կրամ մը:
 ԻՆՔ.- Ուրիշին տուի. լաւ գին վճարեց:
 ԱՐԱ.- Որո՞ւ տուիր:
 ԻՆՔ.- Անիին, անկողինիս մէջ էր. լաւ եւ փորձառու է: Արդէն կրնամ ըսել արիեստա-
 վարժ է:
 ԱՐԱ.- Լռէ՛, կորսուէ՛ սատեղէն: Անկիրթ, հեռացի՛ր այլեւս, Անին իմ սուրբս է...:
 ԻՆՔ.- Անիս իմ հրեշտակն է, հոգիս է... գիտեմ, գիտեմ, մինչեւ այն ատեն որ պէտք
 ունիս իր աշխատանքին:
 ԱՐԱ.- (Մտելով) Ինչո՞ւ ուշացաւ:
 ԻՆՔ.- Ամօթ:
 ԱՐԱ.- Ես վերջացած եմ, ետդարձ չունիմ, հոս է որ պիտի մարի իմ նեխած կեանքս:
 Ուզած եմ փորձել ամէն ինչ: Այս կեանքին լաւն ու վատը ճաշակեր եմ: Սա-
 կայն ասիկա միակ բանն է որուն ետդարձը մահ է, արդէն տեսար ուր հասեր
 եմ: Ուշացած եմ, վերջին անգամն է թերեւս, որ կ'ուզեմ գործածել, որպէսզի
 հանդարտ ննջեմ: Վստահ եմ, որ Անին պիտի վերադառնայ բերելով ճերմակ
 փոշին:
 ԻՆՔ.- Ինչո՞ւ վստահ ես. Անին արդէն զգուած է քու հրահանգներէդ, անոր կեանքը
 դժոխք դարձուցիր:
 ԱՐԱ.- Վստահ եմ, որովհետեւ կը սիրենք զիրար:
 ԻՆՔ.- Դուն ի՞նչ գիտես սիրելն ի՞նչ է:
 ԱՐԱ.- Ե՛ս եմ որ գիտեմ:
 ԻՆՔ.- Դուն բա՛ն մըն ալ չես գիտեր:
 ԱՐԱ.- Ճիշդ ես, բան չեմ գիտեր, եթէ գիտնայի հոս չէի հասներ: (Պատտառի վրայ կը
 ցուցադրուի Արայի լաւագոյն յիշատակը: Արա 7 տարեկան է, տարեդարձը
 կը տօնէ, Արայիկէն կը խնդրուի իր սորված բանաստեղծութիւնը արտասա-
 նել ներկաներուն: Արա կ'արտասանէ Աւետիք Իսահակեանի «Մօր Սիրտը»,
 վերջաւորութեան մայրը կը գրկէ Արայիկը եւ կը համբուրէ):

ՄՕՐ ՍԻՐՏԸ

(Հայկական աւանդավէպ)

Կայ հինաւուրց մի գրոյց,
 Թէ մի տղայ,
 Միամօրիկ,
 Սիրում էր մի աղջկայ:
 Աղջիկն ասաւ - «Ինձ բնաւ

Դու չես սիրում,
Թէ չէ՝ գնա՛,
Գնա՛ մօրդ սիրտը բեր»:
Տղան մոլոր, գլխիկոր
Քայլ առաւ,
Լացեց, լացեց,
Աղջկայ մօտ ետ դառաւ:
Երբ նա տեսաւ, զայրացաւ.
- «Է՛լ չերեւաս
Շէմքիս», ասաւ,
«Մինչեւ սիրտը չբերես»:
Տղան գնաց եւ որսաց
Սարի այծեամ,
Սիրտը հանեց,
Տուեց աղջկան:
Երբ նա տեսաւ, զայրացաւ.
- «Կորի՛ր աչքէս,
Թէ հարազատ
Մօրդ սիրտը չբերես»:
Տղան գնաց՝ մօրն սպաննեց,
Երբ վազ կը տար,
Սիրտը՝ ձեռքին,
Ոտքը սահեց, ընկաւ վար:
Եւ սիրտը մօր ասաւ տխուր
Լացակումած.-
- «Վա՛յ խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չը ցաւա՞ց...»:

ԻՆՔ.- Լաւ յիշատակներ են: Սիրուած Արան:
ԱՐԱ.- (Կ'արտասանէ «Մօր Սիրտը» յուզուած)

Եւ սիրտը մօր ասաւ տխուր
Լացակումած.-
«Վա՛յ խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չը ցաւա՞ց...»:

ԻՆՔ.- Չես մոռցած:

ԱՐԱ.- Մայրս ինչպէ՞ս մոռնամ, միակ իտեալ անձն էր, որ ինձի ուժ տուած էր շարունակելու իմ առաքելութիւնս: Ազգասիրութեամբ, ուրախութեամբ ուրիշը ուրախացնելով, գնաց տանելով հետը ամէն ինչ, նոյնիսկ սիրտս:

ԻՆՔ.- Ի՞նչ կ'ընես:

ԱՐԱ.- Վերջինը թող ըլլայ (առնելով մորֆինի սրուակը, ինքզինք սրսկելու ժամանակ ձեռքը դողալով գետին կը ձգէ եւ կ'իյնայ ծունկերուն վրայ, արցունքը աչքերուն դէպի վեր նայելով: Կը լսուի փոքրիկն Արայի ձայնով արտասանութիւնը («Մօր Սիրտը»): Արան սառած վեր կը նայի):

ԻՆՔ.- Ի՞նչ ունիս Արա:

ԱՐԱ.- (Յուզումով) Ոչինչ (գետինը՝ ծունկի եկած դողալով, շնչասպառ), գիտե՞ս այսօր ինչ օր ենք:

ԻՆՔ.- Այո՛, գիտեմ:

ԱՐԱ.- Այսօր մօրս ծննդեան տարեդարձն է (ոտքի ելլելով, կը մօտենայ սեղանին, անոր վրայ դրուած վառած մոմը կը բռնէ եւ վերցնելով իր շրթունքին մօտ՝ կ'երգէ) Happy Birthday մամա Happy Birthday անուշիկ մայրիկ: Ներէ՛: (Մոմը կը մարէ, լոյսերը կը մարին մոմին հետ եւ մօտաւորապէս 5 երկվայրկեան ետք բեմը կը լուսաւորուի ամբողջութեամբ: Արա կ'արթննայ պռռալով):

ԱՐԱ.- Ո՛չ: (Ձեռքի կարկանդակը բռնած ներս կը մտնէ մայրը, նոյն տեսարանը որ ֆիլմին մէջ տեսնուեցաւ, ներս կը մտնեն նաեւ Հայկը, Յակոբը եւ Անին՝ երգելով Happy Birthday Արա):

ԱՐԱ.- (Մոմը մարելով) Անպակաս ըլլաս մեր գլխուն վերեւ, մայր...:

(Վերջ)

Պէյրուս, 10 Հոկտեմբեր 2008



ՅԱՐՈՒԹ ՇԷՔԷՐՃԵԱՆ ծնած է 23 Յուլիս 1976-ին, Պուրճ Համուտ, Լիբանան: Աւարտած է Հայ Կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանը: 1994-էն սկսեալ, դերասանական իր շնորհներով հանդէս եկած է Համազգայինի «Գասպար Իփէքեան» թատերախումբի զանազան բեմադրութիւններուն մէջ:

ՀԵՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՐԴԻ ՀԱՅ ՎԷՊԸ

Ֆլոբերի յայտնի խոստովանութիւնը կայ. «Տիկին Բովարին այդ ես եմ»: Կաֆկայի մտքերն է մի առիթով մէջբերում գրականագէտը. «Գրում եմ այլ կերպ, քան խօսում եմ, խօսում այլ կերպ, քան մտածում եմ, մտածում այլ կերպ, քան պիտի մտածեմ, եւ այդպէս շարունակ մինչեւ ամենամութ խորքերը»¹: Մի կողմից տեքստում հեղինակի ներկայութեան հաւաստումն է, միւս դէպքում՝ տեքստից հեղինակի ինքնօտարման աստիճանակարգը: Բայց առաջին դէպքում հերոսը՝ տիկին Բովարին, վէպի շարահիւսման ձեւի մէջ հեղինակի հետ նոյնանալու յայտանիշներ չունի, իսկ երկրորդում՝ Կ-ն կամ Եոզէֆ Կ-ն հեղինակի անուան զուգահեռն են մղում: Վէպի ժանրային առանձնայատկութիւններից մէկը նրա համաժամանակեայ բնոյթն է, երբ համընկնում կամ մերձենում են հերոսի ու հեղինակի ժամանակները, դրա ձեւական լուծումներից մէկն էլ հեղինակի ուղղակի կամ անուղղակի ներկայութիւնն է տեքստում: Հեղինակի եւ տեքստի փոխյարաբերութիւնների մասին Ֆլոբերի ու Կաֆկայի վերաբերմունքն ընդգծող այս երկու սահմանումները առաջին հայեացքից հակադրում են միմեանց, սակայն նրանց վէպերի ընթերցումը կը փաստի, որ տարբերութիւնը զուտ նախընտրելի ձեւերի մէջ է, առաջինը փորձում է մօտենալով իր ստուերին, ջնջել իրենց միջեւ եղած հեռաւորութիւնը ու համընկնելով նրա հետ՝ յաղթահարել այն, երկրորդը՝ ընդհակառակը, փախչում է իր ստուերից՝ փորձելով «ամենամութ խորքերում» յայտնուելով՝ ազատուել նրանից: Ֆլոբերը փաստում է իր անուղղակի ներկայութիւնը, Կաֆկան՝ փորձում հերքել իր ուղղակի ներկայութեան հանգամանքը: Վէպի հերոս կամ տեքստի բնակիչ է դառնում նմանակը, ով իր մէջ ամփոփում է ներկայութիւնը՝ անկախ նրա ուղղակի կամ անուղղակի լինելու հանգամանքից:

Մի առիթով մէջբերելով Օրտեգա-ի-Գասէթին՝ խօսել ենք ժամանակակից վէպի հերոսի ու հեղինակի համընկնումի տարածուած օրինաչափութեան մասին, երբ տեքստի կենտրոնը դառնում է հեղինակային եսը, եւ նրա անունից ու նրա միջոցով է շարահիւսումն պատումը²: Մէջբերեմ մեր վիպասաններից մէկի՝ Նորայր Ադալեանի «Համաճարակ» վէպից մի հատուած. «Մոռացայ ասել, որ գլխաւոր հերոսը ես եմ...», իսկ շարունակութեան մէջ. «Ես էլ ես չեմ, հաւատացեք, ես էլ դու ես, նա է, միւսները, մօտիկ եւ հեռու օտարներ՝ մտերմացած ժամանակի շունչ ու բարոյականութեամբ»: Մի կողմից վէպի շարահիւսման կերպը՝ առաջին դէմքով պատումը, հաստատում է տարածուած օրինաչափութիւնը, միւս կողմից մէջբերուած բացատրութիւնները մօտաւորապէս կրկնում են Ֆլոբերի ու Կաֆկայի խոստովանութիւններից մակաբերուած նմանակի մասին մեր ենթադրութիւնը: Թէեւ հեղինակային ներկայութեան էութիւնը պահպանում է, բայց ձեւական առումով առաւել յստակ յայտանիշներով: Հեղինակը չի ստեղծում տիկին Բովարիին ու յետոյ խոստովանում, թէ այդ կերպարը հենց ինքն է, երրորդ դէմքով շարահիւստուածքի

մէջ չի տալիս անուանակցի հետ զուգահեռելու խայծը, այնուհետեւ՝ «թաքցնում» ուղղակի ներկայութիւնը: Պարզապէս վէպի հերոս է դառնում հենց հեղինակային եսը, իսկ պատմութիւնը՝ պատմւում առաջին դէմքով: Բայց արդեօք հեղինակի նման ներկայութիւնը չի դառնում նաեւ նրա «մահախօսականը»: Եսի պատումի աւարտը նաեւ նրա հետեւում կանգնած հեղինակի լռութեան սկիզբն է, քանի որ վերանում է ֆլոբերեան ու կաֆկայական յետգրային միջամտութիւնների անհրաժեշտութիւնը: Եսն այլեւս ոչ թէ հեղինակն է, այլ ընթերցողի հերոսը, ում գործողութիւնների ու ասելիքի սահմանն աւարտւում է տեքստային տարածութիւնում: Ռոլան Բարթը այսպէս է ձեւակերպում. «Ընթերցողի ծնունդը պէտք է փոխհատուցուի Հեղինակի մահուամբ»³: Անշուշտ, այս օրինաչափութիւնը տարածուած է, բայց միակը չէ:

Եթէ ժամանակակից վէպը համեմատենք ժանրի նախընթաց օրինակների հետ, ապա ընդհանրութեան մէջ աչքի կը զարնի մի հետաքրքիր օրինաչափութիւն եւս, այն է՝ հերոսների կամ գործող անձանց թուի կտրուկ կրճատումը: Ժանրը տարբերակելու համար ժամանակին, ասենք՝ 19-րդ դարում, կարելի էր նման կոպիտ հաշուարկ կատարել. այլեւայլ առանձնայատկութիւններից բացի վէպը ի տարբերութիւն փոքր արձակի ունէր հերոսների աւելի լայն շրջանակ, եւ պատմուածքն ու վիպակը գործող անձանց թուով չէին կարող համեմատուել վէպի հետ: Սա, անշուշտ, հիմնական օրինաչափութիւնն էր, որը գերծ չէր այլեւայլ բացառութիւններից: Ժամանակակից վէպն այսօր կարծես թէ ազատուել է հերոսների բազմաքանակ բոյլից, եւ այս առումով գերբնակեցուած քաղաքի փոխարէն, ժանրը աւելի շուտ անմարդաբնակ կղզի է յիշեցնում, ուր պատահմամբ կարող են մի քանի հոգի յայտնուել (այս օրինաչափութիւնը եւս բացառութիւններ ունի): Հերոսների կրճատման այս միտումը յիշեցնում է շեքսպիրեան ողբերգութիւնների ընթացքը, ասենք՝ «Համլէտը», զարգացման տրամաբանութեամբ տեքստը լքում են Պոլոնիոսը, Օֆելիան, Լայերտը, Գերտրուդը, Կլավդիոսը եւ վերջապէս Համլէտը, արդիւնքում մնում է Հորացիոն, ով ոչ հերոս է, ոչ հակահերոս, այլ պարզապէս գործող անձ: Ժամանակակից վէպի «հերոսը» (աւելի ճիշդ կը լինի ասել գործող անձը կամ բնակիչը) դառնում է Հորացիոն: Ժենեա Քալանթարեանը, անդրադառնալով գրականութեան տարբեր շրջափուլերում «տիրապետող անձնաւորութեան» մասին Հիպոլիտ Տենի տեսութեանը, նկատում է. «Տենի «տիրապետող անձնաւորութիւնը» ժամանակակիցների իտէալն էր, նրանց սիրոյ եւ հիացումների առարկան, իսկ մեր ժամանակի հերոսը հազիւ թէ յաւակնի իտէալի պատւանդանին բարձրանալու»⁴: «Դարամուտի գրական հերոսի» առանձնայատկութիւնները քննող այս յօդուածում Քալանթարեանը գտնում է որոշակի ընդհանրական գծեր, այն է՝ ընտանիքի ու մերձաւորների հետ կապերը թուլացրած միայնակ մարդ, հասարակական էակի փոխարէն՝ կենսաբանական էակ, յստակ իտէալներ ու ձգտումներ չունեցող, անորոշութեան ու ինքնակորուստի եզրին յայտնուած եւ ինքնաորոնման մէջ խճճուած անհատ եւ այլն⁵: Ազատ անհատի կերպաւորման ճանապարհին գրողը յաճախ օգտւում է «ժամանակի հերոսներից», որոնք պայմանականութիւնները չհանդուրժող իրենց վարքագծով խորհրդանշ են դարձել ժամանակակիցների համար, այսպէս՝ Վահագն Մուկնեցեանի «Տաբու» վէպում կերպաւորւում է 1960-70-ականների բոհեմական շրջանակների ամենախռովարար ու պայմանականութիւնների հետ չհաշտուող «հերոսը»՝ Սլաւիկ Զիլոյեանը: Հասարակական կեանքից մեկուսացած կերպարի բացայայտումների կարեւոր ասպարէզ է դառնում սեռական կեանքը, ընդ որում՝ բաց տեսարանների յաճախակի նկարագրութիւնները դառնում են հերոսի օտարման հաստատումները: Տարածուած մի-

տուներից է նաեւ հերոսների անուանագրկումը, երբ գործող անձանց անուններին փոխարինում են նրանց սեռը, մասնագիտութիւնը, կարգավիճակը ընդգծող փոխանունութիւնները (Վահրամ Մարտիրոսեան «Սողանքներ», Սեւակ Յովհաննիսեան «Ինքը» եւ այլն): Սրանով հեղինակները մի կողմից ընդգծում են կերպարների օտարութիւնը, միւս կողմից ընթերցողին հնարաւորութիւն տալիս սեփական միջավայրում փնտռել ու անուանել նրանց:

Պայմանաւորուած հեղինակային եսի ներկայութեան հանգամանքով՝ ժամանակակից հայ վէպի տարածուած եւ յաճախ կերպաւորուող հերոս է դառնում մտաւորականը՝ գրող, դերասան, նկարիչ եւ այլն (Գուրգէն Խանջեան «Նստիր Ա գնացքը», «Լուր չկայ», Լեւոն Խեչոյեան «Սեւ գիրք, ծանր բզէզ», Ռազմիկ Դաւոյեան «Եթէ Աստուած կամենայ», Վաչագան Գրիգորեան «Ջանգու», Սօս Սարգսեան «Ընդհատում» եւ այլն): Սակայն վիպական սիւժէ եւն դառնում ոչ թէ ստեղծագործող հերոսի որոնումները, այլ ստեղծագործական ճգնաժամը՝ գրողը ռազմի դաշտում կամ թափառումների մէջ, դերասանը հասարակական ու քաղաքական խմորումների յորձանուտում, նկարիչը քննչական հետապնդումներից խուսանալու ու շնակռիւների թամաշաներում վատնուելու անշնորհակալ գործում եւ այլն: Վաչագան Գրիգորեանի «Ջանգու» վէպում նման մի խոստովանութիւն կայ. «Տղայի պատմութիւնը գրի առածը ցաւեցրեց գրողներին եւ զգաց, որ գիրք գրելու հիւանդութիւնը իրեն լքում է, ինքն էլ չէր ցանկանում գրող լինել, չէր ցանկանում կախաղան բարձրացողների շարքում լինել, չէր ցանկանում քարաւանի վրայ երկար հաջելուց յոգնած շան նման լռել սուրճի բաժակի շուրջ»: Լեւոն Խեչոյեանը իր պատմութեան վերջերի մէկում գտել է գրող-մտաւորականի ստեղծագործական ճգնաժամը վերհանող վերնագրային ընտիր լուծում-բանաձեւը. գրողի մասին պատմող սիւժէն վերնագրուած է՝ «Լրագրողը»:

Հետաքրքիր փոփոխութիւններ է կրել նաեւ ժամանակակից պատմավէպի հերոսը: Արքաների, հոգեւորականների ու սպարապետների ստուերում կերպաւորուող «սովորական» մարդկանց խմբերը, որ խորհրդային շրջանում օգտագործւում էին այսպէս կոչուած «ժողովրդական տարերքը» մարմնաւորելու համար, անկախութեան պատմավէպի մէջ հիմնականում ազատուել են գաղափարական դրօշակակրի իրենց գործառնոյթից: Կերպաւորուող արքաները, հոգեւորականներն ու սպարապետներն աւելի շուտ անցեալի հերոսական միջոց պսակագերծողներ են, քան օրինակելի առաջնորդներ: Այս միտումի վերնագրային բանաձեւումը գտնուել գործում եւս մեծ է Լեւոն Խեչոյեանի դերը, նրա պատմավէպում՝ «Արշակ արքայ, Դրաստամատ ներքինի», ներքինու անունը յայտնուել է արքայի անուան կողքին, եւ պատճառն ամենեւին ներքինու դերի արհեստական բարձրացումը չէ, այլ՝ արքայի ապահերոսականացումը: Նոր պատմավէպում կերպաւորուած հոգեւորականը ոչ առաջնորդ է, ոչ էլ դաւաճան, իսկ եթէ դաւաճանում էլ է, ապա ոչ թէ իր հայրենիքին, այլ պարզապէս սեփական կնոջը (Վահրամ Մարտիրոսեան «Յանուն խաչի ծպտուածները»): Սպարապետն էլ ինքնադրսելուում է ոչ թէ ռազմի դաշտում հերոսանալով, այլ ռամիկի աշխատանք կատարելով (Պերճ Զեթունցեան «Գողացուած ձիւնը»): Փաստօրէն, հերոսի կատեգորիան՝ որպէս որոշակի իտէալների մարմնաւորող, ձեւափոխւում է ոչ միայն իրականութեան վիպումով, այլ նաեւ պատմութեան վերընթերցմամբ: Պատմավէպի հերոսների շրջանակը թարմացուել է նաեւ նոր թեմաների վիպումի շնորհիւ, այսպէս՝ Զորայր Խալափեանի ու Արծրուն Պեպանեանի պատմավէպերի միւթը Հռոմի ու Բիւզանդիայի կայսերական շրջանակներն են, հայ պատմավէպի հերոսներ են դառ-

նում Վասիլ Մեծը, Ալեքսանդր Մակեդոնացին, Խուլիոս Կեսարը, Կալիգուլան եւ այլոք: Սրանց կերպաւորումն էլ ընթանում է նոր ժամանակների ոգուն համահունչ, այն է՝ իտէ-ալական հերոսի միջը քողազերծելու երկրաչափութեամբ:

Վիպական սիւժէի կենտրոն են դառնում նաեւ «մեր ժամանակի հերոսները»: Վահագն Գրիգորեանի «Առաջնորդի կեանքն ու մահը» երգիծական վէպի երկու գլխաւոր կերպարները քաղաքական աւանտիւրիստն ու նրա վարորդն են: Սրանց յայտնուելը վիպական հանգոյցում գուցէ գեղարուեստական նոր յայտնութիւններով չի պսակուել, սակայն մեր իրականութիւնը պսակազերծող տիպական դէմքերին է գրական քաղաքացիութիւն տուել: Հետաքրքիր են նաեւ ներկայի եւ ոչ վաղ անցեալի վաւերական մարդկանց յայտնուելը ժամանակակից վէպում: Այս առումով ամենայիշարժանը Արմէն Շէկոյեանի «Հայկական ժամանակ» վէպն է: Հեղինակը ոչ միայն չի յօրինում իր հերոսներին, այլ նաեւ դրա կարիքը չունի, որովհետեւ նրանցից շատերին ճանաչում է նաեւ ընթերցողը: Շէկոյեանի զրուցակից-հերոսները նաեւ ընթերցողի հերոսներն են, ինչպէս Միքէլ Մկրտչեանը, Ազատ Շերենցը, Լեւոն Ներսիսեանը եւ այլոք: Վաղ թէ ուշ «Հայկական ժամանակ» անաւարտ վէպի հերոս դառնալու հնարաւորութիւն ունի իւրաքանչիւրը, ով շփուել կամ շփուում է հեղինակի հետ ու տպաւորուել է նրա յիշողութեան մէջ: Այսպիսով՝ Շէկոյեանի վէպի հերոսների խնդիրը լուծում է ոչ միայն եւ ոչ այնքան հեղինակը, որքան՝ հենց ինքը՝ ընթերցողը, որոնցից ոմանք նոյնիսկ շտապեցնում են հեղինակին կամ «առաջ գծում» վէպում իրենց յայտնուելու ժամանակը: Ռուլան Բարթը կ'ասէր. «... նա (*հեղինակը՝ Վ. Դ.*) ամենեւին էլ այն ենթական չէ, որի ստորոգեալը նրա գիրքը լինէր. չկայ այլ մի ժամանակ, քան շարադրանքի ժամանակը եւ ամենայն տեքստ գրւում է այստեղ եւ այժմ»⁶:

Վիպական հերոս մարմնաւորելու մտահոգութիւնից անդին է կարծես ստեղծուած Վարուժան Այվազեանի վիպագրութիւնը: Եթէ փորձենք հերոսին կամ գործող անձին մօտ ինչ-որ բան տեսնել Այվազեանի վէպերում, ապա, անշուշտ, սկզբում պիտի ապահովագրենք մեզ վրիպելու մեծ հնարաւորութիւնից՝ ասելով, որ եթէ առաջին՝ «Ճանճի ամիսը» վէպում տեթեքքիւ բարալիկ սիւժէի ներհիւսումը գործող անձանաց նշմարելու ինչ-ինչ խայծեր տալիս է, ապա երկրորդ՝ «Համեմատական կենսագրութիւններ» վէպում, այս խայծն էլ է դժուար նշմարելի: Հերոսի կամ գործող անձի գործառոյթը Այվազեանի վէպերում, իմ տպաւորութեամբ, իրենց վրայ են վերցնում անձնանունները, որոնք մի տեսակ չշարադրուածը յուշելու խորհրդանշական դեր ունեն կարծես (Ազմոդէս, Հեղինէ /Մարիամ/, Արուսեակ /Տալիլա/ Եփրեմ /Ալեքսանդր/, Ղունկիանոս եւ այլն): Ընդհանրապէս անունը այվազեանական խոշորացոյցի կենտրոններից է, հեղինակը նոյնիսկ առանձին պատմուածք ունի՝ «Անունը» վերնագրով⁷: Ամէն առիթով նման կցկտուր անդրադարձները այվազեանական բնագրին, պարզապէս, փորձեր են շօշափելիութեան եզրեր գտնելու, քանի որ այս հեղինակի իմ ընթերցումը ես չեմ կարող աւարտուած համարել՝ նրա մասին շատ թէ քիչ ամփոփիչ խօսք ասելու համար:

Այսքանից յետոյ հարց է առաջանում՝ արժէ՞ ժամանակակից վէպի մասին խօսելիս յատուկ անդրադառնալ հերոսի խնդրին: Գրականութեան տեսաբանները նման աստիճանակարգ են սահմանում. «Ամենասովորական հանդիսականների (*ընթերցողների՝ Վ. Դ.*) համար կայ սիւժէ եւ ինտրիգ, առաւել խելամիտների համար՝ կերպարներ ու կոնֆլիկտներ, աւելի գրագէտների համար՝ բառեր ու դարձուածքներ, երաժշտական առումով զգայուն մարդկանց համար՝ ռիթմ եւ առաւել մտածող ու զգայուն հանդիսականների համար՝ իմաստաւորում, որ բացայայտուում է աստիճանաբար»⁸: «Ամենասովորականներ-

րի ու աւելի խելամիտների» աստիճանից նոր վէպը կարծես բարձրացել է «առաւել գրագէտների, առաւել մտածող ու զգայունների» աստիճանին, գոնէ՝ միտումների տրամաբանութեամբ: Գրականութեան, այսպէս կոչուած, «ինտելեկտուալացումը» սիւժէի կորստի հետ բերում է նաեւ կերպարների գործառնոյթի նահանջի: Սրանով թերեւս տեքստը ընթերցողների քանակ է կորցնում՝ յօգուտ նրանց որակի բարձրացման: Ինչ կը ստացուի՝ ցոյց կը տայ ժամանակը: Առայժմ՝ ունենք այն՝ ինչ ունենք:

ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆ



- 1 Ռուսերէն ծանօթագրութիւն:
- 2 Վահրամ Դանիէլեան, Գրեթերթ, 2008թ., համար 3:
- 3 Ռոլան Բարթ, Զեդինակի մահը, Նարցիս, 2006թ. համար 5, էջ 30:
- 4 Ժենեա Քալանթարեան, Անդրադարձներ, Ե. 2003թ., էջ 145:
- 5 Աւելի մանրամասն, տես, նոյն տեղը, էջ 144-154:
- 6 Ռոլան Բարթ, Զեդինակի մահը, Նարցիս, 2006թ. համար 5, էջ 28:
- 7 Տես, Վարուժան Այվազեան, Ճանճի ամիս, Ե. 1998թ., էջ 163-189:
- 8 Ռընէ Ուելլէք, Օսթին Ուորրըն, Գրականութեան տեսութիւն, Ե. 2008թ., էջ 361:



ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆ ծնած է 1983-ին, Նոր Հաւըն քաղաքը: Աւարտած է Երեւանի Պետական համալսարանի Հայկական Բանասիրութեան քաժանմունքը, ապա աւարտած է Ասպիրանտուրայի քաժինը (2006–2009): Հեղինակ է տասնեակ յօդուածներու, որոնք հիմնականին մէջ կը վերաբերին Արդի հայ գրականութեան եւ գայն յուզող հարցերու: Բանասիրական գիտութիւններու թեկնածու է:

Սփիռքահայ բանաստեղծ եւ մանկավարժ Մուշեղ Իշխանի գրչին պատկանող հետագայ գրութիւնը ԲԱԳԻՆ շնորհակալութեամբ ստացաւ ԴՅԴ Արխիւներու պատասխանատու պարոն Երուանդ Փամպուքեանէն:

Առանց խմբագրական դոյզն միջամտութեան լոյսին բերուող այս նամակը՝ անցեալ դարու երեսնականներուն Պելճիքայի մէջ ուսանող Մուշեղ Ճէնտէրէճեանի կողմէ հիւստիւած գեղեցիկ էջ մըն է, ուղղուած իր երեք ընկերոջ՝ Նիկոլ Աղբալեանի եւ կը բովանդակէ հետաքրքրական տեղեկութիւններ ու խորհրդածութիւններ, որոնք կը վերաբերին նամակագիրին ուսանողական կեանքին, զինք շրջապատող աշխարհին եւ իբրեւ հայ մարդ այդ աշխարհը արժէւորող անոր մտածումներուն եւ անձնական յոյզերուն:

Քիչ անդին նոյնութեամբ նաեւ տեղ կու տանք արձակագիր Վազգէն Շուշանեանի՝ գրեթէ նոյն թուականներուն յօրինուած երկու այլ նամակներու, յղուած՝ մտաւորական, քաղաքական գործիչ Սիմոն Վրացեանի: Յիշեցնենք, որ մեր անցեալ թիւով լոյս ընծայեցինք Շուշանեանէն երկու նամակ. ներկայ երկուքը կը նկատուին տեսակ մը շարունակութիւնը նախկիններուն մթնոլորտին եւ հոն տեղ գտած հարցերուն:

Յայտնենք, որ այս նամակները եւս ԲԱԳԻՆի տրամադրութեան Դամազգայիի արխիւատուէն, Ե. Փամպուքեանի ձեռամբ: Շնորհակալութիւն՝ ԲԱԳԻՆի նիւթերու ճոխացման սատարող այս նախաձեռնութեան:

Մ. ԻՇԽԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԷՆ

Պրիւսէլ, 28 Նոյեմ. 1938

Սիրելի Պ. Ն. Աղբալեան,

Դեռ բոլորովին չեմ սթափած բազմաթիւ նոր տպաւորութիւններու եւ նոր յուզումներու ճնշումէն, որ կրեցի սա մէկուկէս ամսուան ընթացքին: Ծովային ճամբորդութիւնը, Մարսէյը, Լիոնը, Փարիզը եւ ի վերջոյ Պրիւսէյը, մէկը միւսէն ցնցող ապրումներ տուին ինծի: Ամէն ինչ նոր էր եւ անակրնկալ: Քիչ առ քիչ սակայն «մտքիս ջուրերը» պարզուելու վրայ են: Հետզհետէ աւելի յստակ կը տեսնեմ իրականութիւնը եւ կ'ընտելանամ կեանքի պայմաններուն: Եւ քանի կը վարժուիմ, այնքան հիմնական համոզում մը կ'արմատանայ իմ մէջ: Չըսեմ հիասթափութիւն, բայց արժէքներու աւելի իրատես գնահատումն է, որ կը յաջորդէ առաջին օրերու անվերապահ հիացումիս: Ճիշտ է, չեմ կրնար ուրանալ, որ Եւրոպան մեծ առաւելութիւններ ունի Արեւելքի վրայ, լոյսի, քաղաքակրթութեան, արուեստի հրաշալիքներով շրջապատուած է մարդ հոս, բայց թէ՛ երջանկութիւնը եւ թէ՛ անհատական բարձրացումը կախում չունին այս բոլորէն: Առաջ ինծի կը թուէր, որ կեանքը, լաւագո՛յն կեանքը կը հոսի կ'երթայ մեզմէ հեռու, եւրոպական ոստաններու մէջ ու մենք կ'ապրինք ու կը հատնինք զրկուած ու անմասն: Հիմա արդէն կը համոզուիմ, որ խաղաղ գիւղի մը անկիւնն անգամ կարելի է հոգեկան բոլոր վայելքները եւ ամենէն բարձր երջանկութիւնը ունենալ, միեւնոյն ատեն ամէն օր բարձրանալով, ամէն օր գերազանցելով ինքզինքդ, առանց արեւմուտքի չքեղութեանց: Բայց այս հաւատքը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անգամ մը գալ, տեսնել: Ես ասկէ ետք առանց ամիսսանքի կրնամ հրաժարիլ Եւրոպայի «մեծ երազէն»: Ահաւասիկ առաջին դասս, առաջին կրթութիւնս համալսարանի սեմին առջեւ, որ կը կարծեմ հիմնական կրթութիւն մըն է, աւելի ճիշտ ամբողջ հոգեփոխութիւն մը:

Այսուհանդերձ չեմ կրնար խանդավառութեամբ չնկարագրել Պրիւսէյը եւ պելճիքացիները, որոնցմէ շատ բան ունինք սորվելիք: Քաղաքը շատ մեծ է եւ շատ սիրուն: Կանոնաւոր լա՛յն ծառուղիներով, մաքուր եւ լուսազարդ պողոտաներով, քարաշէն ու կոկիկ տուններով քաղաք մը, որ հակառակ իր լայնածաւալ մեծութեան՝ տարօրինակ կերպով խաղաղ է: Ինքնաշարժներու, հանրակառքերու եւ մարդոց եռուզեռը կը հոսի այնպիսի կարգուսարքի մը մէջ, այնպիսի կանոնաւոր-



Մ. Իշխան

րոլթեամբ, որ մարդ խաբկանքը կ'ունենայ մեծ կեդրոնի մը մէջ չապրելու: Փողոցները գրեթէ ոստիկան չկայ: Անտեսանելի եւ անգիր օրէնքը կը ղեկավարէ բոլորը: Ելեկտր. լոյսերու խաղը կ'առաջնորդէ ինքնաշարժները, անոնց կենալու կամ քալելու նշանը կու տայ եւ այսպէս ամէն ինչ՝ մեքենայացած ճշգրտութեամբ... Մարդիկը օժտուած են բնական քաղաքավարութեամբ եւ օգտակար ըլլալու բարեացակամութեամբ մը, որ զարմանք կը պատճառէ: Իր խառնուածքով ալ պելճիքացիներ վերջին ծայր խաղաղասէր եւ հեզաբարոյ կը թուի: Ֆրանսայի մէջ այդ տպաւորութիւնը չունեցայ: Հոս ընդհակառակը՝ հանրային ցոյց ըլլայ, թէ թափօր, թաղում թէ ուրախութիւն՝ միշտ զսպուած եւ անկիրք լրջութիւն մը կը տիրէ: Աչքի կը զարնէ նոյնպէս տարբերութիւնը,

որ կայ Եւրոպայի բնակչութեան նոյն իսկ «աղքատ» դասակարգի նիւթական մակարդակին եւ մեր կողմերու ժողովուրդի ապրուստին միջեւ: Հոս յետին բանուորը ունի իր տնային բոլոր յարմարութիւնները եւ կ'ըստանայ շատ լաւ սնունդ: Ասկէ զատ, գրեթէ ամէն տուն կը պահէ 2-3 կատու, քանի մը շուն, թուրթակ եւլն: Եւ այս երջանիկ կենդանիներուն վրայ այնքան կը ծախսեն, որքան գուցէ քէմբերու մէջ հայ ընտանիք մը չի ծախսեր իր զաւկին համար:

Եկած օրէս արձանագրուած եմ մանկավարժութեան եւ կանոնաւոր կը հետեւիմ: Դասերու մէկ մասը նորութիւն չէ ինծի համար: Օրինակ հոգեբանութիւնը, physiologie-ին, եւլլն, բայց հոս կ'անցնիմ աւելի խորացած ձեւով: Այս տարի չուզեցի ընել միեւնոյն ատեն գրականութիւն, նախ անոր համար, որ ծանր պիտի ըլլար: Որովհետեւ գիշերները ֆրանսերէն լեզուի մասնաւոր դասեր կ'առնեմ: Յետոյ նաեւ այն պատճառով, որ գրականութեան դասախօսները գտայ շատ սովորական, միջակութիւններ: Աւելի բանասէրներ են, չոր ու ցամաք, որոնք չեն միացներ իրենց հմտութեան՝ գեղագէտի ու քննադատի թափանցումը եւ հասկացողութիւնը: Գլխաւոր փրոֆեսէօրը բանաստեղծութեան մասին խօսած ատեն եթէ խանդավառուի կ'ըսէ. “Voilà des vers bien sautés et bien poivrés”. Անշուշտ, վերջին հաշուով կարեւորութիւն չունի ասիկա: Գոնէ գրականութեանց պատմութեան կարելի է լաւ հմտանալ՝ գրականութեան հետեւելով, ինչ որ պիտի ընեմ յաջորդ տարի: Երեք մեծ ազգերու գրականութիւնը եւ լեզուական ծանօթացումը կ'ընդգրկէ certificat d'études littéraires ըստած ճիւղը, որ երկու տարուան դասընթացք է: Եթէ գալ տարի սկսիմ՝ մանկավարժութեան հետ միասին կ'աւարտեմ: Մանկավարժութիւնը հետաքրքրական է: Այս տարի ունինք իբրեւ պարտադիր դաս՝ logique, histoire de la philosophie, psychologie, biologie, pédagogie expérimentale, anatomie, hygiène, histoire de la Civilisation. Ինչպէս կը տեսնէք, շատ նպաստաւոր դասեր են ընդհանուր զարգացման համար: Ասոնցմէ դուրս յաճախ կը հետեւիմ ազատ կերպով զանազան coursերու: Կ'ըլլան նաեւ երբեմն conférences, գրական եւ այլ նիւթերու շուրջ, դուրսէն եկած դասախօսներու կողմէ: Կ'աշխատիմ չփախցնել: Եթէ մարդ միայն ատոնց հետեւի՝ արդէն կը զարգանայ: Շատ աժան գինով կարելի է ներկայացումներ տեսնել: 2 կամ 3 ֆրանքով միայն: Աժան են մանաւանդ classique ներկայացումները, որոնք կը կազմակերպուին դաստիարակչական նպատակներով:

Փրոֆ. Ադոնցին հետ ծանօթացայ առաջին օրը իսկ: Համակրելի մարդ է, թէեւ քիչ մը շատ ինքնապաստան: Խօսեցանք ձեր «Յուշագիր»ներու մասին ալ: Քիչ մը շատ rational եւ նուազ փաստարկուած կը գտնէ: Այսինքն շատ անձնական եւ նուազ գիտական: Հայ ուսանողներուն համար շաբաթը երկու ժամ դաս կու տայ, որուն ի հարկէ ես ալ կը հետեւիմ: Այս տարի պիտի կարդանք Եգիպտէ եւ Ղ. Փարպեցի (Վարդանանց պատերազմին վերաբերող գլուխները), ուսումնասիրելով բանասիրական եւ պատմագիտական տեսակէտներէ: Զգալի է որ անսպառ հմտութիւն ունի. բայց կարծես մեթոտ չունի աւանդելու, դժբախտաբար: Ինչ ալ ըլլայ՝ օգտակար է:

Ուսանողները կը բաղկանան ամէն ազգի ներկայացուցիչներէ.՝ հայ, հրեա, ջինացի, ռուս, գանատացի, սուրիացի, փոլոնիացի եւլն: Ընկերային տիրող շարժումը՝ Ընկերավարութիւնն է տղոց մէջ: Բայց ուսանողներու խանդավառութիւնը այդ ուղղութեամբ սահմանափակ է, հանրապետական սպանիայի համար դրամ հաւաքելէն ու երբեմն ալ ճառախօսութիւն կազմակերպելէն զատ ուրիշ բան



Ն. Աղբալեան

չեն ընեն: Առ հասարակ իւրաքանչիւր ուսանող կ'ապրի ինքն իր մէջ մեկուսացած եւ քննութիւնները միայն անցնելու մտահոգութեամբ: Գաղափարականութեան եւ խտէպի պակասը ընդհանուր դարաշրջանի երեւոյթ է, ինչպէս կ'երեւի, եւ ո'չ թէ միայն Պէյրութի, մեզի յատուկ:

Օգը գրեթէ անվերջ մշուշոտ է եւ ցուրտ: Այս տեւական մշուշին մէջ կը գտնեմ առանձին թախծոտ հրապոյր մը, որ սակայն հիւանդագին բան մը ունի իր տակ: Բարեբախտաբար կլիման առողջ է: Հոս շատ աւելի կայտառ կ'ըզգամ ինքզինքս քան Պէյրութի մէջ:

Կեանքը սուղ է: Խնայողութեամբ եւ քիչ մը նեղուելով կրնամ ապրիլ եթէ ունեցած 300 տոլլարիս վրայ 50 մըն ալ ձեռք բերեմ: Այդ 50-ը այս տարի ունիմ՝ շնորհիւ գիրքերու: Կահաւորուած փոքր բայց լաւ սենեակ մը ունիմ, որ կ'արժէ ամիսը 100 Ֆրանք: Լաւ ճաշ մը կէսօրուան՝ կ'արժէ 8 Ֆրանք:

Մասնաւորաբար «բանաստեղծական» գեղեցկութիւններ շատ ունի քաղաքը. ատոնցմէ մէկն է մեր համալսարանի ճիշտ առջեւ տարածուող հրաշալի անտառը, որուն նմանը միայն սինեմաներու մէջ էի տեսած: Խորո՛ւնկ եւ ընդարձակ: Բարձրուղէ՛լ եւ ճիւղատարած ծառեր: Արուեստ եւ բնութիւն իրար ձուլուած: Կեդրոնը լայն լճակ մը, ուր կարապներ կը լողան: Աշունը ստեղծած է ոսկի, դեղին, կարմիր ու նարնջագոյն տերեւներու սքանչելի ներդաշնակութիւն մը ծառերուն վրայ: Իսկ թափած տերեւներու գորգին տակ գետինը չի տեսնուիր: Արեւոտ ու հագուագիւտ օրեր հոն կու գան ձեւաւորուած օրիորդներ, գուցէ իշխանուհիներ, հոն կու գան իշխաններ որսի ազնուացեղ շուններու ընկերակցութեամբ, հոն կ'երթամ նաեւ ես՝ հին յիշատակներու եւ նոր զգայութեանց տարափին տակ: Եթէ միայն ժամանակ եւ տրամադրութիւն ունենամ գրի առնելու...

Հայ ուսանողներ շատ կան, բայց եւ այնպէս առայժմ մինակ կըզգամ ինքզինքս ու քիչ մը տխուր: Կարօտախտը, արեւոտ Լիբանանի, Մէյրուպայի ջուրերուն եւ Շուէճի մայրիներուն կարօտախտը դեռ կը յամենայ իմ մէջ եւ պիտի մնայ երեւի, մինչեւ որ Պելճիքայի մշուշը աւելի թանձրանայ եւ իր տակ ծածկէ ամէն ինչ:

Իփէկեաններու հոս գտնուիլը անսահման մխիթարանք մըն է: Յաճախ կերթամ իրենց: Նանիկը մեծցած է, Հուրին եռանդով կը հետեւի դասերուն, իսկ տիկինը կը վարէ տունը: Երեքն ալ կը բարեւեն ձեզ կարօտով:

Ինչպէ՞ս կ'ըզգաք դուք ձեզ այս տարի, առողջութեամբ եւ տրամադրութեամբ: Ճեմարանի դասերը, դասախօսութիւնները եւ «բաժակ մը թէյ»երը յաջող կ'ընթանա՞ն: Սրտանց կը տենչամ շուտ աւարտել եւ շուտ վերադառնալ Ճամարան, որուն կապուած կ'ըզգամ ինքզինքս այնքա՛ն բազմաթիւ թելերով:

Ջերմ բարեւներս հաճեցէք հաղորդել Տիկին Յովհաննէսեանին (ընկեր Ա. Յովհաննէսեանին ալ, եթէ եկաւ), պ. Գիւզէլեանին, պ. Սուրէնին եւ բոլոր հետաքրքրուողներուն: Մասնաւոր բարեւներ նոյնպէս ընկ. Խ. Թիւթիւնճեանին եւ տիկին Մաշային:

Արդէն ուշ է, պէտք է դասի վազեմ:

Ջերմ կարօտով եւ յարգանքներով՝
Մուշեղ Ճէնտէրէճեան

Հասցէս՝
41, Rue Juliette Wytsman
Ixelles Bruxelles
(Belgique)

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆԵՆ ԵՒՍ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ՝ Ս. ՎՐԱՑԵԱՆԻ



Ս. Վրացեան

11 Օգոստոս 1930 Փարիզ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

- Այս երկտողը կը գրեմ անապարանքով՝ ձեզ հաղորդելու համար որ չուտով լոյս կը տեսնէ Ռ. Զարդարեանի գիրքը: Պատրաստ կայ քովերնիս Հրանդի «Պանդուխտի կեանքէն» պատմութեան քննարկը հատորը ու չուտով պիտի ունենանք ամբողջական գործը, պատրաստ են նաեւ Գեղամ Բարսեղեանի արձակ էջերը: Ռ. Զ.ի արձակ էջերը կը ձգձգէինք որովհետեւ ձեզմէ եւ միւսներէն ձայն-ծպտուն չեյալ: Գիրքը եթէ լոյս տեսնէ որո՞ւ, քա՞նի հատոր պիտի ղրկենք, չենք գիտեր: Կը խնդրեմ որ գէթ Ս. Նահանգ-

ներու զանազան քաղաքներուն մէջ, վստահելի մարդոց եւ ընկերներու հասցէները ղրկէք ինձ, յիշելով թէ իւրաքանչիւրին քա՛նի օրինակ պէտք է ղրկել, որպէսզի գէթ առաջին առաքում մը կարենանք ընել:

* * *

- Կ. Խ.էն Յուլիսի հաշուոյն ինձ որեւէ բան չտուին եւ ո՛չ ալ Օգոստոսի: Կը յիշե՞ք, ինձ գրած էիք թէ կարելի է երկարաձգել: Ընկ. Զամալեանի խորհուրդին վրայ ժամանակին գրեցի ձեզ: Զեզ գրած էի նաեւ ուրիշ անձնական նամակ մը: Պատասխան չառի: Հակառակի պէս «Հ»էն այս ամիս, «Յուլիս»ի աշխատավարձքն ալ չղրկեցին: Խիստ գէշ դրութեան մը մատնուեցայ:

- Եթէ տեսնէք ընկ. Ռուբէն Դարբինեանը, կը խնդրե՛մ, ըսէք որ բոլո՛ր ըրած յապաւումները նկատած եմ: Հատուածներ, էջերու ամբողջ մասեր ... բաց ինկած են. չպատահի՛ որ կարծէ, թէ աննկատ անցած են իր ... սրբազրութիւնները: Ապշուրիւնս - չգործածելու համար ուրիշ բառ մը - այնքան մեծ է, որ ամիսներէ ի վեր կը մտածեմ, թէ ի՞նչ կարելի է ընել, կամ ի՞նչ կարելի է գրել, քանի որ յանուն ո՛չ մէկ իրաւունքի կարելի է խօսիլ խմբագիրներու հետ, քանի որ խմբագիրները մարդիկ են՝ անխոտելի ճաշակով եւ աստուածօրէն գեղագէտ: Խօսի՛լ գրուած բանին հանդէպ յարգանքի անհրաժեշտութեան մասին՝ այլեւս շատ աւելորդ է: Ըսե՛լ՝ որ երկ մը որ գեղարուեստական ըլլալու յաւակնութիւնը կը տածէ կամ որպէս այդպիսին հիւրընկալուած է՝ իրաւունք ունի անձեռնմխելիութեան: Յառաջիկայ անգամին կ'առաջարկեմ գրածիս վրայ դնել.- Գրեց՝ Վազգէն Շուշանեան, սրբագրեց՝ Ռ. Դարբինեան: Ասիկա գոնէ ուղղամիտ բան մը կ'ըլլայ: Ռ. Զարդարեանի գիրքը սրբագրած ատեն, Լ. Մօզեանը եւ ես կը զարմանայինք թէ ի՞նչպէս ստուգապէս գեղեցիկ էջերու կողքին՝ կան այնքան գէշ էջեր: Ատիկա պատճառ մը չէ եղած սակայն որ այլ խմբագիրներ էջերով յապաւում ընեն: Բայց ի՞նչպէս որ ըսի՝ բանականութիւնը չէ որ կարելի է օգնութեան կանչել այստեղ, խմբագիրներու դէմ պաշտպանուելու համար: Միայն թէ՛ ամէն մարդ իրաւունք ունի մարդոց երեւալու այնպէս ի՞նչպէս որ է: Ենթադրելով որ բոլո՛ր սրբագրութիւնները յօգուտ գրածիս են, կ'առաջարկեմ - թո՛յլ տուէ՛ք ընկ. խմբագիր, երեւալ հասարակութեան առանց սիրամարգի փետուրներու...

- Թէեւ յանցաւորը իրապէս ես եմ՝ որ այնքան վատ եղայ, անըմբռնելիօրէն վատ: Լաւ կը ճանչնայի ընկ. Ռ. Դ.ն: Ի՞նչ որ պէտք էր՝ Բ. գիրքը ետ ուզելն էր, ատիկա չըրի: Հիմա, ինչպէս առածը կ'ըսէ, գնա՛ ու տէրտղ Մարքօ փաշային հասկցուր... բայց տխուր է մեր ընկերներուն մօտ այս արքայական անբարեխղճութիւնը՝ ուրիշներու գործին հանդէպ: Գիրքը երկար ատեն քովը մնաց, կրնար կարդալ, ըսել - ընկե՛ր, չեմ կրնար լոյս ընծայել, կամ հարկ է հետագայ փոփոխութիւնները ընել ... Առաջին անգամը չէ,

կարծեմ, որ ձեռագիր մերժած է, ամիսներ պահելէ յետոյ ու վշտացող չէ եղած... եւ այս բոլորը քանի մը թշուառ տողներու համար - որ իրա՛ւ որ արդարու-թեամբ չահած ենք եւ որ ժամանակին հասնելու առաքինութիւնը անգամ չու-նին...

Յարգանքներով ձերդ՝
Վազգէն Շուշանեան



Վ. Շուշանեան

Paris, le 15 *Յունիս*, 1930
V. CH.
6 Place de la Sorbonne
Paris (5e)

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Սկսիլը միշտ դժուար է, իսկ վերջացնելը համեմատաբար աւելի դիւրին, երեւի ատոր համար է որ, կարգ մը գրողներ հակառակ կողմէն կը սկսին իրենց պատմութիւնները ու չեն հասնիր սկզբնաւորու-թեան: Նամակ մը սկսիլը մասնաւորաբար դժուար է, որովհետեւ մարդ միշտ կը մտածէ, որ այս անիծ-եալ թղթի կտորները՝ անգամ մը նամակատուի ձգուելէ յետոյ, կը սկսին ինքնայատուկ ու առանձին կեանքով մը ապրիլ ու ճիշդ չատ մը ապրող բաներու պէս կ'ունենան իրենց ճակատագիրը, կեանքն ու վախճանը: Եթէ մարդ ժամանակ ու տրամադրութիւն ունենայ ու անշուշտ նաեւ քիչ մը լրջութիւն - ինչ որ, ըստ ընկերներու, միշտ կը պակսի ինձ - կրնայ յուզիչ! տողերով բանաստեղծութիւն մը գրել բո-լոր նամակներու մասին, անոնց որ կարելի է գրել եւ միւսներուն որ պէտք չէ գրուին բնաւ - ինչպէս պէտք չէ որ գրուէր իմ Անկարելի Օրագիրս - եւ կամ մնան առանց ղրկուելու: Ինչպէս բանաստեղծու-թեան այս ծաղրանկարը:

Գրել հեռաւոր մէկուն, անձնատուութեան ժամու մը ընթացքին, նամակներ որ կրնան կարդացուիլ, ոտքի վրայ կամ կառաչարի մէջ,

Երբ աճապարանքի մէջ է մարդ, կամ տագնապի, ձանձրոյթի անծայր տափարակի վրայ
կամ ուրախութեան - ինչ որ նոյն բաները չեն -

Գրել հեռաւոր մէկու մը որ կրնայ կարդալ՝ ո՛չ միայն գրուածը, այլեւ ինչ որ կայ՝

Լուսանցքի վրայ կամ տողընդմէջ եւ որ մարդ՝

Անփութութեամբ, գիտուն մեղսակցութեամբ կամ ակամայ կը ձգէ հող...

Գրել հեռաւոր մէկու մը որ կրնայ՝

Հետեւելով բռներուն, գործածելով զանոնք

Կառուցանել հոգեկան վիճակներ, տեսնել վանկերուն ետին

Մարդը՝ գրիչը փրին մէջ,

Գրել հեռաւոր մէկուն - Օ՛ր անցուցէք ինձմէ այս տկարութիւնը -

Թունաւոր սլաքներ նետելու ասդին անդին, որ վաղ կամ ուշ

Կը վերադառնան, իրենց մեկնումի կէտին...

Ձգուած տուփի մը մէջ, յանձնուած իրենց ճակատագրին

Նամակներ

Որոնց մարդ պիտի ուզէր հետեւիլ, նոր տողեր կցելու համար իրենց,

Հերքելու համար, կամ իրենց ներքին ուժը տկարացնելու...

Նամակներ որ կը տեւէ՞ զրոյին կեանքէն անդին,

Սխալմամբ կ'երկարաձգէ՞ զայն, կ'ամբողջացնէ՞ զայն կամ կը խեղաթիւրէ՞...

Նամակներ որ կը հանդիպի՞ գէշ օրի,

Մերժումի գուցէ, գաղջ ընդունելութեան, սիրոյ...

Որ կը յարուցանէ՞ փոթորիկ, մախանք, տենդ: Կը քրքրէ՞ առկայծ կրակ...

Նամակներ՝ որ կը մնաք որպէս պատանդ, որպէս գերութիւն...

Աղտեղի, գէշ հետքերու պէս, վտանգաւոր բաներու պէս՝ որ մարդ մոռնայ սեղանին վրայ, անկողպ սենեակի մէջ: Որ կը բացուի, յանկարծ կեանքի մը վրայ

Որպէս անփափկանկատ, դաւադիր վարագոյր...

Քառակուսի, գունաւոր, հոտաւէտ թղթերու վրայ,

Ուրիշ թղթերու վրայ տակաւին: Երբ կը մտածեմ, թէ ձեր բոլոր տեսակները

Անցած են գրչիս տակէն, կարծես թէ

Անորոշ մտահոգութիւն մը կը քսուի հեռուէն ինձ: Կարծես թէ՝

Հոգիս է, որ բեկոր առ բեկոր ձգած եմ գէշ պահանջներու մօտ, գէշ ընկերներու...

Կարծես թէ մարմնիս բոլոր մասերուն վրայ՝ խոցելի կէտեր կան ու շուտով

Պիտի բազմաթիւ վէրքեր բացուին...

Սթօբ! Ո՛վ շատգրիկ մուսայ, այսքանը կը բաւէ նամակներու մասին: Իրաւ է որ քաղաքացի Ա. Խոնդկարեանը չկայ որ կճէ քեզ, տհաճ ակնարկութիւններ ընելով եւ ո՛չ ալ ուրիշներ որ մտածեն թէ էջը՝ տօլար մըն է, վերջապէս պէտք է հասնիլ վերջաւորութեան, վերջապէս...

Վերջապէս պէտք է սկսիլ սկիզբէն կարծեմ եւ Ն.Գ.Բ.ի գէշ երկիր ինկած նախագահին, գործի վերաբերեալ նամակ գրել:

- Գիրքը գրեթէ շարուած վերջացած է: Կը մնան կարգ մը սրբագրութիւններ միայն: Եթէ պահանջենք արագացնել, կը կարծեմ որ մէկ ամիսէն կրնան յանձնել: Մինչեւ հիմա չէինք աճապարեր մտածելով որ լաւ էր հրապարակ հանել յոբելեանական հանդիսութիւններէն (!) յետոյ:

- Նուիրատոմսերէ եկած գումարները աւելի քան բաւարար պիտի ըլլան՝ ամբողջովին մեր պարտքը վճարելու տպարանին: Բայց ինձ կը թուի որ առաջին առթիւ 300էն աւելի սպառում չպիտի կրնանք ունենալ, ինչ որ լուրջ դժուարութիւններ պիտի ստեղծէ մեզ համար:

- Գեղամ Բարսեղեանի գործին արտագրութիւնը չի յառաջանար: Գրուած նամակներուն չեն պատասխաներ: Այս մասին որոշում չենք տուած:

Կը թուի թէ երկրորդ գիրքը պիտի ըլլայ Հրանդի Պանդուխտի Նամակներու հաւաքածոն: Իր զաւակները վերջապէս ձայն տուին ու համաձայնեցան, բայց ինչպէս օրէնք է, որպէս գէշ որդիներ, ոչինչ ունին իրենց հօրմէն: Կրկին մենք պիտի հաւաքենք: Այս առթիւ, երեւակայեցէ՛ք, առնուազն 15-20 նամակ գրուած է Ռուսմանիա, Սուրիա, Վենետիկ: Արդիւնքը հետեւեալն է.- Հ. Արսէն - Ղազիկեանը, հաւաքիչ՝ ուրիշ գործերու, յանձն կ'առնէ լրիւ կերպով հաւաքել Հրանդի գործերը, բայց վարձատրութիւն կ'ուզէ: Կ'ըսէ որ չըրախ չէ եւ իր ժամանակը սուղ է եւ դեռ ուրիշ բաներ, որոնցմէ կը պարզուի, որ հայրսուրբը 75 տօլարէն աւելի գումար մը կ'ուզէ արտագրելու համար: Մեր պատկառելի ընկերները, մէջը հաշուի առնելով անպատկառս, կը կարծեն որ այդ գումարը պէտք է տալ եւ կը հաւատան որ հայր Արսէնը խղճատութեամբ կրնայ կատարել այդ աշխատանքը: Իր վերջին նամակը կը ներփակեմ: Ձեր վզին տարապարհակ պարտք կայ՝ փի առնել որեւէ հայ մեծատունի կամ կէս մեծատունի դուռ ու պահանջել

այդ գումարը, յանուն Հայ դպրութեանց: Մեր պատկառելի Ն.Գ.Բ.ականները, այդ դրամը իրենց ձեռքով տեղաւորածի պէս կը կարծեն գտնել որեւէ Հայ ջոջի գրպանը: Այլեւս ձեզ կը մնայ՝

Ա) Իրապէս որեւէ մարդ ճարել որ տայ այս գումարը:

Բ) Կամ գտնել 2-3 նուիրատու որոնց անունները կը յիշատակուին եւ ստանալ իրենցմէ 150-200 տօլար, ի հաշիւ տպագրական ծախքերու:

Գ) Եւ կամ հարցը տանիլ Ն.Գ.Բ.ի Նիւ-Եօրքի մասնաճիւղին

Ինձ կը մնայ հայցել ձեր ներողութիւնը՝ նման թղթի վրայ նման նամակ գրած ըլլալու համար: Կը յուսամ արժանանալ ատոր՝ քանի որ արդարացում մը ունիմ - լրջութեան ի՞նչ ըլլալը չգիտնալս:

Նիւ-Եօրքի մասնաճիւղէն լուր չկայ: Համաձայն ձեր խորհուրդին գրեցինք իրենց, ինչպէս կ'ըսէինք, չնորհաւորեցինք, քաջալերեցինք, շատ մը բաներ ըրինք վերջապէս, բայց ձայն չելաւ: Երեւի իրենց խանդավառութիւնը հանգչեցաւ ի տէր: Չէք կրնար թօթուել զիրենք այդ մահաթմբիդէն...

* * *

Գործածելով աւանդական տարազը (էս էլ ձեր ֆօրմուլային հայերէնը)՝ կը հաստատեմ, չե՛մ գիտեր ո՛ր թուակիր, նախորդ նամակս: Ճշգրտօրէն կը յիշեմ ի՞նչ որ գրած եմ, այնպէս որ կրկնելու հարկ չեմ տեսներ: Օրերը գեղեցիկ չեն, այդ մենք վաղուց գիտենք, բայց հակառակ փոթորիկին, ովկիանոսին վրայ թէ հոս, կը սպասենք մեր նամակի պատասխանին: Կը խնդրեմ որ չորս ամիս եւս շարունակեն զրկել ինձ տրուածը, այսինքն յուլիս, օգոստոս, սեպտեմբեր եւ հոկտեմբեր: Եւ այս անգամ կը կարծեմ որ այլեւս ոչ ոք չեմ անհանգստացներ: Եթէ կարելի չէ, շատ կը խնդրեմ որ երկտողով մը իմացնէք, որպէսզի գիտնամ ընելիքս:

Գալով իմ հող գալու խնդրիս, կը տեսնէ՞ք որ ձեր առաջարկած ձեռով կարելի չէ: Ես հիմա բազմաթիւ արկածախնդրութեանց պատրաստ եմ սակայն, մանաւանդ հող գալու: Հակառակ վերջին ընթերցումներուս: Ի դէպ, թոյլ տուէք, ձեզ գիրք մը յանձնարարել՝ Georges Duhamel-ի Scenes de la vie future-ը: Բայց պէտք է կարդաք զայն այդտեղ, բաղդատելու եւ կարենալ հակակշռելու համար: Անսովոր ու իրեն համար բացառիկ խստութեամբ մը, գրեթէ բուռն, կարելի է ըսել նոյնիսկ ծածկուած ատելութեամբ՝ ան, ամենամանրամասն մեղադրագիրն ու պարսաւը կ'ողողէ Միացեալ - Նահանգներու դէմ: Մարդ մը՝ որ միշտ կէս - գոյներու, գուսպ ու արդար բառերու, ճշմարտութեան մեծագոյն բեկորին, մարդէ մարդ, ազգէ ազգ եւ քաղաքակրթութիւնէ քաղաքակրթութիւն՝ սիրոյ եւ հանդուրժողութեան կուսակից է եղած՝ չի կրնար զսպել իր գայրոյթը ու վայրագ հաճոյքով մը, ուր կայ ցաւ եւ դառնութիւն, կը յարձակի աշխարհի մեծագոյն երկրի վրայ: Էջեր կան, ուր հակառակ իր գայրոյթին, ան կը հասնի մարդկայնութեան այնպիսի չափի մը, ճշմարտութեան այնպիսի բաբախուն ու սրտազրաւ շեշտի՝ որ իր գործը կը դառնայ կարծես արդարութեան գեղեցիկ ու զօրեղ արարք, տեսակ մը խաղաղ այլ վաւերական հերոսութիւն: Իրական գիրք մը, վերջապէս, որուն էջերուն ետին, մարդ կը տեսնէ Մարդ մը, որ կ'ապրի ազնիւ լրջութեամբ մը, նուիրումով ու գուցէ տառապելով, հակառակ իր պնդումներուն:


Այստեղ ո՛չ մէկ նորութիւն: Կան միայն մարդիկ, որոնց պատմութիւնը դժուար է գրել: Ուրովհետեւ ի՞նչ աւելի կարեւոր նորութիւն՝ քան մարդիկը (որ կարծես միշտ նոյնն են եւ որ միշտ տարբեր են սակայն, անընդհատ կուռի մէջ՝ իրենց շուրջիններուն եւ ինքզինքնուն հետ, անընդհատ որեւէ տառապանքի կամ դժուարութեան հետ գիրկընդհառն, անընդհատ պատրանքի մէջ, որոնցմէ մէկը պատիւը ունի ձեզ բարեւելու ու այս բոլոր տողերուն տակ այս անգամ լրջութեամբ տեղաւորելու իր անունը որ անտարակոյս ամբողջ պատմութիւն մըն է, շատ մը ուրիշ պատմութիւններու պէս՝ քիչ մը երգիծական ու քիչ մըն ալ տխուր՝

Վազգէն Շ.

ՃԱՓՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեծ տարբերություն մը կայ բան
մը լաւ ընելու եւ իրապէս ստեղծելու
միջեւ:

Հ.Մ.



ՀԱՐՈՒՔԻ ՄԻԻՐԱՔԱՄԻ
Ծնած՝ 1949-ին, Բուպէ

ԲԱԳԻՆԻ ի նախորդ համարով լոյս ընծայած էինք տեսակցութիւն մը ճափոնցի մտատրականի մը հետ, ճափոնական համալսարանի քաղաքագիտութեան դասախօս, որ հայերէն սորված էր, Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակած էր, ուսումնասիրած էր ժողովուրդը: Խօսած էինք ճափոնական գրականութեան եւ գրողներու մասին, որոնք գրեթէ անծանօթ են մեր ժողովուրդին: Յիշած էր Հարուքի Միւրաքամիի անունը: Փնտռեցի անոր գիրքերը: Անոնցմէ «Վայրի Ոչխարի Որոնումը»-ի ֆրանսերէն թարգմանութիւնը, «La Course au Mouton Sauvage», SEUIL հրատարակչութիւն, POINTS շարքին մէջ, 2002, 374 էջ, կարդացի յափշտակութեամբ: Պիտի ներկայացնեմ, թարգմանաբար, քանի մը էջեր: Ուշագրաւնշում մը. Գիրքը ֆրանսե-

րէնի թարգմանած Փաթրիք Տը Վօս արժանացած է մրցանակի՝ իր թարգմանութեան համար:

Ծանօթանալով գրողին, որ Նոպելեան գրական մրցանակի հաւանական թեկնածու է:

Հարութի Միւրաքամի ծնած է մտատրական ընտանիքի մէջ: Հայրը եղած է ճափոնական գրականութեան ուսուցիչ: Ուզած է նուիրուիլ թատրոնի, դառնալ շարժանկարի դիպաշար գրող, երբ դեռ ըսելիք եւ պատմելիք չունէր: Համալսարանական ուսումէն ետք, ութ տարի եղած է Թոքիոյի «ճազ»-ի «Փիթր Բէթ» սրճարանի պատասխանատու: Միւրահար է կատուներու, որոնք եղած են իր միակ բարեկամները մանկութեան առանձնութեան տարիներուն, ինչ որ կը բացատրէ անոնց յաճախակի ներկայութիւնը իր գործերուն մէջ: 1979-ին. Ճափոնի մէջ, լոյս կը տեսնէ իր առաջին գիրքը, «Լսէ՛ հովին երգը», եւ կը ստանայ «Կոնզօ» մրցանակը: Երբ արդէն հոգնակատոր է, ընդունելութեան արժանացած բազմաթիւ վէպերէ ետք, երկրէն կը մեկնի: Կը բնակի Եւրոպայի հարաւ. Իտալիա եւ Յունաստան, ապա Միացեալ Նահանգներ, Փրինսթընի համալսարանին մէջ կ'ուսուցանէ ճափոնական գրականութիւն: 1995-ին կը վերադառնայ Ճափոն, որ հարուածուած էր Գոպէի աւեր գործած երկրաշարժով եւ Առաջադանդի «սարին կազ»ով Թոքիոյի մեթրոյի ահաբեկչութեամբ: Այս գոյգ ողբերգութիւնները կը ներշնչեն «Երկրաշարժէն ետք» գիրքին մէջ ամփոփուած նորավէպերը: Թարգմանած է անկլօ-սաքսոն մեծ գրողներու գործերը ճափոնեցիներէ:

Հարութի Միւրաքամիի վէպերը եւ պատմածքները առօրեայէն վերցուած են, բայց դուրս կու գան բնականոնութենէ: Իր դրսեւորած ճափոնական իրականութիւնը կը հարստանայ արեւմտեան ազդեցութեամբ: Ինքնատիպ եւ գերիրապաշտ գրականութիւն մը՝ որ իր ափշը կը ստանայ առօրեայ ընթացիկ մեյլամադճոտութենէն: Ասիական մտածողութիւնը ներկայ է, ան կը կապէ դէպքերը եւ արարածները, անոնց հետուումօտ արձագանգները: Մարդկային ներաշխարհը կը բացուի, կը բացատրուի, տարօրինակ տիպարներու ընդմէջէն, որոնց հետ կ'ապրի ընթացողը: Իր տիպարները կը փնտռեն իրենք գիրենք, իրենց ինքնութիւնը, եւ այդ որոնումը ծնունդ կու տայ մղձաւանջի: Խորապէս «Իմանիստ» գրող մըն է Հարութի Միւրաքամի:

«Վայրի Ոչխարի Որոնումը» գիրքը բազմաչերտ յատակութիւններու եւ ապրումներու աշխարհ մըն է, իր քաղցրութեամբ, ցաւատանջ վիճակներով: Արտակարգ ուղեւորութիւն մը՝ անհեթեթի եւ չփոթեցողութեան մէջ, կ'ընդլուզուին իրականը եւ անիրականը, կը ծնի իմաստութիւնը: Տիպարները սովորական մարդիկ են: Ծանօցումի ընկերութեան մը երիտասարդ պատասխանատուն անշուք եւ անելելի կեանք մը ունի: Ամուսնալուծուած է, «կը պառկի» աղջկան մը հետ որուն ահանջներով հմայուած է: Գործընկեր է հին եւալքոլամոլ բարեկամի մը, ճեմարկութիւնը յաջող ընթացք ունի: Անյայտացած անձի մը երկտողը կը խանգարէ միօրինակութիւնը: Ոչխարի մը սովորական լուսանկարին գործածութիւնը գլխիվայր կը չրջէ իր կեանքը: Ծայրայեղ աջակողմեան կազմակերպութեան մը սպանալիքին անսալով, պարտի փնտռել այդ անասունը...

Կը սկսի հերոսին արկածախնդրութիւնը՝ ընթացողին ընկերակցութեամբ:

Յ.Պ .

ՎԱՅՐԻ ՈՋԽԱՐԻ ՈՐՈՆ ՈՒՄԸ

Հատուած (էջ 343-359)

10. Եւ հասաւ ժամանակը


Խաւարը ականջներէս խուժեց մէջս, ինչպէս կը հոսի իւղը: Մէկը կը ճգնէր Երկրի սառած գունտը ջարդել հսկայ մուրճով մը: Ան ճիշդ ութ հարուածներ տուաւ: Երկիրը չջարդուեցաւ: Ան հագիւ թէ թեթեւօրէն ճաթեցաւ:

Ժամը ութ: Երեկոյեան ժամը ութ:

Գլուխս շարժեցի եւ արթնցայ: Ամբողջովին ընդարմացած էի եւ գլուխս ուժգնօրէն կը պայթէր: Կարծէք զիս դրած էին ցնցող մեքենայի մը մէջ (shaker), սառույցներով, եւ բոլորը ցնցած տեսնելու թէ ինչ բան դուրս պիտի գար: Ոչինչ աւելի անհաճոյ է քան արթննալ ամբողջական խաւարի մէջ: Այն տպաւորութիւնը կ'ունենանք որ հարկ է ամէն բան վերսկսիլ սկիզբէն: Նախ կը բանանք մեր աչքերը եւ կը խորհինք որ ուրիշի մը մորթին մէջ ենք: Ապա բաւական ժամանակ պէտք է որպէսզի այդ մորթը նոյնանայ սեփական մորթի հետ: Տարօրինակ տպաւորութիւն է դիտել սեփական կեանքը կարծէք ան պատականէր ուրիշի մը: Այն որ նման անհատ գոյութիւն ունենայ արդէն անհասկնալի կը թուի:

Գացի երեսս լուալու խոհանոցի ծորակին առջեւ եւ առիթէն օգտուեցայ երկու բաժակ ջուր խմելու: Զուրը որքան որ սառած ըլլար, դէմքս միշտ կ'այրէր: Վերադարձայ նստելու բազմոցին, եւ հոն, խաւարի ու լռութեան մէջ, հաւաքեցի մէկը միւսէն ետք, գոյութեանս բեկորները: Հունձքը աւելի խեղճ դուրս եկաւ, բայց վերջապէս, իմ գոյութիւնս էր: Այսպէս, ժամանակ տրամադրելով, ինքզինքս եղայ: Եթէ ինծի հարցնէին թէ ինչո՞ւ այդ ինքս էի, մեծ դժուարութիւն պիտի ունենայի բացատրելու: Յամենայնդէպս, այդ ոչ ոք պիտի հետաքրքրէր:

Անորոշ զգացում մը ունեցայ որ զիս կը դիտէին, բայց ոչ մէկ կարեւորութիւն տուի: Նման զգացում դիւրաւ կ'ունենանք երբ առանձին ենք ընդարձակ սենեակի մը մէջ:



Կը մտածէի բջիջներու մասին: Անոնց՝ որոնց մասին կ'ըսէր որ ի վերջոյ զանոնք բոլորն ալ կը կորսնցնէինք, մինչեւ յետինը: Ի վերջոյ կը կորսնցնէինք նաեւ մենք մեզ: Մէկ ձեռքիս ամբողջութեամբ զգայիս՝ տեսնելու համար: Չէի յաջողեր, միտքս մէջ, համոզուելի որ ինչ որ կը զգայի ձեռքիս խորը իմ դէմքս էր: Ան ուրիշի մը դէմքն էր, իմ դէմքիս ձեւերով: Բայց իմ յիշողութիւնս այլեւս վստահելի չէր: Բոլոր իրերու անունները կը լուծուէին, ներծծուելով գիշերէն:

Ճօճանակի կէս ժամուան զարկը հնչեց խաւարին մէջ: Ձիւնը դադրած էր տեղալէ, բայց երկինքը միշտ ծածկուած էր թանձր ամպերով: Բացարձակապէս ոչինչ կը տեսնուէր: Երկար ժամանակ թաղուած մնացի բազմոցին մէջ, կրծելով բթամատիս եղունգը: Վառարանը մարած էր, եւ հիւրասրահին մէջ ուժգին ցուրտ մը կը տիրէր: Վերմակով փաթթուեցայ, ձգելով որ նայուածքս թափառի մոլորին մէջ: Կը կարծէի որ պզգած էի անյատակ հորի մը յատակը:

Ժամանակը կ'անցնէր: Խաւարի մասնիկները կը գծէին տարօրինակ պատկերներ ցանցերիս վրայ: Ժամանակ մը ետք, այդ պատկերները անաղմուկ փուլ կու գային, յետոյ նորեր կը կազմուէին: Մոլորականման անշարժ տարածութեան մէջ, միայն գիշերը կը շարժէր:

Հրաժարեցայ մտածելէ եւ ժամանակը լքեցի իր ընթացքին: Եւ ժամանակը զիս տալաւ: Եւ նոր խաւարներ գծեցին նոր պատկերներ:

Ճօճանակաւոր ժամացոյցը ինը հնչեց: Այն պահուն երբ իններորդ հարուածը ստուերին մէջ մարեցաւ, լուծիւնը խուժեց:

«Կրնանք խօսիլ, ըսաւ Առնէտը (Le Rat, այդպէս կը կոչուէր հերոսի անհետացած ընկերը):

- Վստահ -, ըսի:

11. Խաւարի քնակիչները

- Վստահ -, ըսի:

- Ժամանակացոյցէն մէկ ժամ առաջ եմ -, ըսաւ Առնէտը ցաւ յայտնելու շեշտով:

- Խնդրեմ: Կը տեսնես որ իրապէս ընելիք մեծ բան չունիմ:

Շնորհալի պզտիկ խնդուք մը ունեցաւ: Իր ձայնը լսեցի ետեւէս: Նստած էինք, այսպէս ըսած, կռնակ կռնակի:

- Ինչպէս անցեալի լաւ օրերուն, այդպէ՞ս չէ -, ըսաւ ինք:

- Կը թուի թէ կարելի չէ իրարու հետ կատարեալ անկեղծութեամբ խօսիլ, երբ չենք գիտեր ինչ ընել մեր ժամանակին հետ -, ըսի ես:

- Կատարելապէս այդպէս կը թուի:

Կը ժպտէր: Որքան որ ալ եփենոսեայ գիշերուան մէջ կռնակ դարձուցած էինք, գիտէի որ կը ժպտէր: Կլիմայ մը, օդի փոքրիկ հոսանք մը կրնան մեզի սորվեցնել շատ մը բաներ: Անցեալին բարեկամներ էինք: Այնքան հեռու անցեալ մը զոր ես հագիւ կը յիշէի:

- Չեմ յիշեր թէ ո՛վ կ'ըսէր, որ բարեկամը որուն հետ ժամանակը կը սպաննեն, իրաւ բարեկամ մըն է -, ըսաւ Առնէտը:

- Առանց կատակի: Այդ դուն կ'ըսէիր, այդպէս չէ՞:

- Կը տեսնեմ որ ոչինչ կորսնցուցած ես ներշնչումէդ:

Լայն շուկա մը առի: - Եւ դեռ այնպէս, որ այս խոշոր խեղկատակութեան մէջ, իմ ներշնչումս, ինչպէս կ'ըսես, կատարելութենէ հեռու եղած է: Այն աստիճան որ պիտի ուզէի հոն ձգած ըլլալ կաշիս: Մինչդեռ, քանի՜ թառեր չերկարեցիր ինծի:

- Հոն ի՞նչ պիտի ուզէիր ընել: Գիտես, կ'երեւի թէ գործէն գէշ դուրս չեկար:

Պահ մը լռութիւն տիրեց: Կ'երեւի թէ կրկին իր ձեռքը կը դիտէր:

- Քեզի շատ մտահոգութիւններ պատճառեցի, ըսաւ Առնէտը: Գիտցիր որ անկեղծօրէն կը ցաւիմ: Բայց այլընտրանք չունէի: Միայն դուն կայիր որուն կրնայի դիմել: Այդ քեզի ըսի նամակիս մէջ:

- Իրապէս պիտի սիրէի որ այդ մասին ինծի խօսիս, ճշդութեամբ: Կը հասկնաս բազմաթիւ հարցեր կան զորս կուլ տալ դժուար է ինծի համար:

- Վստահօրէն, ըսաւ: Քեզի պիտի պատմեմ: Բայց նախ գարեջուր մը առնենք:

Ոտքի պիտի կանգնէի, երբ Առնէտ զիս կեցուց:

- Ես կը բերեմ -, ըսաւ: - Ի վերջոյ հոս տանս մէջ եմ:

Մթութեան մէջ վստահ քայլերով ուղղուեցաւ խոհանոց, եւ լսեցի որ սառնարանէն գրկաչափ մը գարեջուրի տուփեր կը հանէր: Կը լսէի իր շարժումները, բացիւփելով աչքերս: Սենեակի խաւարը եւ կոպերուս տակի խաւարը թեթեւօրէն տարբեր գոյներ ունէին:

Երբ վերադարձաւ, բազմաթիւ գարեջուրի տուփեր դրաւ սեղանին վրայ: Խարխափելով բռնեցի տուփ մը, անջատեցի կափարիչը եւ կէսը դատարկեցի:

- Մութին մէջ, այդքան ալ գարեջուրի համ չունի, ըսի:

- Կը ցաւիմ, բայց հարկ է որ այսպէս մնանք, մութին մէջ:

Առանց բառ ըսելու, շարունակեցինք խմել:

«Լաւ», յարեց, յստակացնելով ձայնը: Դատարկ տուփս դրի սեղանին վրայ, եւ միշտ փաթթուած վերմակովս, կը հետեւէի, առանց շարժելու, սպասելով այն պահը երբ պիտի սկսէր խօսիլ: Իր խօսքին շարունակութիւնը չէր գար: Կը լսէի միայն որ իր տուփը կը շարժէր կշռելու համար մնացած հեղուկի քանակը: Իր հին այլանդակ սովորութիւնը:

«Լաւ», կրկնեց: Որմէ ետք մէկ շունչով դատարկեց իր գարեջուրը եւ տուփը չոր հարուածով մը դրաւ սեղանին վրայ: - Նախ, ինչպէ՞ս կը պատահի որ հոս կը գտնուիմ, սկսինք այստեղէն, համաձայն ենք:

Չպատասխանեցի: Հասկնալով որ պատասխանելու փափաք չունէի, շարունակեց:

- Հինգ տարեկան էի, 1953-ին, երբ հայրս այս վայրը գնեց: Ինչո՞ւ նման կորսուած վայրի մէջ այսպիսի հողամաս մը գնել: Ես դեռ ես ինծի հարց կու տամ, բայց կ'ենթադրեմ որ, ամերիկեան բանակէն բարեկամի մը միջոցով, զայն ձեռք ձգած է պատառ մը հացի գինով: Նկատած ըլլալու ես որ հազորդակցութիւնները սոսկալի են, եւ ձմրան, հազիւ ձիւնել սկսած, անոնք անգործածելի են մանաւանդ: Գրաւման բանակները ծրագրած էին ճամբաները շինել եւ հոս հաստատել ռատարներու կայան մը, կամ այդ ձեւի բան մը, բայց տեսնելով թէ ան սուղ պիտի արժէ եւ յոգնեցուցիչ պիտի ըլլայ, հրաժարած են իրենց ծրագրէն: Չխօսինք քաղաքին մասին, որ շատ աղքատ էր վստահօրէն անօգուտ ճամբու բարելաւման պերճանք մը հրամցնելու ինքն իրեն: Եզրակացութիւն. վայրը նետուած էր մոռացութեան դարակներուն մէջ:

- Եւ Ոչխարական գիտութիւններու Դոկտորը, ինք չէ՞ր ուզեր հոս վերադառնալ:

- Արդէն երկար ատենէ ի վեր Ոչխարական գիտութիւններու Դոկտորը կ'ապրի իր

յուշերով եւ ոչ մէկ փափաք ունի ոչ մէկ տեղ վերադառնալու:

- Հաւանօրէն:

- Օ'ն, անգամ մը եւս խմէ, ըսաւ:

Իրեն ըսի որ այլեւս չէի ուզեր: Վառարանին հետ, զոր ես մարած էի, բառացիօրէն սառած էի: Միայն ինքնիրեն հրամցուց եւ շարունակեց խմել:

- Հայրս այս վայրին հանդէպ կայծակնային սէր ունեցաւ, ինք զբաղեցաւ ճամբու բարելաւումով եւ տան նորոգութեամբ: Այս իրեն շատ սուղ արժեք, կը խորհիմ: Թէ-եւ, շնորհիւ աղոր, տունը բնակելի դարձաւ, գէթ ամառը, պայմանաւ որ փոխադրամիջոց ըլլար: Ինք է որ հաստատեց ջեռուցումը, բաղնիքը, լուացարանները, հեռաձայնը, օժանդակ ելեկտրականութիւն արտադրող սարքը, այսինքն՝ ամէն ինչ: Հարց կարելի է տալ թէ ի՞նչ պայմաններու մէջ նախապէս հոս կ'ապրէր Ոչխարական գիտութիւններու Դոկտորը»:

Առնէտը ձայն մը արձակեց ձգեռտի եւ հառաչանքի միջեւ:

- 1955-ի եւ 1963-ի միջեւ, հոս կու գայինք ամէն ամառ: Այսինքն ծնողքս, մեծ քոյրս, սպասուհին եւ ես: Երբ այդ մասին կը խորհիմ, կը տեսնեմ որ կեանքիս ամենէն պարկեշտ ժամանակաշրջանն էր: Մարգագետինները կը տրամադրէինք գիւղին, միշտ այդպէս է կացութիւնը ամէն ամառ, հոս ոչխարներով լեցուն էր: Իրապէս այդ կը տեսնէիր միայն: Այն աստիճան որ ամառնային բոլոր յուշերս դրոշմուած են ոչխարներով:

Դժուարութեամբ կ'երեւակայէի թէ ինչ կը ներկայացնէր գիւղական տուն մը ունենալ, արդէն իսկ տարակուսելով որ կեանքիս ընթացքին հոն պիտի չհասնէի:

- Բայց վաթսուականներու կէսէն սկսեալ, ընտանիքը հագուադէպօրէն հոս կու գար: Քիչ մը անոր համար որ հայրս երկրորդ գիւղական տուն մը գնած էր, աւելի մօտ, եւ միջոցին քոյրս ամուսնացած էր, քիչ մը նաեւ անոր համար, որ պահ մը հօրս ընկերութիւնը սկսաւ տկարանալ, եւ իմ ու ընտանիքիս միջեւ յարաբերութիւնները լաւ ընթացք չունէին: Հետեւանքը եղաւ այն որ կալուածը լքուեցաւ: 1967-ին էր որ վերջին անգամ հոս եկայ: Առանձին էի եւ ամիս մը մնացի:

Առնէտը պահ մը դադար առաւ, կարծէք յուշ մը արթնցած էր:

- Հոս, առանձին, քիչ մը տխուր ըլլալու է, այդպէս չէ՞:

- Մի՛ այդպէս մտածեր: Պիտի ուզէի աւելի երկար մնալ: Բայց այդ կարելի չէր: Հոս հօրս քով էի, եւ չէի ուզեր այդ իրեն պարտիլ:

- Ուրեմն հիմա տարբեր է:

- Ո՛չ -, ըսաւ: - Եւ ճիշդ աղոր համար է որ կ'ուզէի մանաւանդ խուսափիլ հոս գալէ: Բայց երբ պատահամբ «Տըլփին» հիւրանոցի սրահի պատէն կախուած այդ նկարը տեսայ, վերադառնալու եւ շրջապատին վրայ աչք մը նետելու բոլուն փափաք մը ունեցայ: Կարճ, պարզ, շատ զգացական: Այդ գիտես, չէ՞:

- Հըմ...-, ըսի: Վերստին կը տեսնէի ծովը թաղուած հողերու ծածքի տակ:

- Այն ատեն է որ իմացայ Ոչխարներու գիտութեան Դոկտորի պատմութիւնը, շարունակեց խօսիլ: Պատմութիւնը ոչխարի մը որ իրեն երեւցած էր երազի մէջ եւ կռնակին ունէր աստղի մը դրոշմը: Այդ մասին լսած ես, այդպէս չէ՞:

- Անշուշտ:

- Մնացեալը կ'ամփոփեմ -, շարունակեց: - Երբ այդ պատմութիւնը լսեցի, յանկարծ ձմեռը հոս անցնելու ցանկութիւն ունեցայ: Իրապէս հզօր զգացում մը: Այն

աստիճան որ հօրս հետ յարաբերութիւններս հարցին մէջ ծանր չէին կշռեր: Ուստի, հաւաքեցի անհրաժեշտ պիտոյքը եւ հասայ հոս: Կարծէք զիս քաշած ըլլային ծուղակի մը մէջ:

- Եւ հոս հանդիպեցար հռչակաւոր ոչխարին:
- Ըսածիդ պէս:
- Ինծի համար շատ դժուար է քեզի պատմել թէ յետոյ ինչ եղաւ -, ըսաւ Առնէտը: Չեմ խորհիր որ պիտի կարենաս իրապէս հասկնալ թէ որքա՛ն այդ դժուար է ինծի: Մատներով ճզմեց իր երկրորդ գարեջուրի դատարկ տուփը:
- Պիտի նախընտրէի որ դուն հարցումներ ուղղես: Շատ մը բաներ արդէն յստակ են քեզի, այդպէս չէ՞:

Գլխու շարժումով հաւանութիւն յայտնեցի: «Հարցումներս կ'ուղղեմ այնպէս ինչպէս որ կու գան, խառնիխուռն, եթէ կ'ուզես»:

- Տարբերութիւն չ'ըներ:
- Դուն արդէն իսկ մեռած ես, այդպէս չէ՞:

Առնէտի պատասխանէն առաջ հեղձուցիչ երկար ժամանակ մը սահեցաւ: Ժամանակ՝ որ թերեւս սպառեցաւ բոլոր մը երկվայրկեաններու մէջ, բայց որ ինծի յաւիտենութեան չափ էր: Բերնիս մէջը բառացիօրէն չորցած էր:

- Այո՛ -, ըսաւ խաղաղօրէն: - Մեռած եմ:

12. Առնէտը կը լարէ պատի ժամացոյցը

- Ինքզինքս կախեցի խոհանոցի գերաններէն մէկէն: Ապա, ոչխար-մարդը զիս թաղեց կառատան մօտ: Եթէ այդ է որ քեզի վիշտ կը պատճառէ, գիտցիր որ ցաւ չզգացի: Բայց այս բոլորը իմաստ չունին:

- Ե՞րբ:
- Քու հասնելէդ շաբաթ մը առաջ:
- Այն ատեն է որ լարեցիր ժամացոյցը, այդպէ՞ս է:

Մարեցաւ խնդալէն: - Այդ հետաքրքրական բան է, նուազագոյնը զոր կարելի է ըսել: Վերջին, ամենավերջին բանը զոր մտածեցի ընել, երեսուն տարուան կեանքէ ետք, ժամացոյց լարել էր: Կը պատկերացնե՞ս: Մտածելու խնդիր է, այդպէս չէ՞: Ժամացոյց լարել մինչդեռ պիտի մեռնիս... Ջարմանալի գաղափար...

Այն պահուն երբ լռեց, չըջապատը ինկաւ խոր լռութեան մէջ ուր կը լսուէր ժամացոյցի կշռութաւոր թիթ-թաթը: Ձիւնը կը խեղդէր բոլոր միւս ձայները: Կը նմանէինք տարածութեան մէջ կորսուած երկու վերապրողներու:

- Եւ եթէ...
- Օհ, վերջ տուր, ըսաւ կտրուկ կերպով: Կարեւորութիւն ունեցող «եթէ» չկայ: Յամենայն դէպս այդ գիտես, չէ՞:

Գլուխս օրօրեցի ժխտական կերպով: Ոչ, չէի գիտեր:

- Եթէ շաբաթ մը առաջ եկած ըլլայի, նոյնքան մեռած պիտի ըլլայի ինչպէս հիմա: Թերեւս զիրար տեսած պիտի ըլլայինք ըսենք նուազ մութ եւ աւելի ջերմ պայմաններու մէջ... Բայց այդ բացարձակապէս ոչինչ պիտի փոխէր անկէ՝ որ պէտք էր մեռնէի: Այդ նոյնիսկ աւելի ցաւեցնող պիտի ըլլար: Եւ կը խորհիմ որ ես պիտի չկարենայի այդ տանիլ:

- Ինչո՞ւ պէտք էր որ մեռնէիր:

Կը լսեմ մէկը միւսին շփուող ձեռքերու ձայն:

- Շատ փափաք չունիմ այդ մասին խօսելու: Գովերգութիւնս ընելու երեւոյթ կրնամ ունենալ: Եւ ի՞նչ աւելի ծիծաղելի է քան մեռեալ մը որ ինք իր գովերգութիւնը կ'ընէ:

- Ինչպէ՞ս կ'ուզես որ հասկնամ եթէ չբացատրես:

- Գարեջուր մըն ալ առ:

- Շատ կը մսիմ, ըսի:

- Մինչդեռ այդքան ալ ցուրտ է:

Դողացող ձեռքով, քաշեցի տուփի մը օղակը եւ ումպ մը խմեցի: Երբ գարեջուրը հոսեցաւ ներսս, իրեն իրաւունք տուի. այդքան ալ ցուրտ է:

- Քեզի պիտի ըսեմ, պայմանաւ որ խոստանաս թէ ուրիշի պիտի չկրկնես:

- Ըսէ ինծի թէ ո՞վ պիտի հաւատայ մէկ բառին այն բանին զոր պիտի պատմեմ:

- Okay, շահեցար -, ըսաւ խնդալով: - Ո՞վ պիտի հաւատայ այսքան արտառուց պատմութեան մը, հը՞:

Ճօճանակը ժամուան կէսը հնչեց:

- Եթէ քեզ չի խանգարեր, այս ժամացոյցը պիտի կեցնեմ -, ըսաւ: - Այս թիք-թաքը զիս կը խենթացնէ:

- Ինչպէս որ կ'ուզես, քու ժամացոյցդ է:

Գնաց եւ բացաւ ճօճանակի դռնակը եւ կշռածողը անշարժացուց: Անոր հետ, ձայնը եւ ժամանակը սառեցան եւ անհետացան Երկրի այս երեսէն:

- Արագ ընելու համար -, վերսկսաւ Առնէտը, - մեռայ իմ մէջս ունենալով ոչխարը: Սպասեցի որ ան խոր քուն մտնէ, երթալու եւ խոհանոցէն առնելու համար չուան մը: Կտրիճը ժամանակ չունեցաւ փախչելու:

- Իրապէս ստիպուած էիր այդ ընելու:

- Իրապէս ստիպուած էի այդ ընելու, ինչպէս կ'ըսես: Եթէ քիչ մըն ալ ուշանայի, ոչխարը ամբողջովին ինծի տէր կ'ըլլար: Վերջին պատեհութիւնս էր:

Կրկին շփեց ձեռքերը: Պիտի նախընտրէի քեզի հանդիպիլ երբ դեռ իրապէս ես՝ ես էի: Ես, իմ յիշատակներովս, իմ տկարութիւններովս: Այս պատճառով է որ քեզի ղրկեցի այդպիսի գաղտնագիր պատգամ մը որ լուսանկարն էր: Ես ինծի կ'ըսէի որ եթէ դիպուածը քեզ բերէր հոս, լաւ, ան զիս պիտի փրկէր:

- Եւ ան քեզ փրկե՞ց:

- Այո՛, - ըսաւ Առնէտը հանդարտօրէն: Ան զիս փրկեց:

- Էական կէտը տկարութիւնն է -, ըսաւ: - Անով ամէն բան սկսաւ: Կը հասկնա՞ս թէ ինչ կ'ուզեմ ըսել:

- Բարեկամ, ամէն ոք տկար է:

- Այդ պարզապէս ընդհանրութիւն մըն է -, ըսաւ իր մատները տրորելով: - Ոչ ոք ոչ մէկ տեղ կը հասնի ընդհանրութիւններ շարելով: Ես քեզի կը խօսիմ շատ անձնական բանի մասին: Տկարութիւնը այն է որ քեզ կը փտեցնէ ներսէդ: Տեսակ մը փտախտ: Ես այդ սկսայ զգալ երբ հազիւ տասներեք տարեկան էի: Անկէ ի վեր միշտ պրկուած եղած եմ այդ պատճառով: Կրնա՞ս երեւակայել թէ ինչ բան է ունենալ բան մը որ քեզ ներքնապէս կը փտեցնէ, անոր զիտակցիլ, կրնա՞ս երեւակայել թէ այդ ինչ բան է:

Փաթթուած վերմակիս մէջ, համր կը մնայի:

- Ձեմ խորհիր որ կրնաս հասկնալ -, շարունակեց ան: - Դուն այս կողմին չես պատկանիր: Բայց այսուհանդերձ այդպէս է, տկարութիւնը: Ան ծինային հիւանդութիւն է: Կրնաս այդ գիտնալ, բայց անկէ չես կրնար բուժուիլ: Եւ պէտք չէ յուսալ որ առաւօտ մը ան հեռանայ այս կամ այն բանական պատճառով: Ընդհակառակն, ան օրէ օր կը վատանայ:

- Ի՞նչ բանի հետեւանք է տկարութիւնը:

- Ամէն բանի հետեւանք է: Ան բարոյական տկարութիւն մըն է, գիտակցութեան տկարութիւն մը, գոյութեան իսկ տկարութիւն մը:

Պոռթկացի ինդալէս: Այս անգամ այդ դիւրութեամբ եկաւ: - Այս հաշուով, ըսէ ինծի, ո՞վ տկար չէ:

- Բաւ են ընդհանրութիւնները: Քիչ առաջ ըսի քեզի: Վստահօրէն ամէն ոք տկարութիւններ ունի: Բայց ես քեզի կը խօսիմ իրական տկարութեան մը մասին, որ նաեւ հագոռագիւտ է ինչպէս իրական ուժը: Բայց որովհետեւ դուն չես գիտեր թէ ինչ բան է այդ, այդ տկարութիւնը որ քեզ ամէն օր քիչ մը աւելի կը տանի խաւարի մէջ: Դուն չես գիտեր որ ան գոյութիւն ունի այս աշխարհին մէջ: Գիտես, չենք կրնար ամէն բան ընդհանրութիւններու վերածել:

Չպատասխանեցի:

- Ճիշդ ասոր համար է որ ես հեռացայ մեր քաղաքէն: Չէի ուզեր ցուցադրել ինքզինքիս քիչ մը աւելի մեծ չափով կըրումը: Ներառեալ քեզի: Առանձին շրջելով այնպիսի վայրերու մէջ զորս չէի գիտեր, առնուազն ուրիշները չէի խանգարեր: Եւ վերջապէս... իր շեշտը միթաքնեցաւ եւ պահ մը լուռ մնաց: - Վերջապէս -, շարունակեց խօսիլ: - չկրցայ խուսափիլ ոչխարի ազդեցութենէն, կրկին այս տկարութեան պատճառով: Բացարձակ կերպով հակազդելու անկարող էի: Ենթադրենք որ դուն անմիջապէս եկած ըլլայիր, այդ ոչինչ պիտի փոխէր: Ոչ աւելի ոչ պակաս եթէ որոշած ըլլայիր այս լեռնէն իջնել: Անպայման վերադարձած կ'ըլլայի: Կը տեսնե՞ս, այս է տկարութիւնը:

- Բայց քեզմէ ի՞նչ կ'ուզէր այդ ոչխարը:

- Ամէն բան: Ամէն բան կ'ուզէր, լաւագոյնը եւ յոռեգոյնը: Մարմինս, յիշողութիւնս, հակասութիւններս, տկարութիւնս իսկ... խենթ կ'ըլլայ նման բաներու համար: Ամէն տեսակի շօշափուկներն ունի, խայտառակը, եւ կը ծծէ ամէն բան, մէջը կը խրէ ամէն տեսակի բարակ խողովակներ, քիթի եւ ականջի ծակերուդ մէջ, քեզի կաթիլ մը իսկ չձգելու համար: Դեռ կը փշաքաղուիմ այդ մասին մտածելով:

- Այդ բանով մը կը փոխարինուէր, չէ՞:

- Եւ ինչպէ՞ս: Առասպելական բան մը: Չափազանց գեղեցիկ ինծի պէս մէկուն համար: Թէպէտ ոչխարը ինծի յստակ որեւէ պահանջ չներկայացուց, եւ ես անկէ նշմարեցի փոքրիկ մաս մը: Ինչ որ ալ ըլլայ...

Առնէտը կրկին լռեց:

- Ինչ որ ալ ըլլայ, կատարելապէս գրաւուած էի: Աւելի քան ինչ որ պիտի չհամարձակէի խոստովանիլ: Բառերով քեզի չեմ կրնար բացատրել: Երեւակայէ հոցի մը հրաշէկ բերանը որ պիտի ծծէր եւ հալեցնէր բացարձակապէս ամէն բան: Ճշգրիտ կերպով այդ էր: Ուժասպառ դարձնող գեղեցկութիւն մը, եւ միաժամանակ սատանայական հրէշութիւն մը: Հագիւ թէ մարմինդ նետես անոր մէջ, ամէն բան կը կորսուի:

Գիտակցութիւնը, արժէքները, յուզումը, ցաւը: Ամէն բան: Եթէ կ'ուզես, այդ բան մը ունէր կեանքի նախնական զօրութիւններու ուժականութենէն երբ անոնք առաջին անգամ յայտնուեցան տիեզերքի միայն մէկ կէտին վրայ:

- Բայց դուն դիմադրելու միջոցը գտար:

- Այո': Ամէն բան թաղուեցաւ մարմնիս մէջ: Գործողութիւն մըն ալ եւ ամէն բան պիտի թաղուի յաւիտենութեան համար:

- Գործողութիւն մը...

- Գործողութիւն մը, այո: Եւ դուն յանձն պիտի առնես ազիկա: Բայց այժմ այդ ձգենք:

Երկուքս ալ մեծ ուժակերով գարեջուր կուլ տուինք: Ես կը սկսէի տաքնալ:

- Եւ ո՞ւր, հարց տուի: Զեւով մը մտրակ՝ որուն միջոցաւ ոչխարը իր հիւրընկալին հետ ուզածին պէս կը վարուէր, այդպէ՞ս է:

- Ճիշդ: Անգամ մը որ կը հասնինք ուռին, անկարելի է խուսափիլ ոչխարէն:

- Խորքին մէջ, ի՞նչ կը հետապնդէր ան, Տէրը:

- Ցնորած մըն էր ան: Զկրցաւ դիմադրել հնոցի տեսարանին: Ոչխարը գայն գործածեց կառուցելու համար իշխանութեան հսկայական կազմակերպութիւն մը: Ուրեմն մտաւ անոր մէջ, բայց անկէ ձերբազատուելու համար երբ այլեւս անոր պէտք չունենար: Մտածման մակարդակին, ան, այդ տիպարը ոչնչութիւն մըն էր:

- Եւ Տիրոջ մահէն ետք, դուն ոչխարին պէտք էր ծառայէիր, քու կարգիդ, ընդլայնելու համար կազմակերպութիւնը:

- Կը վախճամ որ այո:

- Բայց այդ բոլորը ի՞նչ բանի պիտի յանգէր:

- Բացարձակ անիշխանութեան յղացքին վրայ հիմնուած արքայութեան մը: Ուր բոլոր ընդդիմութիւնները կոչուած էին կազմելու մեծ Ամբողջութիւն մը: Եւ ես պիտի գտնուէի կեդրոնը, ոչխարին հետ:

- Ինչո՞ւ մերժեցիր:

Ժամանակը սպառեցաւ: Վերը ձիւնը անաղմուկ կը կուտակուէր:

- Իմ տկարութիւնս շատ սիրելի է ինծի: Իմ տառապանքներս, ցաւերս, նաեւ: Շատ կը սիրեմ ամառնային լոյսը, հովին բոյրը եւ ճպուռներու երգը: Այդ բոլորը շատ կը սիրեմ: Ինչպէս քեզի հետ գարեջուր մը խմել, կամ...: Կլլեց իր բառերը. «Ոչ, չեմ գիտեր»:

Բառերը զիս լքած էին: Սեղմուած վերմակին մէջ, կը սեւեռէի խաւարի խորքը:

Կարծէք իրապէս երկու տարբեր նիւթերէ արմատապէս տարբեր բաներ տուած ենք, երկուքս, ըսաւ Առնէտը: Դուն կը խորհի՞ս որ աշխարհ աւելի լաւ պիտի ըլլայ:

- Ո՞վ կրնայ ըսել թէ ինչ բան լաւ է, ինչ բան վատ:

Ճաթեցաւ խնդալէ: - Ահ, կ'երդնում: Դուն հրաշալի՜ արքայ մը պիտի ըլլայիր ընդհանրութեան թագաւորութեան մէջ:

- Եւ, յիշաւի, առանց ոչխարի:

- Ընդունի՞նք, առանց ոչխարի: Մէկ շունչով կուլ տուաւ գարեջուրի երրորդ տուփ մը զոր աղմուկով դրաւ սեղանին վրայ:

- Լաւ պիտի ընէիր որ շատ ուշ չեղած լեռնէն իջնէիր: Ապա թէ ոչ ձիւնի պատճառով փակուած պիտի մնաս: Կ'ենթադրեմ որ ձմեռը հոս անցնելու փափաք չունիս: Զորս կամ հինգ օրէն ձիւնը պիտի սկսի դիզուիլ եւ երբ ճամբան սառի, պիտի չզուար-

ճանապարհ:

- Եւ դու, հիմա ի՞նչ պիտի ընես:

Խաւարին մէջ լսեցի որ սկսաւ գուարթուլութեամբ խնդալ: - Գիտես, ա՛լ չկայ իրապէս «այժմ» որ ինծի համար արժէք ունենայ: Ձմեռը պիտի անցնեմ կորսուելով, այդքա՛ն: Ոչ մէկ գաղափար ունիմ այս ձմեռ տեւելիք ժամանակի մասին, բայց ինծի համար ան պիտի ըլլայ ձմեռ մը: Գոհ եմ քեզ տեսած ըլլալուս: Նոյնիսկ եթէ պիտի նախընտրէի որ այդ ըլլար լոյսի մէջ եւ տաք վայր մը...

- Ժ-ն քեզ կը բարեւէ:

- Իմ կողմէս ալ բարեւէ գինք, համաձա՞յն ես:

- Կինն ալ նաեւ, գինք տեսայ:

- Ինչպէ՞ս էր:

- Ոչ վատ: Միշտ նոյն հաստատութեան մէջ կ'աշխատի:

- Միշտ չէ ամուսնացած, այդպէս:

- Հըմ -, պատասխանեցի: - Պիտի ուզէր որ իրեն ըսես թէ ամէն բան վերջացա՞ծ է թէ ոչ:

- Բացայայտօրէն վերջացած -, ըսաւ: - Թերեւս ես ինքս անկարող եղայ վերջակէտ դնելու, բայց վերջացած է: Իմ կեանքս երբեք նուազագոյն իմաստը չունեցաւ: Բայց, վստահօրէն, եթէ ինծի արտօնես քու ընդհանրացնողի խօսքերդ փոխ առնել, պիտի աւելցնեմ որ, ամէն պարագայի ոչ մէկ կեանք իմաստ ունի: Ճի՞շդ է:

- Կատարելապէս, ըսի: Դեռ երկու հարցում ունիմ:

- Okay:

- Նախ մարդ-ոչխարի մասին:

- Ան իրապէս համակրելի տիպար մըն է:

- Մեր հոս հասած օրը, մարդ-ոչխարը դուռն էիր, կը սխալի՞մ:

Առնէտը գլուխը ետ նետելով իր վիզի ոսկորները ճարճատեց: - Արդարեւ: Այդ ձեւը առած էի: Ուրեմն հասկցա՞ծ էիր:

- Ոչ սկիզբը, - ըսի: - Բայց անդրադարձայ ճամբու ընթացքին:

- Պարկէշտ ըլլալու համար, դուռն գիտ անակնկալի առջեւ դրիր կիթառը ջարդելով: Երբեք քեզ նման բարկութեան մէջ չէի տեսած, աւելին, այդ իմ առաջին կիթառու էր որ զոհ կ'երթար: Բայց հանգիստ եղիր, սուղ չէի վճարած:

- Կը ցաւիմ -, ըսի, ներողութիւն խնդրելով: - Միայն կ'ուզէի քեզ ցնցել որպէսզի բացայայտուիս:

- Օ՛, յամենայն դէպս այս բոլորէն վաղը ոչինչ պիտի մնայ, ըսաւ դառնութեամբ: Երկրորդ հարցումդ կ'երեւակայեմ որ կը վերաբերի girl friend-իդ:

- Արդարեւ:

Առնէտը փակուեցաւ երկարատեւ լռութեան մը մէջ: Լսեցի որ ձեռքերը կը չփէր:

- Պիտի նախընտրէի անոր մասին չխօսիլ: Ան չնախատեսուած ազդակ մըն էր:

- Չնախատեսուա՞ծ ազդակ մը:

- Հըմ: Ինծի համար, այս պիտի ըլլար հանդիպում մը մեր միջեւ: Բայց ան հոն էր: Պէտք էր զայն ներքաշել: Ինձմէ լաւ գիտես, այդ աղջիկը հրաշալի շնորհ մը ունի: Հարցերը իրեն բերել: Կը մնայ որ հոս իր տեղը չէր: Այս վայրը հեռուէն կը գերազանցէ իր կարողութիւնները:

- Բայց ի՞նչ եղաւ ան:

- Մի՛ մտահոգուիր, ան հանգիստ է -, ըսաւ: - Այս ըսելէ ետք, գիտցիր որ այլեւս զայն ոչ մէկ ձեւով գրաւիչ պիտի գտնես: Տխուր է, բայց այսպէս է:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ բան մը կորսնցուց, այդպէս: Իր մէջ բան մը անհետացաւ:

Համը դարձած էի:

- Գիտեմ թէ ինչ կը զգաս -, շարունակեց: - Բայց այդ վաղ թէ ուշ պիտի պատահէր: Նոյն ձեւով քու պարագայիդ, իմ, անհամար աղջիկներու, օր մը բան մը կ'անհետանայ:

Հաւանութիւն յայտնեցի:

- Պէտք է որ երթամ -, ըսաւ: - Երկար չեմ կրնար մնալ: Օր մը, այլ տեղ, պիտի տեսնուինք:

- Վստահօրէն, ըսի:

- Աւելի պայծառ վայր մը, նախընտրաբար ամրան -, ըսաւ Առնէտը: - Բան մըն ալ: Վաղը ժամը իննին, ժամացոյցը կը շտկես եւ իրարու կը կապես վանդակի ետեւի թելերը զորս կը տեսնես: Կանաչը կանաչին հետ, կարմիրը՝ կարմիրին: Եւ յետոյ ժամը իննուկէսին պիտի երթաս եւ լեռնէն պիտի իջնես: Վաղը քանի մը մտերիմներ կէսօրին հրաւիրած եմ թէյի: Okay?

- Վստա՛հ եղիր:

- Գոհ եմ քեզ տեսած ըլլալուս համար, բարեկամս:

Կարճատեւ լուրթիւն մը մեզ պատեց:

- Ողջոյն, ըսաւ Առնէտը:

- Ի տեսութիւն -, ըսի:

Առանց անջատուելու վերմակէս, աչքերս փակեցի եւ սրեցի ականջս: Իր քայլերու չոր ձայնը անցաւ սենեակէն եւ լսեցի դրան բացուիլը: Յուրտ օդի զանգուած մը սահեցաւ տան մէջ, ծանրօրէն թափանցելով, առանց շունչի: Կանգնած մուտքի դրան ծածքին, կը թուէր թէ Առնէտը նայուածքով կը սեւեռէր բան մը, որ ոչ դուրսի համայնապատկերն էր, ոչ ալ սենեակի ներսը, ոչ զիս: Թերեւս կղպանքը, կամ իր կօշիկներուն ծայրը: Յետոյ, այնպէս ինչպէս որ փակած ըլլար ժամանակի դռները, այդպէս ալ դուռը փոքր չխկոցով մը գոցուեցաւ:

Կը մնար լուրթիւնը, ուրիշ ոչինչ:

ՀԱՐՈՒՔԻ ՄԻԻՐԱՔԱՄԻ
«ՎԱՅՐԻ ՈՉԵԱՐԻ ՈՐՈՆՈՒՄԸ»

Հայացուց՝ Յ.Պ.

ՖՐԱՆՉԵՍԻՔ ՓԵԹՐԱՐԲ

1304-1374

Վերածնունդի մեծ բանաստեղծն է իտալացի Ֆրանչեսկո Փեթրարֆ, իր ժամանակի գիտութիւններով հմտացած: 1320-ին կ'ըմբռնէ որ բանաստեղծութեան նոր ձեւ մը ծնունդ առած է, ոչ թէ լատիներէնով, այլ ժողովրդական լեզուով: Գրած է Թոսֆանի բարբառով, որ հիմք պիտի ըլլար գրական իտալերէնի: Զինք ներշնչած է իր մուսան՝ տասնինն տարեկան Լորա տը Նովէս, որուն հանդիպած էր 6 Ապրիլ 1327-ին: Կ'ըսէ թէ «անոր քայլուածքը մահկանացուի ոչինչ ունէր... իր սիրելին հրեշտականման էր... եւ անոր խօսքերը տարբեր հնչեղութիւն ունէին մարդկային ձայնէն», եւ կ'եզրակացնէ. «Ես որ սրտիս մէջ



ունէի սիրային կայծը, զարմանալի չէր որ յանկարծ բռնկէի»: Լորա պիտի մեռնի իրենց հանդիպումէն ետք քսանմէկ տարի ետք, 6 Ապրիլ 1348-ին: Ցնցուած, կը գրէ, որ «գալիք սերունդները պիտի կարենան՝ հաւատալ մման մեծ դժբախտութեան մը»: Լորա գոյութիւն ունեցա՞ծ է թէ իտալականացուած տիպար մըն է, այս հարցով ալ վիճողներ կան: Որպէս դիւանագետ իր Գամբրոլոսիւններու ընթացքին Փեթրարֆ կը զարգացնէ իր մարդկայնութիւնը — humanisme — եւ մշակոյթը: Բնարական եւ մեծապէս ջերմ բանաստեղծութիւններու կողմէն, ունի լատիներէնով կրօնական եւ պատմական ուսումնասիրութիւններ: Ներշնչած է Եւրոպայի Վերածնունդը: Իտալական բանաստեղծութեան կոթողական դէմքերէն է, անմահութիւն նուաճած է բանի եւ բառի կատարելութեամբ երգելով Լորայի սէրը: Իր հոչակը եւ ազդեցութիւնը, ռեալական եւ լեզուական, կը պարտինք հատորի մը, Canzoniere-ի, ուր վերանորոգուած են իր նախորդներու ձեւի եւ զգացական եղանակները: Իր մէջ միաժամանակ կ'ամփոփէ անցեալը եւ ապագան, յունահռոմէական ժառանգութիւնը եւ քրիստոնէութիւնը, գուարթախոհութիւնը եւ ինքնամ-

փոփումը, բնարականութիւնը եւ հմտութիւնը, ներքինն ու արտաքինը: Իր ողջութեանը իրեն տրուած է Ապոլոնի պսակը Սորպոնէն, նոյնը առաջարկած է Հռոմի Ծերակոյտը: Մեծ եղած է իր ազդեցութիւնը Ֆրանսայի գրական վերածնունդին վրայ, Տիւ Պելլէ եւ Ռոնսար ներշնչուած են իրմէ: Նաեւ աւելի ուշ Շաքսպիրան, Վիլքոք Նիլսոն եւ Վերլէն: Ունեցած է բեղուն կեանք մը: Իր դիմանկարները եւ ֆանդակները բազմաթիւ են Իտալիա եւ այլ երկիրներու մէջ: Փեթրարֆի հնչեակները — sonnet — հոչակաւոր են եւ կը վկայեն իր արտակարգ արուեստին մասին: Հնչեակը կը բաղկանայ ութը տողե-

րէ, բաժնուած երկու ֆառեակներու, որոնց կը հետեւին վեց տողեր, բաժնուած երկու երրեակներու: Բանաստեղծը, առաջին մասով կը խօսի նիւթի մը մասին, երկրորդ մասով կը ներկայացնէ անձնական խորհրդածութիւն մը նոյն նիւթի մասին: Բանաստեղծութեան դժուար սեռ մըն է հնչեակը, որուն մեծ վարպետները մեր գրականութեան մէջ, Միսսա Մեծարեցն ու Վահան Թէֆէեանն են:

Այս հպանցիկ ծանօթութիւնները եզրակացնելու պատիւը կը ձգենք Վիլքոք Նիլսոյի, որ կը գրէ. «Փեթրարֆ լոյս մըն էր իր ժամանակին, եւ գեղեցիկ բան է որ լոյս կու գայ իր սէրէն: Սիրեց կին մը եւ հմայեց աշխարհը: Փեթրարֆ բանաստեղծութեան տեսակ մը Պղատոնն է, ան ունի ինչ որ կարելի է կոչել սրտի նրբութիւնը, եւ միաժամանակ միտքի խորութիւնը: Այս սիրահարը մտածող մըն է, այս բանաստեղծը իմաստուն մըն է»:

Մեծ մը, որուն կեանքը, գործը եւ ազդեցութիւնը շատ քիչ ծանօթ են հայ գրականութեան մէջ եւ հայ գրասէրներու:

Համադրում՝ Բ.

ՓԵԹՐԱՐՔԷ ՀԱՅԵՐԷՆՈՎ ՎԵՐԾԱՆՈՒԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐՀՆԵԱԼ ԸԼԼԱՅ ՕՐԸ...

Օրհնեալ ըլլայ օրը, օրհնեալ ըլլայ ամիսը, տարին
 եւ եղանակը, եւ պահը եւ ժամը, եւ բոլորէն
 Օրհնեալ ըլլայ երկիրը, եւ վայրը ուր հանդիպեցայ
 երկու այնքան գեղեցիկ աչքերուն որոնք զիս կախարդեցին:

Եւ օրհնեալ ըլլայ քաղաք տառապանքն առաջին
 երբ զգացի գերին ըլլալ Սիրոյն
 եւ օրհնեալ ըլլան աղեղը, մետը՝ որ զիս խոցեց
 եւ օրհնեալ ըլլայ վերքը գոր սրտիս մէջ կը կրեմ:

Օրհնեալ ըլլան ցանուած խօսքերը բոլոր
 Որոնք կը հոչակեն անունն անոր որ Տիրուհիս է
 Օրհնեալ ըլլան հառաչանք, արցունք ու ցանկութիւն

Եւ բանաստեղծութիւններ օրհնեալ ըլլան
 Որոնցմով փառքն իր կը քանդակեմ եւ մտածումս
 Դէպի իրեն միայն ձգտող, օտար այլ ուրիշի:

ՈՍԿԵԱՅ ԾԱՄԵՐ

Ժամանակին կային ոսկեայ ծամեր
Ոսկեայ ծամեր որոնք թռչեին հագարաւոր քաղցր վայրեր:
Եւ տարտամ լոյսը զարմանալի կերպով կ'այրէր:
Գեղեցիկ աչքերը այնքան ալ տկար չեն որքան կը թուին ըլլալ:

Եւ ես զանոնք տեսայ զաւելտի գոյներու մէջէն:
Ձեմ գիտեր թէ այդ իրաւ էր թէ կեղծ, ինծի կը թուէր
Որ սիրոյ խայծը կը հասներ կուրծքիս:
Ո՞ր հրաշալիքը այնքան շուտ կ'այրի:

Քայլերը մահկանացու բաներ չեն
Այլ հրեշտակային ձեւեր, եւ խօսքերը
Կը հնչեն այլապէս, մարդկային քիւրեղ ձայն:

Երկնային ոգի մը, ապրող մը մենաւոր,
Կար ինչպէս ես տեսայ, եւ առանց սահմանի:
Խոցը չի բուժուիր անգամ մը որ աղեղը ձգուի:

ԵՍ ԿԸ ՀԵՌԱՆԱՄ ԱՐՏԱՍՈՒԵԼՈՎ...

Ես կը հեռանամ անցեալիս վրայ արտասուելով
Եւ մահկանացու իրերու վրայ կը հանգչիմ,
Առանց թափով վերանալու ինքս ալ թեւեր ունենալով,
Թերեւս չտալու համար ես իմ մասին վատ օրինակ:

Դուն որ կը տեսնես իմ ցաւերս սրբապիղծ ու անարժան,
Արքայ երկնի անտես եւ անմահ,
Գնա՛ օգնելու քեզմէ հեռացած եւ դիւրաբեկ հոգիին
Եւ թերութիւնն իր քու Շնորհովդ լեցուր:

Եթէ ես ապրած ըլլայի մէջն ուղմի եւ փոթորիկի,
Մեռած կ'ըլլայի խաղաղութեամբ եւ ճիշդ հանգրուանի,
Եթէ մակատումը եղաւ զուր, գէթ թող ըլլայ պարկեշտ:

Քիչը որ կը մնայ ինծի ապրելու եւ մեռնելու,
Կը ցանկամ պատրաստ ըլլալ ձեռքիդ մէջ,
Լաւ գիտես որ քեզմէ զատ ոչ ոքի մէջ յոյս կը դնես:

ԳՈՒՍԱՆԸ – Canzoniere

Ոչ մէկ խաղաղութիւն կը գտնեմ եւ չունիմ պատերազմ մղելիք,
Կը վախճամ եւ կը յուսամ, կ'այրիմ եւ սառած եմ:
Եւ երկինքի քարձրակէտին կը սաւառնիմ ու կը մնամ հողին վրայ,
Եւ կուրծքիս վրայ ոչինչ կը սեղմեմ եւ կը գրկեմ աշխարհն համայն:

Ով զիս կը պահէ բանտի մէջ, դուռը ոչ կը բանայ եւ ոչ կը փակէ,
Ոչ զիս կը համարէ որպէս իրեն, ոչ ալ կապանքները կ'արձակէ:
Սէրը զիս չի սպաններ եւ շղթաներս չի քակեր:
Զիս ողջ չ'ուզեր, եւ չի փութար ինծի օգնութեան:

Կը տեսնեմ եւ աչքեր բնաւ չունիմ, եւ առանց լեզուի կը պոռամ,
Եւ կը ցանկամ անհետանալ, եւ օգնութիւն կը հայցեմ,
Եւ ինծի համար սոսկ ոխ ունիմ եւ ուրիշի համար միայն սէր:

Կը սնանիմ ցաւովս եւ կը քրքամ լալով,
Հաւասարապէս անտանելի են կեանք եւ մահ,
Այս վիճակին մէջ եմ, Տիկի՛ն, քեզի համար:

Հայացուց՝ Յ. Պ.

«ԱՅՐՈՒԲԵՆԵՆ ՄԻՆՉԵՒ ԶԱՐԹՕՆՔ»



ԶՈՔԱՔ ԷԼ ՊԼԱԹ՝ ԿՈՐՍՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ ՄԸ

Պտոյտի մը սահմաններուն մէջ ընկալուած նորը իր տպաւորութեան տակ երկա՛ր կը պահէ մարդս, որուն գիտելքներն ու յիշողութիւնը կը հարստանան տակաւ առ տակաւ, մանաւանդ երբ այցելուած վայրը քաղաքակրթութեան մը կնիքը կը կրէ: Ա՛լ ուր մնաց, որ քու ծննդավայրիդ մէկ անտեսուած իրականութեան է, որ կը ծանօթանաս, երբ անակնկալ պտոյտի մը հրաւերը կը ստանաս: J48

Այս իմաստով, 22 Յուլիս, 2009-ի յետմիջօրէն լիբանանեան հայրենիքի բազմաշերտ քաղաքակրթութեան մէկ էջը բացաւ մեր դիմաց, երբ ԲԱԳԻՆԻ ուղղուած հրաւերի մը ընդառաջելով ներկայ եղանք Պէյրութի Զոքաք էլ Պլաթ չըջանի մէջ կազմակերպուած «Այբուբենէն մինչեւ զարթօնք» խորագրեալ նախաձեռնութեան մը բացման հանդիսութեան, շնորհիւ տիկին Միրէյ Խանամիրեանի, որ ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն ըլլալով, իր կարգին հրաւիրած էր լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներ: Զեռնարկին նպատակը՝ հանրութիւնը իրազեկ դարձնել այն ճշմարտութեան, ըստ որուն՝ Լիբանանի Արեւմտեան չըջաններէն Զոքաք էլ Պլաթի մէջ այսօրուան դրութեամբ կ'ապրի ու կը շնչէ քաղաքակրթութիւն մը, որուն ապահով երթը սակայն վտանգուած կը թուի ըլլալ, պետական հովանաւորութենէն զուրկ ըլլալուն պատճառով: Ու պտոյտ մը՝ այս նպատակին համար գործի լծուած երեք փոխադրակառքերու շնորհիւ, մեզ հաղորդակցութեան մէջ դրաւ Զոքաք էլ Պլաթ չըջանի քանի մը թաղերու մէջ քանդուելու եւ անհետ կորսուելու ճակատագրին դատապարտուած տասնեակ մը շինութիւն-կառոյցներու հետ, որոնք իրենց կառուցման տարեթիւերով ու ճարտարապետական ոճով՝ Լիբանանի անցեալ դարերու քաղաքակրթութեանց լաւագոյն վկաները կը հանդիսանային: Անոնց շարքին կային նաեւ վերափոխւածներ, որոնցմէ ոմանք այսօր կը գործեն իբրեւ վարժարաններ, մշակութային կեդրոններ ու հաստատութիւններ, սակայն քիչ չէր նաեւ լքուածներուն թիւը, 25 կոթողային շինութիւններուն կէսէն ավելին թերեւս, որոնց ի տես մարդ չէր կրնար իր զայրոյթը զսպել՝ մշակութային նմանօրինակ արժէքներու նկատմամբ ցուցաբերուած պետական անտարբերութեան ի տես...

Օրինակ՝ Պէյհօւմ նշանաւոր ընտանիքին կառուցած համալիրը, անհետ կորսուած՝ Խալիլ Սար-

գիսի բնակարանը, կառուցուած՝ 19-րդ դարուն, այլեւ նախկին պալատներ ու բերդեր՝ յունահուն-մէական, օսմանեան, արաբական եւ պարոք տիպի, իւրաքանչիւրը մօտիկ թէ հեռաւոր անցեալի մը վկան ու թարգմանը կը հանդիսանար թէեւ, իբրեւ Լիբանանի յայտնի ընտանիքներու այդ օրերու բնակավայրն ու ամարանոցը, նաեւ մէկը անոնցմէ, որ ծառայած է իբրեւ օսմանական զօրանոց, ուր եւ անցեալ դարու կէսերուն աշխարհ եկած է լիբանանեան երգարուեստի աստղերէն Ֆէյրուզ, եւ սակայն այդ երբեմնի չքեղ կառոյցներուն մեծ մասը այսօր աւերակուած ու լքուած՝ մերթ կը ծառայէ աներդիքներու իբրեւ կայք, մերթ ալ իբրեւ բանջարանոց, արհեստի կեդրոն, թէ առեւտրի կրպակ... Կատարեալ անտէրութիւն մը կը տիրէր մանաւանդ քանի մը նշանաւոր կառոյցներու պարագային: Անոնցմէ ամէնէն յատկանշականն ու աչքի զարնողը՝ նշանաւոր առեւտրական եւ բանաստեղծ Պշարա Ապտալլա Խուրիի, ծանօթ՝ «Ախթալ Ալ Սադիր» գրչանունով (1885-1968), կառուցած դղեակ-պալատն էր՝ իր թոսքանեան պարտէզով, պարոք տիպի քարերով ու մանաւանդ՝ օդէն կախուած ոլորապտոյտ քարեղէն աստիճաններով, որոնք հիացականին հետ նաեւ սրտառուչ արտայայտութիւններ խլեցին մեզմէ շատերէն, երբ մեր փոխադրակառքը անցաւ մացառներու մէջ կորսուած կառոյցին քովէն եւ մեր առաջնորդէն լսեցինք լրացուցիչ բացատրութիւններ:

Բանաստեղծի մը յիշատակն ու պալատ մը՝ լքուած ու անտէր, որ հիմա կարծես կը ծառայէր չրջանի տղոց գիշերային հանդիպման վայրին ու ներսը դրուած մոթոսիքլէթի տիրոջ ու երեւի անոր ընտանիքին ապահով կեցութեան: Մարդը իր խորքէն ցնցող իրականութիւն մը՝ Զոքաք էլ Պլաթի պէս բանուկ ու ահաւոր կերպով խճողուած թաղերու մէջ, ուր այնքան շատ են բարձրացած առեւտրական նկատառումներով եւ ոչ անպայման ակնահաճոյ կառոյցներ, շէնքեր ու հաստատութիւններ, որ ժամանակի պահանջներուն տակ թաղած են վաղեմի գեղեցկութիւններ եւ քաղաքակրթութեանց բացառիկ նմուշներ, որոնց ի տես տխրութեամբ ու ափսոսանքով կը համակուին այցելուներուս հոգիները:

Միխթարական խօսք մը... Թերեւս այո՛ եւ ինչո՞ւ ոչ, երբ կարճատեւ պտոյտէն վերադարձին կ'անցնինք Հայց-Առաքելական Ս. Նշան Մայր եկեղեցւոյ հանդիպակաց ճամբէն ու մեր փոխադրակառքի առաջնորդ երիտասարդուհին անգլերէնով իր բացատրութեան մէջ կը նշէ հայկական եկեղեցւոյ կառուցային իւրայատկութիւններն ու ներկայացուցած կարեւորութիւնը՝ չրջանի ճարտարապետական ընդհանուր խճանկարին մէջ: Իսկ Համազգային Նշան Փալանճեան Ճեմարանի չրջափակը իբրեւ այս պտոյտի փոխադրակառքերուն մեկնակէտն ու վերջակէտը նախատեսած կազմակերպիչ յանձնախումբի անդամները երեւի երբեք ալ պիտի չիմանան, թէ ինչպիսի՛ ուրախութիւն պարգեւեցին մեզի՝ պտոյտին մասնակից սակաւաթիւ այն հայերուս, որոնք Զոքաք էլ Պլաթի պատմաճարտարապետական կարեւորութիւն ունեցող այս կոթողային շինութիւններու կարգին՝ կանգուն ու ժամանակակից թարմութեամբ շնչող ազգային մեր զոյգ կառոյցներուն գովքը լսելու խնդրութիւնը ապրեցան հպարտօրէն ու իրաւամբ...

Եւրոպական Միութեան Մշակոյթի պահպանման յատուկ յանձնախումբերէն մէկուն մտայղացումը եղող, իսկ գործադրութիւնը վստահուած՝ Լիբանանի Մշակոյթի նախարարութեան ու գանազան համալսարաններու, մշակութային հաստատութիւններու եւ յարգելի կարգ մը անձնաւորութիւններու միացեալ ճիգին, «Պէյրութ՝ Գիրքի համաշխարհային մայրաքաղաք» նախաձեռնութեան ընդհանուր ծիրին պատկանող այս ձեռնարկը պիտի շարունակուի հանգրուաններով եւ ընդգրկէ Լիբանանի ազգագրական բոլոր խաւերը անխտիր, որպէսզի Զոքաք էլ Պլաթի քաղաքակրթական արժէքէն հնարաւոր ըլլայ փրկել առաւելագոյն կարելին...

Ս. Գ.

ՅՈՎՍԷՓ ԳԱՍՊ ԱՐԵԱՆ՝ ԲՆԱՏՈՒՐ ՇՆՈՐՀ ԵՒ ՆԿԱՐԵԼՈՒ ԿԻՐՔ



Ակադեմիաներ կամ Գեղար-
ւեստի հռչակաւոր վարժարան
մը չէ յաճախած այս միջին տա-
րիքի արհեստաւոր հայ մարդը,
որ ուզած է հաւատարիմ մնալ
իր գծելու բնատուր շնորհին:
Վկայականներու բացակայու-
թիւնը փոխարինած է յամառ եւ
ժանեակ հիւսողի աշխատան-
քով: Կը դիտէք իր կտաւները եւ
եթէ փորձուիք զինք դասակար-

գումի ենթարկել, կը ձախողիք:
Անոնք բան մը ըսող իրապաշտ
պատկերներ են, բան՝ զոր Յով-
սէփ կը բանաձեւէ գիծերով եւ
գոյներով, իր աշխատանքէն
ետք: Վարժուած ենք իրենց ար-
տաքինէն ճանչնալու հաւանա-
կան արուեստագէտները, մազ,
մօրուք, հագուստ-կապուստ:
Այդպէս չէ Յովսէփ, բնական
քաղաքացի մը: Բայց այս պատ-

կերին ետին կայ ինքզինք
փնտռող, ցաւ ու տառապանք
ժառանգած, շրջապատը դիտող,
իր ձեւով յանձնառու անձ մը,
որ կ'ուզէ դրսեւորել իր մտեր-
մութեան մէջ թափառող եւ յի-
շողութիւններու առթած անձ-
կութեան ապրումները:

Կը զրուցենք: Երբեմն կը պա-
տասխանէ հարցումներու, եր-
բեմն ալ անոնց կողքէն կ'անցնի



տեսակ մը ամօթխածութեամբ:
Դժուար «կը բացուի»:

«Շատ կանուխ սկսած եմ գծել, մանկութենէս, չորս-հինգ տարեկանէս: Արուեստից վարժարան չեմ յաճախած, բայց ունեցած եմ նկարչութեան ուսուցիչ մը, որ Մոսկուա ուսանած էր, Գրիգոր Ճըղլեանը: Տասնըչորս տարեկան էի եւ անոր կ'աշակերտէի: Լիբանանի քաղաքացիական երկարատեւ պատերազմի տարիներն էին եւ հարկ էր տուկալ, ապրիլ, պաշտպանուիլ: Դիմեցի նաեւ գեղանկարիչ Յարութիւն Թորոսեանին, որպէսզի առաջնորդէ քայլերս, եւ ան ինծի ըսաւ թէ ես արդէն գիտէի գծել, բայց թելադրեց որ հետեւիմ արուեստի պատմութեան դասընթացներու, հետեւեցայ նաեւ հայագիտական դասընթացներու՝ որպէս ազատ ունկնդիր, շարունակելով ոսկերիչի արհեստս»:

Ոսկերչութիւնը նուրբ արհեստ է, ճարտարութիւն կը պահանջէ, կը գտնուի արուեստի ճամբուն վրայ տեղ մը: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ Յովսէփի ոսկերչութեան եւ նկարչութեան միջեւ կապ մը կա՞ր:

«Տ եւ ա ր ա ր փնտռած եմ նորը, ինքնատիպը: Ոսկերչական առարկաներու նորութիւններ կը ստեղծէի, որոնք յետոյ կը դառնային զարդեր: Զանազան հանգստի ֆարեր կը տալէմ, ձեռք կու տամ անոնց, տեսակ մը ստեղծագործական աշխատանք, որ նրբութիւն եւ նաշակ կը պահանջէ, կրկնութիւն չէ»:

Գծելու բնատուր դիւրութեանն ինչպէ՞ս կ'ըլլայ արուեստի մակարդակ փոխանցումը:

«Երբ կը գծեմ, միջավայրային ապրումներս, մտահոգութիւններս, անոնց ցնչման տակ զգացած յուզումներս, անոնց հետեւած պոթքներս կը դառնան ներշնչում, այդ բոլորը կ'առաջնորդեն վրձինս, կ'ուզեմ գանձի դրոշմել, նախ եւ կ'ուզեմ հասկնալ, ապա իմացնել նաեւ ժամանակակիցներուս, ուրիշներու»:

Արուեստը չըլլալով կրկնութիւն, ըլլալով տարբերութեան եւ նորի որոնում, մնայուն յեղափոխութիւն է, ինչ որ կը նշանակէ որ նկարիչին եւ նկարչութեան մէջ յեղափոխութիւն կայ, ինչ որ մեքենական լուսանկարը կը գերանցէ ստեղծագործական փորձութեամբ: Այս մասին խօսելով, ամենայն պարզութեամբ Յովսէփ կ'ըսէ.

«Անպայման: Յուզումներս, պոթքներս, որոնք կու գան

շրջապատէս, զիս կը մղեն, գոյներով, գիծերով եւ խորհրդանշաններով փոխանցել, այսինքն նկարներս կը կրեն պատգամներ, որոնք կը ձգտին լաւին, արդարին, իրաւունքին, անոնք նաեւ տեսակ մը բողոք են, ինչպէս այդ կը տեսնէ արուեստասէրը աթոռի պատկերիս մէջ, աթոռներ՝ որոնք ծնունդ կու տան ընկերային հակասութիւններու, անհասկացողութիւններու, կագ ու կոիւի: Պատմական որոշ ժամանակաշրջանի մը մէջ ապրեցայ, կագմաւորուեցայ, երբ կար գէնք, կար յեղափոխութիւն, պայքար, նաեւ, ինչո՞ւ չըսել, հայոց պարագային կար պահանջատիրութիւն՝ որ երիտասարդութիւնը դրոշմեց: Այս յեղափոխականութիւնը ընդհանրական նկարագիր ունէր, նեղ իմաստով հատուածական կամ քաղաքական չէր, կու գար միջավայրէն, լոյսէն, առօրեայէն: Ինչպէ՞ս կարելի է անտարբեր մնալ երբ հասակակիցներ եւ ընկերներ կը մեռնին, անհատականէ անդին գաղափարներու ծառայելով: Այդ օրերուն վրձինը փոխարինուած էր գէնով, եւ այս փոխաբերական պատկեր չէ»:

Յովսէփի նկարներուն մէջ կան անհուն սիրով ներկայաց-





լած իրեր, ինչպէս՝ ասեղնագործ ժանեակներ, կամ լաթի կտորներէ հիւսուած կարպետներ՝ որոնք գաղթականներու տուններուն մէջ յաճախադէպ ներկայութիւն էին: Անոնց մասին ինքնատիպ բացատրութիւններ ունի, որոնք հասկնալի կը դարձնեն իր զգացած պոռթկումը եւ յեղափոխականութիւնը:

«Պատմութիւն մը կը կրեմ, որմէ ծնունդ առած է ընկերութիւն մը, միջավայր մը: Ասեղնագործ ժանեակները մեր մայրերու մատներուն շնորհիւ են, բայց նաեւ անոնց գիշերներու աշխատանք, որպէսզի անոնց վաճառքէն գոյացած գումարներով հոգացուին մեր դպրոցական ծախսերը, գիրք ու տետրակ: Ժամանակները փոխուած են, ասեղի ծայրով կեանք շահելու հարկադ-

րանքը չկայ, բայց միաժամանակ երկրէն բերուած նուրբ այդ արուեստը այլեւս կը կորսուի: Այդ լաթի կտորներով հիւսուած կարպետները օրուան գորգերն էին, այսօր՝ յիշողութիւն, պատմութիւն՝ որ կը խօսի»:

Միջավայրի ներշնչած պատկերներէն եւ յուզումներէն անդին, իրականութենէն եւ պատմութեան դրոշմէն անդին, կան մեծ զգացումներ, որոնք միշտ կը խռովեն մարդը. նախանձ, սէր, մահ, առաջի եւ վերջի մասին հարցումներ, մեղք, այլ

ցանկութիւններ, որոնք ստեղծագործութիւններու թելադրական ուժն են: Յովսէփի պատկերներու ետին կա՞ն մարդկութիւնը յատկանշող այս բնազանցական լարերը:


«Անոնք կան, իմ տեսնելու եւ արտայայտելու կերպովս, զանոնք կ'առնեմ միջավայրէս որ միշտ ներկայ է, կը ներկայացնեմ, չեմ անջատեր: Ինչ կը վերաբերի մեծ հարցումներու, խոստովանիմ որ մեր ապրած օրերը, մեզի պարտադրուած կենցաղը թոյլ չէին տար առօրեայէն անդին անցնիլ, երեւակայելու ժամանակը զլացուած էր մեզի: Իրականութիւնը իրապաշտութիւն կը թելադրէր: Երբ կտաւին առջեւ կ'ըլլամ եւ պիտի նկարեմ, կը փնտռեմ, ի՞նչ պիտի նկարեմ, այսինքն՝ ինքզինքն կը հարցա՛նքնեմ, նիւթս փոխ չեմ առներ, հետեւաբար ապսպրանք չեմ ըն-

դունիր, երկրորդ կամ երրորդ անգ մը ինծի հետ ներկայ չէ կտաւին առջեւ, չ'առաջնորդեր վրձինս: Կը նկարեմ մեր ժամանակաշրջանի, անմիջական միջավայրի եւ ընկերութեան տագնապները, անոնց մէջ բռնուած մարդը, տուն ու յիշողութիւն, դառնութիւն, առանձնութիւն, ամայութիւն: Իմ գործերուս մէջ կան ազգային պատգամներ, ես մեծցած եմ միջավայրի մը մէջ, որ ինծի տուած է արժէքներ եւ յիշողութեան ժառանգութիւն»:

Յովսէփի ընթերցումները հարկատու են միջավայրին, ազգայինին: Երբ կը խօսուի այն մասին որ իւրաքանչիւր ստեղծագործող կրկնող չըլլալով հանդերձ չլթալի օղակ մըն է, հետեւաբար համամարդկայինի կրող, Յովսէփ պարզութեամբ կը բացատրէ:

«Ես կեանքը եւ հարցերը միջավայրէս կը դիտեմ, ընտանիքէս, մօտիկներէս, կը խօսիմ իրարու հետ: Այդ հարցերը բազմատեսակ են, խնդրած, հակասութիւններ կան, բացասական երեւոյթներ, որոնք կը ճնշեն: Կը տեսնեմ, կ'արտայայտեմ: Դեռ չսկսեմք այլ մոլորակներ պտրտիլ, այդ ժամանակը չունեցանք»:

Մեծ արուեստագէտները մեկնելով հանդերձ իրենց միջավայրէն, ժամանակէն, դէպքերէն, կը նուաճեն նաեւ համամարդկայինը, ինչպէս, օրինակ Կոյալի ազատագրական պայքար մղած հրացանագրկերը, որոնք չեն գտնուիր միայն տուեալ պահու մը, տուեալ երկրի մը մէջ, ամենուրեք են: Յովսէփ ինչպէ՞ս կը մօտենայ այս խնդրին:



«Հայերս միշտ ունեցած ենք մասնակիւն անդին ընդհանրականը տեսնելու շնորհը, օրինակ, Սասունցի Դաւիթը որ կը յատկանշէ ժողովուրդներու ազատագրական պայքարը, Յովհաննէս Թումանեանի Կաթիլ մը Մեղրը, որ վկայութիւնն է մարդոց անհեթեթութեան, ոչինչի համար, կամ ոչինչ պատրուակով մղուած պատերազմներու, կոիւններու, հող յափշտակելու, տակաւ մը նաւթի տիրանալու: Ես կը ձգտեմ արտայայտել, օրինակ, կորսուած տան կամ տունդարձի զգացումը, հայուն, պաղեստինցիին: Կ'արտայայտեմ կարկտան քաղաքականութեան մասին, որ կը մոռնայ մարդը: Այս բոլորը կրկին, ինծի կը ներշնչէ միջավայրս»:

Ջարմանալի կերպով Յովսէփի գործերէն կը բացակայի Կինը, ԿԻՆԵՐ չկան, գեղեցիկ, ցանկալարոյց:

դիմ...»:

Յովսէփ բնատուր չնորհ ունի նկարելու: Իր գործերը տուրք չեն տար կապկուած արդիականութեան, ուր յաճախ չենք գտներ գոյնի եւ գիծի տիրապետելու կարողութիւնը գոր

«Այսպէս եմ տակաւին: Կիներու կարգը չեկաւ: Բայց կրնայ գալ»:

Թէ իր նկարչութեամբ ի՞նչ կ'ուզէ տալ, ձգել, Յովսէփ իր սովորական պարզութեամբ կ'ըսէ.

«Արդար ընկերութիւն, արդար խօսք, չթափեցնելով դժգոհութիւններս, կարօտի զգացումներս, կը ձգտեմ դէպի ուժը, լաւը, գեղեցիկը, այս բոլորին թելադրութիւնները կ'ուզեմ ձգել գոյնով ու գիծով: Եթէ յաջո-

ինք ունի որպէս բնատուր չնորհ: Երբ կը խօսինք Լիբանանի ստեղծագործողներու նաեւ երկրէն դուրս ճառագայթելու հնարաւորութեան մասին, ան կ'ըսէ՝

«Ստեղագործական եւ համաշխարհային նառագայթումի համար երկիրը նեղ է եւ դէպի դուրս բացուելու հնարաւորութիւնները խիստ սահմանափակ, նոյնիսկ լաւագոյններու պարագային: Այս հարցին թերեւս լուծում կը բերեն երկրի վերականգնումը, տնտեսական զարգացումը եւ խաղաղութիւնը»:

Այս հասուն տարիքի գեղանկարիչը առանց արդիականութեան աղմուկի, իր ժառանգած անցեալին եւ միջավայրին մնալուն բարդութիւններուն ունկընդիր, առանց յաւակնութեան, իր ճամբան կը շարունակէ, իր ճամբան կը փնտռէ:


Բ.
4 Սեպտեմբեր 2009



«ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ԵՐԿԵՐԸ»

ՈՒԹ ՀԱՏՈՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ « ՎԱՅԷ ՍԷԹԵԱՆ» ՏՊԱՐԱՆ
Պէյրուք, 2008



**«ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆԻ ՀԵՏ»**

(Ա. ՀԱՏՈՐ)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ « ՎԱՅԷ ՍԷԹԵԱՆ» ՏՊԱՐԱՆ
Պէյրուք, 2009

«ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԿԱՆԶԸ ԵՒ ՄԵՐ ԱԿԱՆՋԸ»

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ « ՎԱՅԷ ՍԷԹԵԱՆ» ՏՊԱՐԱՆ
Պէյրուք, 2009

